


824

9(45)

9-35

1885



ՀԱՅԱԿԵՐՊՆ Կ ՈՒՍԱԿԵՐԾՈՒԹԻՄՆ ՀՅԱԹԱՔԱԿԵՐԾՈՒԹԻՄՆ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴՐԱՆ.

ԳՐԱԴՐԱՆ



ԳԱՐԻԲԱԼԴԻ.

ԻՐ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Համաձայն վասերական վլայութիւնների եւ անտիպ
յիշողութիւնների.



ԹԱՐԳԱ. ԿՏԱԼԵՐԵԿԵՑ.

Հ. Խ.

ԳՐԱԸ 1 ԳՐ. ԵՎ 50 ՍԱՆՏ.

2004

ԼՕՆԴՈՆ.

ՏՊԱՐԱՆ ՀՀԱՅԱԿԵՐՊՆ.

1895

2012

ՀԱՅԱԿԵՄՆ ԿՈՒՍԱԿԵցՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՔԱԼՈՒԹԻՒՆ.


ԹԱՂԱՎԱՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ.

9(45)

9-35

ԳՐԱԴԱՐԱՆ

(5)



ՅԱՎԱՐԱՐ ԳԱՎԱՐԱԿԱՆԻ ՓՈԽՎԱՐ.

ԳԱՐԻԲԱԼԴԻ.

ԻՐ ԿԵԱՆՁԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Համաձայն վակերական միացութիւնների և անսխալ
յիշողութիւնների.

ԹԱՐԳԱՐ. ԻՏԱՎԵՐԵՆԻՑ.

Հ. Խ.

ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՕՆԳՈՆ.

ՏՊԱՐԱՆ ՀՀՆՉԱԿԻԱ.

1895

8549

Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն Ի Ց Ե Վ.

Արանից, շատ չե, միայն հազիւ մի քանի առա-
նեակ տարիներ առաջ, այժման քաղաքականապէս
մէ և աղատ Խոալիան գտնվում էր ապստամբական
և յեղափօխական ճգնաժամի գժուարին երկունքի մջ, և
այդ գեղեցիկ, զբախտանման, բայց բաղմաչարչար եր-
կիրը ներկայացնում էր իրանից մի պատկեր, որ աւելի
կամ նուազ նշնութեամբ բնձայում է այս բոպէին
աշխարհիս՝ Հայաստաներ.

Բացի օտար լծեց, որի տակ ծուելու հարկադրու-
ված էին Խոալիայի հիւսիսային նահանգները, այն է՝
Լոմբադուակ էնետիկը, այլ և բաղմաթիւ, աղդ ային
առունը կրելու յաւակնութիւնն ունեցող միջնադարեան
հնացած հաստատութիւններ, յենվելով ամսուածային
երկասյական անհասանելի կամքի և Փիզիքական հա-
տու ոյժին, կապարի ծանրութեամբ ընկած էին ահագին
մեծամասութիւն կազմող ժողովզի վայ, արգիւ-
րով այս վերջինիս կատարելու տնտեսական ու մուագր
առարկաներում ամեն նոր քայլ, ամեն նոր առաջ-
դիմութիւն: Երկրի ամեն-մի կետում անխորաբար թա-

(ԿԴԿ-57)

7447-57 R

գաւորում էր կամայականութիւնը. արդարութիւն, հաւասարութիւն, հասարակական իրաւունք սոսկ բառեր էին, գործածվում էին իբրև ծածկոյթ կրօնական ու աշխատչական պորտարայժների արտօնասէր և ընչափում ու գուն: Ասկայն այդ հաստատութիւնները — պապութիւն, թագաւորութիւն, զբոսնիթիւն և այլն — ընդունմարում էին արդէն, գեռ անցեալ գարու կեսից սկսած, հպատակների մտքերի մէջ աստիճանաբար առաջացող փոփախումը և այս փոփոխման իրանց համար մահառիթ և կորստաբեր հետեւանքը, որ արտայայտվում էր ժողովրդի հետեւեալ ձգտման մէջ. հնացած և երկրի աշխատաւոր դասակարգերին միմիայն վաս բերող կարգերը՝ նոր և բոլորի բարօրութիւնն ապահովող կարգերի վերածել: Նրանցից ոմանք իրանց գցութիւնը պահպանելու համար ուրիշ բան չէին մտածում, բայց թէ ամեն տեսակ բոնաւոր, երբեմն իսկ խարեբայ, միջցներով խեղդել ժողովրդի մէջ արծարծվող նոր ոգին. ուրիշներ, աւելի իմաստուն և շրջահայեաց, հասկանալով, որ անկարելի էր գիմագրել նոր հոսանքին, միևնուն նպատակին հասնելու համար ստիպված զիջումներ էին անում, մոցնելով իրանց երկիրուերում մի քանի բարենորոգումներ, ընդունելով օրէնսդրութեան մէջ ժողովրդային իրաւունքներն ընդարձակող կէտեր: Կապօլիի թագաւորութիւնն՝ տաւաջին ուղղութեան, իսկ Տօսկանայի գրասնիթիւնը, Սավյայի թագաւորութիւնը երկրորդին իբրւ որինակներ կարող են ծառայել:

Սակայն անկասկած է, որ ֆրանսիական 1789-ի Մեծ յեղափոխութիւնն արդէն ուժգնապէս ցնցեց իտալիայում այդ հաստատութիւնները, տալով սրանց մահացու հարուած: Հակակրօնական ու հակամիապետական գաղափարներն անցնելով բարձր Ալպեանները, ճեղքելով ծովեղը, ֆրանսիայից մուտք էին գործում իտալիայի ատակարարէր: Այս երկու կուսակցութիւնները, միա-

ամեն կողմերը և գրգռում իտալական առանց այն էլ տաք գյումները: Այդ նոր գաղափարներն աւելի ընդարձակ ծաւալ գտան մանաւանդ Լոմբարդիայում, որ անուհետեւ գարձաւ վառարան հանրապետականութեան և որ մինչև վերջն անշէջ պահեց յեղափոխութեան կրակն Խոտալիայի ամենահեռաւոր անկիւններում: Ճուտով ամեն աեղ միապետների գէմ սկսան երեան գալ ժողովրդային յուղումներ, ցցցեր, որոնց մէջ ակնյայտնի կերպով արտայայտվում էին սահմանադրական կարգերի և առհասարակ բարենորոգումների պահանջները: Կառավարութիւնների կողմից ցոյց տրված զիմազրութիւննը և հրապարակային յուղումների առիթով գործ դրված խասութիւններն ու անթիւ ձերբակալութիւններըն արագացրին գողտնի ընկերութիւնների գոյութիւննը գլխաւոր կենտրոններում և նրանց շարունակական առաջնորդ ամենի նպատակն էր յեղափոխական պրոպագանդայի և յեղափոխութեան միջնով աղատել հայրենիքը ներքին ու արտաքին թշնամիններից: Այդպիսի յեղափոխական ընկերութիւններից ամենահոգակաւորն է կառք օնառների ընկերութիւնը, որ անմիջական նպատակ ունէր ձեռք բերել իտալիայի համար անկախ ինքնավարութիւն և միութիւն, չոօժնունենալով մայրաքաղաք: Բոլոր այդ գաղտնի միութիւնները, նայելով նրանց քաղաքական գաւանանքին, նրանց ծրագրին, կարելի է երկուսի բաժանել. զուտ շանրապետականներ կամ Մաձձնիեաններ, որոնք կամենում էին միապետական սկզբունքի խափառ ջնջումը և շանրապետութեան հաստատվելը, ինչպէս ֆրանսիայում, և Զափաւորականներ, որոնք աշխատում էին հայրենիքի անջատ մասերի ի մի միացման համար սահմանադրական թագաւորի ներկայութեամբ, որը Սավյայի տունը պիտի ատակարարէր: Այս երկու կուսակցութիւնները, միա-

ժամանակ մղելով միմեանց գէմ ծրագրային մի ներքին կոհւ, կոհւ, որ մինչեւ այսօր էլ շարունակվում է բարեխյում, բոլոր ցժուվ յարձակվում էին իրանց ընդհանուր հակառակորդի գէմ, որ պահպանողական անուան տակ իր մէջ ներփակում էր կղերական ու աղջուական դասակարգերի կուսակցութիւնը և որի յեւնարան էին ինչպէս աւստրիական, նյոնպէս և պապական և այլ և այլ թագաւորական ու իշխանական բանակները, ոչ նուազ և տղէտ կրօնամոլ անբոխը:

“Եպատակ չընենալով հետեւյու սյստեղ խալա-
կան յեղափոխութեան աստիճանաբար կրած Փաղերին,
սկսած անցեալ դարու կէսից մինչև 1848 թուականը,
երբ պայթեցաւ խտալական առաջին ապստամբական
պատերազմը, բաւական եղք համրում յիշատակել
համառօտակի, որ բոլոր վերսիշած ընկերութիւնները,
ինչպէս և ուրիշ բազմաթիւ մանր-մոնր լնկերութիւններ,
առաւել կամ նուազ տարբեր ծրագիրներով, թէ
երկրի ներում, ժողովրդի ամեն խաւերում, և թէ եր-
կրից գուրս, եւրօպական կարևոր կենտրօններում, շա-
րունակ խօսելով ու գրելով, նիւթապէս և բարսյապէս
կազմակերպելով ու ամրացնելով, աջողեցան ժողովը-
դի բոլոր դժոնն գասերում ոյժ ու գիտակցութիւն
ստեղծել, գիւտանադիտական աշխարհում անմիջական ըս-
տիպողականութիւն գոյացնել վերջնականապէս լուծելու
համար խտալական հարցը։ Այդ հարցը լուծվեցաւ Ի-
տարիան ապստամբեցաւ աւստրիական կառավարութեան
դէմ, իր ներքին միապետների դէմ և երկար տարի-
ներ յամառաբար ու հերոսաբար կռւերուց, անթիւ զո-
հեր բանտերին, աքսորանքին, կախաղանին և տանջանք-
ներին տալուց յետոյ ձեռք բերեց իր անկախութիւնն
ու միաթիւնը վերջնականապէս 1870 թ. սեպտեմբերի
20-ին, երբ իտալացիները մտան Հռոմ, վերջ զնելով

Նաեւ պապի աշխարհական իշխանութեան: Այդ միութեանից գուրս են մատցել միայն քրիստի և Տռէնտինաբար գաւառները, որոնք գտնվում են տակաւին աւստրիական կայսրութեան ձեռքում:

Բազգաւոր էր Խոալիան նրանով, որ որբան էլ անտեսականապէս վերջին ծայր աղքատացած, քայրայշված, ամեն տեղ գիւղական համայնքները չափազանց հարկերի, ծայրաշեղ վաշխերի և ամեն տեսակ հարցատաշարութիւնների ծանրութեան տակ ընկճված, բարյապէս ապասերած, ոգով ստրկացած, եւրօպայի առաջ ձակատին ծուլութեան և երկչութեան դրօշմավաննուանարկված — արդիւնք գլխաւորապէս, երկար ժամանակեայ կամայական, բայսաւոր լրէժիմի, որի համար գարիբալդիի հպարտ ոգին դառնութեամբ էր լքցվում ամեն անգամ, — մատաւորապէս թաղված խորին արշգիտութեան և կրօնական-կաթոլիկական թանձրամածնախապաշտումներում, նաև կրիին ընդունակ հանդիսացաւ հանելու իր ծոցից այդ պատմական վճռական բապէին առաջնակարգ մատածովներ, բանաստեղծներ, դիւռանագէտներ, պատերազմական հանձարներ, բարյալիան հերոսներ, որոնք իրանց բնաւորութ ձիբեկն ի մի վայր բերելով, յօժարակամ միեցին հայրենիքի աղատութեան կուիը և ստեղծեցին այժմեան մէ կ և ազատ Խոալիան:

Անկասկած, գարբիբալդին իտալական ազատութեան
մեծ գործին նուիրված անձերի մէջ առաջին տեղն է
բռնում, Մաճախի հետ, որոց վրայ ընկած էր գրեթէ
այդ գործի ամբողջ ծանրութիւնը, և նա անձնուիրաբար
ստանձնեց տանելու, միշտ և միշտ օգնական որոնե-
լով իրան համար նոյն իսկ ժողովուրդը: Ուրանալով
ամեն տեսակ անձնական փառք և հանդիսաւ, նախնի
չոօմէական անուան արժանի տոկունութեամբ, խը-
տամբերութեամբ և կինկինտեան առարինութեամբ նա

մեծ եռանդով ձեռք տուաւ, իբրև մարմացած տրիբուն, ժողովրդային դատը թէ պարզամենտում և թէ հաւաքումների մէջ: Յեղափոխութիւնից յետոյ, երբ աղնւական-կղերական սիմեոն ընջվեցան, հարուստ գասակարգի կարծ ժամանակամիջոցում արած հսկայական քայլերը տնտեսական ասպարեզում և բանեօր ու գիւղացիքասակարգերի հետզետեան վատթանալը նոյն ասպարէզում, որի արգասիքն էր դառնում ընդհանուր թշուառութեան սաստկանալը, օրէցօր պանդխտութեան մեծ ծաւալ ստանալը, — այդ բոլորը նրան խորին ցաւ էին պատճառում: Կա պարզ տեսնում էր, որ կատարված յեղափոխութիւնը միայն հարուստ գասակարգին նպաստաւոր եղաւ, իսկ այն չարէները, որոնց վերացման համար իր ամբողջ կեանքը տվից, այն է՝ անհիծեալ աղքատութիւնը և պանդխտութիւնը, որոնց շատ անդամ յանդղնաբար ենթարկում էր իր անձը:

Պարիբալդին ջերմ համոզված հանրապետական էր, շատ կանուխ մտաւորապէս որդեգրված Վաձձինիի: Կրտսոր վախագն էր վերացած տեսնել հայրենիքից միապէտական սկզբունքը, սակայն որպէս գործնական մորդ հայրենիքի ազատութիւնը կարելին չափ փութացնելու համար ստիպված էր համակերպվել սահմանադրական թագավորի հաստատման, համարելով գոնե այդ քայլն իբրև նախագուռն իր սիրած հանրապետական սկզբունքների իրականացման, որոնց կիրարկութեան մէջ միայն նա տեսնում էր իտալացիների բարօրութիւնը: Եւ այն օրից, երբ Գարիբալդի ամենամեծ հաճոյընվ իր յաղթական սուրբը մի կողմ դրաւ, քանի որ իր հայրենիքում ըսկար այլ ևս օտարը, որի գէմ գործածելու հարկը լինէր, նա, հակառակ չափառութականների տը հաճութեան, որոնք միշտ վասակար էին համարում ներքին քաղաքական գործերի մէջ Գարիբալդիի խառնելիլը իբրև անընդունակ այդ հոդի վրայ գործելու, նա

օրինակելի եւանդով թշուառ դասակարգի անունով կոխ են մղում հարուստ-կապիտալիստ դասակարգի գէմ, կը տան հայրենիքին իրական քաղաքացիական հաւասարութիւն այս օրը, երբ այդ երկու միմեանցից տնտեսական խորին վիհով բաժանված դասակարգերը կը չը ջրվեն և մարդկանց էեանքը կը հաստատվէ հաւասար աշխատանքի և հաւասար վայելքի հիմունքների վրայ:

Հայկական ներկայ տագնապալի իրականութեան բոպէին՝ շատ դիպոզ, ժամանակայարմար ու նպատակայարմար էր յեղափոխութեան միևնոյն երկուքի մէջ գտնվող հայ ժողովրդի ձեռքը յանձնել Յովնէփ Գարիբալդիի կեանքն ու գործունէութիւնը պատմող մի յարմարւոր գրուածք: Հետեւալիս ուրախութեամբ ընդունեցի իմ գաղափարակից ընկերների կողմից ինձ եղած առաջարկութիւնը, այն է ընտրել և թարգմանել նոյն խկ իտալական բնագրից մի գրուածք, որ հաւասարիմ թարգման լինէր մեծ հերոսի յեղափոխական գործունէութեան ու ձգտումներին, և առ հասարակ նրա համոզումներին, զգացումներին ու բնաւ օրութեանը:

Արդ՝ թարգմաննելով ներկայ գրքոյկը, որի հեղինակը, որ իր անուան աեղ գրուածքի ճակատին դրել է սՄի նախկին կամաւոր⁴, մասնակից է եղել Գարիբալդիի մըզած կոխներին որպէս կամաւոր, կարծում՝ եմ որ սընալված չեմ ընարութեանս մէջ, ըստ օրում սա, բացի նրանից որ լրացնում է պահանջվածները, այլ և շատ յարմար է հանդիսանում իր փոքր ձեռվ, վերին աստիճանի կենդանն և ժողովրդական գրուածքով՝ գիւրութեամբ տարածվելու ժողովրդի բոլոր խաւերում:

ԹԱՐԳՄԱՆԻՑ

Գ Ա Ր Ի Բ Ա Լ Դ Ի Բ .

Խոսակցի մայրեաք պէտք է աւանդին նրա կեանքը, որպէս ուսմննը խոսակցի մանուկներին: ՄԱՅՈՒՄԻՆ:

I

ՄԱՅՈՒՄԻՆ ՍԻՐՏ.

1815-ի ամառայ տաք օրերից մէկն էր: Կիցցայի նաւահանգստի առաջ, ծովեղբքում, մի գեւատի կին յուզված գրկում էր մի խարտեաշ երեխայ:

—Յանձնէփ, բացականչում էր նա այնպիսի ձայնով, որով ուղում էր յանդիմասնութիւն արտայայտել, մինչ զեռ գգուանք էր, —զաւակս, դու իմ սիրտս լցնում ես սարսափով ու հպարտութեամբ:

—Ո՞չ, մայրիկս, պատասխանում էր երեխան իր համբոյրով, այդպէս մի խօսիք: Ես վազում էի, ինչպէս գիտես, հօրեղբօրորդոյն հետ, Վառցից դուրս եկող հեղեղատի երկայնութեամբ: Եյնտեղ մի խեղճ ծեր, ջրի

վրայ ծուած լաթերն էր լուանում, յանկարծ տեսայ, որ
ըստ կար, անհետացել էր: Խոր ջրի մեջ էր լնկել: Մէկ
ուստումնվ ջուրը նեավլցայ և լող տալով, մօտեցայ
Նրան, բարձրացրի և գուրս քաշեցի ափը: Եթէ ես ըս-
լինէի՝ լսեղդված կը լինէր: Արդեօք կարող էի ուրիշ
կերպ անել:

— Ես... պատասխանում եր երեխան, ծիծաղելով:
Ենէարեկի՞ բան. լաւ իմացիր, որ ջուրն ինձ ճանաչում է:
Կարծում եմ, որ ես մի կէս ձուկ եմ: Եւ թափ տա-
լով իր գանգուր մազերը որոնք իշնում էին մինչև
յանձնապատասխութեամի՞ գրօշմկած այտերը, երեխան
կոռուր վազեց թրջված լաթերով, որոնցից ջուրը կաթ-
կրթում էր գեռ ես:

Այսպէս էր սկսում Յովեկի գարիբալդին: Այդ
ժամանակ նո ութ տարեկան էր: Այս սկզբնաւորու-
թեան մէջ ամբողջապէս երեան էր գտիս մարդկու-
թեան հերոսը:

մենասոսկալի հանգամանքներում, երբ Ավկիտանոսը մը ուղնչում էր նաև յատակի տակ և բաղնում էր նրա կծուշերին, երբ գնդակները սուլում էին ականջիս տակ ինչպէս ուռագանի քամին, երբ միտրայլէզը անձրեւում էր իմ առաջ, հոծ՝ ինչպէս կարկուտ, — ևս նրան տեսնում էի միշտ ծնրադիր, շըմունքներում ազօթքի մի միմունջ, և ևս արիտանում էի աւելի ես, սերբնագիտ համոզվում էի աւելի սերտ կերպով, որ ննձ չէր կարող հասնել որ և է դժբաղդութիւն, երբ մի սուրբ կին ազօթում էր ինձ համար: Այս կերպ նաև Գարիբալդին, Մաձձինիի նման, պատճում էր այն ազգեցութիւնը, որ ունեցաւ իր մայրն իր կեանքի վրայ. և մայրական ժպիտը միշտ սաւառնում է այդ մեծ մարդկանց կենսագրութիւններում:

Եյս բազգաւոր ծնողի անունն էր Ռոզա Ռուսի-
անտի. Ինքը բնիկ Լօանօցի էր և ամուսնացած կեավա-
եցի Գօմէնիկօ Գարիբալդիի հետ։ Երկու ամռանին երն
պարում էին պյուտեղ,

Այս ալիքն Տիուէնօլի
Համբուրում է Յողն Նիցցալի.

և նրանց տան մէջ, որ ուղիղ նաւահանգստի դիմացն էր, բնակած էր արգել Մասսէնան, որը լինելով հաշագգործի մի օրդի, աջազած էր լինել մեծ բռնապետի, Նապոլէօնի, զօրապետը, և այդ ժամանակ նա յաղթական արշառում էր Գերմանիայում՝ արծիւի զրօշակով։ Այսեղ ծնաւ նաև Յովսէփ (Յիղէպալէ) Գարիքալդին. սակայն այսօր զուր կը լինէր վինտուել միենցն վայրում այն հասարակ և փառաւոր տնակը, որովհետեւ այն տեղը, ուր նա երբեմն բարձրանում էր, այսօր ծովի կոհաներն են տիրապետում, ըստ որում քանզեցին և հաւասար դարձին նրան նաւահանգիստն ընդարձակելու ժամանակ։

Իր հայրը նաւապետ էր. լինելով երբեմ գոհացացին երբեմն նուռազ գոհացուցիչ վիճակի մէջ, նա բարձի թողի չսրաւ եր զաւակի դաստիարակութիւնը, և նրա հայրը գտաւ բարեհամբայր ուսուցիչներ: Ըստ լւաւ, միայն թէ դիւրին բան չէր կառավարել վագրիկ Յովելին: Երբեմն մագլցում էր ծառերի, թուփերի վրայ, երբեմն սահում էր նաւերի սիւներից, երբեմն կուի էր գրգոռում իր ընկերակիցներին և երբեմն վերջապէս պանում էր դէպ այն ծովը, որի անհուն հօրիզոնը նրան հրապուրում էր: Մէկ օր ձանձրացած սովորական գտասերից, ասում է իր գալրոցական ընկերներին:

— Զը յոդնեցաք փակված այստեղ, ներսը, մինչ գեռ դուրսը ծովն է իր անհուն տարածութեամբ: Ով է այն կտրիճը, որ ինձ կը հետեւի: Գանձք բազդ փորձենք:

Վսածն արած եղաւ: Երեք պատանիների հետ փախչում է գալրոցից, ինում նաւահանդիսալը, քակում առաջին պատահած ձկնորսական նաւակի կապերը և թիակների մէկ մղումով գտնում է իրան ալիքների վրայ օրորվելիս, իր ընկերների հետ միսան:

— Գանձք քիչնօվա, աղաղակում է Յովսէփը, իսկ յետոյ... կը տեսնենք: Ճանապարհորդութեան և արկածների ծարաւը նրան տանջում էր: Քիչ ժամանակ ճանապարհորդութիւնը հաճոցք պատճառեց, սակայն փոքրինչ յետոյ սկսաւ վասնգաւոր գտոնալ:

Վաւակը գժուարութեամբ էր առաջ գնում: ալիքները կտրում անցնում էին վրայից, թրջելով չսրահամբակ երեխաներին, և նրանց բազուկները սկսում էին յոդնութիւն զգալ: Հասած էին քօնակօի հանդէպ, երբ տեսան մի փարբիկ և արագաշարժ նաւ, որ իրանց ետք կտեսան մի փարբիկ և արագաշարժ նաւ, որ իրանց ետք էր գալիս: Փորձեցին փախչել, սակայն անօգուտ և կարճ ժամանակից նաւը վրայ հասնելով, մօտեցաւ նաւակին և գերի բոնեց ուժասպառ երիտասարդներին:

Նոյն իւրի գարիբալդիի հայրն էր այն նաւը փախստականների ետեւից ուղարկել, որպէսզի առն վերադառնէ յանց: Ինչպէս էր յայտնված փախուստը: ոՎի քահանայ (գրում է գարիբալդիի) տեսնելով մեր գնալը, մեզ մատնել էր, և գուցէ այս իրողութիւնից է առաջ գալիս այն հակապութիւնը, որ տածում եմ աշխարհիս բողոք քահանաներին: ս

II

ԵՐԵՑՆԱԾՐԴ ՆԱԽԱԲԱՏԻ.

Եւ հայրն ուղում էր որ նո քահանայ գառնար:

— Ոչ, հարիկ, ասաց նրան մէկ օր գարիբալդին այն գրբերից, որո՞ք իւձ միշտ տալիս է ալ Առէնան, միմայն ֆոսկուն և Այֆիէրին եմ կորդում, և սրանք ես անդիր գիտեմ, միւսները չեմ կարողանաւմ մարտել: Վոխանակ սև սպեմը հագնելու, ես կը ւախչէ տրէի... .

— Կէ լու, փաստաբան եղիք, մերազրում էր նրան հայրը: Լաւ գործ է շատ վաստակելու համար: Ոչ գլուխդ թափ ես տալիս: Զես սիրում օրէնքը: Այս ժամանակ բժշկութիւն սովորէ, ընկերու կը բժշկես...

— Քոյոն էլ գեղեցիկ են, պատասխանում էր Յովսէփի, սակայն իմ կոչումը ծովի վրայ ընթանալին է: Նմէ գիտենալիք թէ որպան նախանձում եմ քեզ, երբ քո գեղեցիկ նաևով հեռանում ես և աչքերից ծածկը փռում: Թռում է թէ գու ընկղմնում ես ծովի խորքերում: Գիշերը երազում եմ հեռաւոր երկիրները, օտարու նոր գեմբերը, տարրեր-տարրեր երկիրները... Ոչ, եմէ թոյլ տրվէր ինձ աղատ շացելու ծովիրի վրայ:

Պատանեկի յամառութիւնը յաղթող հանդիսացաւ հարը ծրագիրների վրայ, և մէկ օր մայրը յալով պատ-

բաստեց կտպոցը: Բայց նա և ոչ իսկ նկատում էր այդ կրթնած պատգամքին՝ ուրախութեամբ դիտում էր այն նաւը, որի վրայ պիտի նաւարիէր: ոԼուսաւորված արեգակի ճամանչափայլ շղերով (գրում էր նա), գուրեգար, ով գեղեցիկ կօստանցա, առաջին ինձ երեցար, ով գեղեցիկ կօստանցա, առաջին նաւը, որի վրայ ես ճեղքեցի անցայ Ավետարը: Քո նաւաստիները ... արժանաւոր լիբուրացիների իսկական տիպեր — շնորհալի կերպով կրթնում էին թիակների վրայ: Կրտսեց երգերն ինձ ձգում էին խանդաղատանքի և արեցութեան մէջ...“

Դեպ Օդէսսա արած իր առաջին ճանահարչորդութիւնից վերադարձած՝ մէկ օր հայրը առաւ նրան մէկուսի, և — այսուհետեւ ինձ հետ պիտի ճանապարհորդես, առաց այլայլված ձայնով: Քո մայրն ամենեին հանգիստ չէր տալիս ինձ իր ստրափներով... Ես.... այս, ես իսկ ունեցայ այնպիսի երկիրդ և արհաւերք, երբ դու հեռու էիր, որ եթէ անպատճառ ուղարմ ես նաւաստիի արհեստն անել... լաւ ուրեմն, միասին կանեգ:

Պատանին ուրախութիւնից փայլում էր:

— Եւ ուր ե՞ք գնում, հարցրեց:

— Առօմ, պատասխանեց նաւապետ Գօմենիկոն:

— Ո՛չ, հայրիկս, որքան բարի ես, ինչպէս բաղդասոր ես անույլ ինձ, բացականչեց պատանեակը, ընկերով նրա գիրկը:

Առօմը Յովսէփի երեակայութեան առաջ պարզը գում էր տակաւին որպէս աշխարհի թագուհի: Իտալական պատմութիւնից նա իմանում էր միայն հաօմեական հասարակաբետութեան, և կայսրութեան պատմութիւնը, և նախնի հերոսութիւնների պատմութիւնը վառինը, և նախնի սիրտը եօթե բլուրները տեսնելու, մէկ ուում էր նրա սիրտը եօթե բլուրները տեսնելու, մէկ օր Անգուլոսի և Անկիննատասոսի կուրծքը լցնող օդը շնչելու ցանկութեամբ: Առլր քաղաքն էս, նրա համար

իդէալն էր, Խոայիան էր, որի առունը միայն հազիւմինում էր շոթութեներով այդ տարիներում:

Այդ օրից սկսած՝ Նիցցայի առաջը հազիւ երբեմն տեսնում է նրան վախսաբար այն կարճ գաղաքաների միջոցին, որոնք առնվազում են նախ քան, նորից ճանապարհ ընկնելը: Շատ անգամներ հարուածեցին նրան վորմութեները, պարաւորվեցաւ ծովահենների գեմ կուել գեպի Երկելը կատարած երեք ճանապարհորդութիւնների միջոցին: Սակայն ամեն առաջ, որ վերադառնում էր Նիցցա, մըն ասում էր զուարթաբար:

— Պառհ եմ այն վասնգները կրած լինելուս համու, որովհետեւ հասկացել եմ, որ կարող եմ ինձ հարցնել՝ ինչ բան է երիւզը:

Մի քանի օրից յետոյ մի բարեկայ է հանդիպում դրան և կանգնեցնելով:

— Չես իմանում նորութիւնը, ասում է նրան: Խեղձ կեստինօն իւքնասպան եղաւ այս առաւօտ: Յիմարաբար սիրահարված էր մէկ օրիորդի վրայ, որ ամաւսնալու խօսք էր տվել նրան... և որ գտւաճանեց:

— Ի՞նքնասպան ինել մի կնոջ համար, աղաղակեց գարիբալդին զայրացած: Բայց միթէ ուրիշ աւելի լոււ բանի չէր կարող ծառայեցնել իր կեալքը: Այնքան մեծ է գոյութեան նպատակը, և նա ըրջագետին մէջ է սահմանափակում նրան: Ես չեմ կարող հասկանալ յրա յուսահատութիւնը երբ մի կին ի ձ գուր գայ, ես նրան կասեմ: — Աւզում ես ինձ սիրել: Այս շատ լոււ: Ի՞ձ չես ուզում: Ոչ լու ուրեմն, երթաս բարով: Աշխարհում այնքան կիներ կան:“

Այս նախադասութիւնն ինձ հաղորդվեցաւ ականջարուր վկայից: Ասկայն այդ պատմութիւնը երեք չարգելեց գարիբալդին, որ մի պատուաւոր ասպետ լիներ գեպի գեղեցիկ սէուը:

Յանիարծ մեր նաւաստին վորխում է. Նրան աեւա-
նում ենք որպէս ուսուցիչ: Ի՞նչպէս արդեօք պատա-
հեցաւ ոյս մետամօրֆօլահ:

Պէտի Կ. Փօլիս արած մի ճանապարհորդովեան
մէջ հիւանդացաւ: Լա Կօրտ է զէ նաւը որով նա
գացել էր այտեղ, մեկնեցաւ և նրան թողեց այս մեծ
քաղաքում մենակ ու հիւանդ: Գարիբալդիի նման մար-
զիկ գրագանում փող չեն ունենալ, սակայն և այնպէս՝
աւել է հարկաւոր: Եւ աչա նա, առաջ սարսափելու
ախուր բարեխ, ս սում է գործ փետուի, և առաջար-
կում է իրան որպէս ուսուցիչ իտալական և ֆրանսիական
լեզուների, որպէս և գեղագրութեան. և այրի տիկին Տի-
մնիշն ընդունում է նրան իր տան մէջ որպէս դաս-
տիարակ իր փօքք երեխաների: Աակայն աղատ ժամե-
րում նա գնում էր ծովի ափը, հառաջանքով դիտում
էր նրան, և աչա մի գեղեցիկ օր հրաժեշտի ողջոյն
տալով տիկին Տիմնիշի, մտ ում է Մագոննա գել-
լէ գոտի իւ առու նաւը, որ նրան տանում է իւ-
տալիս: Եւ այդ նաևի վրայ, առաջին առգամ լինելով,
Գարիբալդին վարեց նաւապետի պաշտօն:

III

ՀԵՒԱՏԵԱԼԻ ԳՐԱԴԱՒՅՑ:

Տագանրօդ, քաղաք ուսուական, որ Քօնի, Գանձուրի,
Վօլգայի վաճառական ութեան գլխաւոր ուսքն է, զրված
է Ազօլեան ծովի մէջ երկարող մի հրուադանի վրայ:
Նաւահանգստի վրայ մի հին պանդոկ վաղ ժամանակ-
ներից ծանօթ է իտալացի նաւաստիներին. և այտեղ,
1833-ի գարնան, գտնում ենք մեր բաղմաթիւ ազգա-
կիցներից, որոնք շրջան են բոլորած թուիս, փայլակա-

ցայտ աչքերով և կօրովալիք խօսքերով մի երիտասար-
դի շուրջը: Սենեակը, ուր գանվում էին նրանք, մեծ
էր, ընդարձակ ու ծխապատ. պանդոկապետը մրագում
էր նսուրաններից մէկի վրայ, սուրբ գէորգի պատկե-
րի տակ: Ծտեմարանի վերել կախված մի լամպար
հաղիւ հաղ ցրվում էր խաւարը, և նրանք յուղված
խօսում էին, չէին կարույնում նշմարել մէկ անձի, որ
նստած էր աւելի մութ անկիւնում:

— Եօթն թագաւորներ, աղաղակում էր այն երի-
տասարդը, նստած են մեր զին, նման եօթն մահացու
մէջքերի: Նրանցից մէկն, Մօգէնայի գուրս Գրանէսկօ-
յի վրայ վատահութիւն ունեցանք. Զիոօ Մէնօտտիի¹⁾
հետ ոտքի կանգնեցանք. Շատում, Բօլոնեա և Բումոնեայի
ուրիշ քաղաքներ գուրս էին վնասել բոնաւորներին,
և արդէն ժամանում էր մեզ աստուածային աղատութիւ-
նը, երբ աչա գուրսը մեր գէմ դարձաւ. վրայ են հաս-
նում օտարականները և աչա մէք վտանգի մէջ. Խոր-
տակում և կախում... նոյն ինքն Մէնօտտի խեղամահ
է լինում բանտում Գրանչեսկյից, իր վաղեմի մի մօտ-
բարեկամից: Աակայն գերեզմաններից գուրս են գա-
լիս առաքեալները: Մի ճարդ յղացած է մի լայն միաբ-
ն իտալիան, սարսկների, կամարդիների, գաւաճան-
ների իտալիան վերջացած է, սկսում է երիտասարդ գ-

1) Զիոօ Մէնօտտի պատկանում է 1830 ի իտալական շարժ-
ման պարագուիններին: Բնիկ Մօգէնայի էր, յարկեաց գիսարկնե-
նի նարաւան գամասկան, ով իւս կեղ բարեկանութեամբ կապած
էր Մօգէնայի պուրաք Փամարխուս: Շնորհնդ այդ յարաբերութեան
վերջին աջողնակ իմանալ Մէնօտտիի և որս ընկերակիցների ա-
պատարական խորհրդակները, և մի երեսոյ երբ զաւակիրները
Մէնօտտիի անձ մէջ հաւաքած մուտքում էին պատարաբութան
պարագաներին մասն, դուրս յանկարծակի պաշտել ար-
վից նրա տունը, և զաւակիրների կողմից տարի ունեցած յու-
սանակ գիմարտիթինից յնույ ձերբականց ամենին: Փամար-
խուս կախական բարձրացրեց Մէնօտտին նախապէս յասուկ մի
Յանձնակիրից ծնորով նրան մասն պատարակուն տալուց յնույ,

Թ.¹

Իտալիան: Այս մարդը վերստին կապում է դաւազրութիւննրի կարգած թերերը. իր խօսքը բոց է երիտասարդների սրտերի համար, իր ձայնը թափանցում է մինչև տիրանների պատնէշների այն կողմը և կանչում է եղայրներին դէպի ապատամբութիւն:


— Եւ ով է դա, խնդրում էին մի քանի նաւասահներ:

— Ո՞վ է, Խնդրում էր նաև անձանօթը, որի մասին խօսեցանք, դուրս գալով ստուերից:

— Իր անունը, պատասխանում էր երիտասարդը, լոյսի մեջ պիտի ողողվի. այսօր նա առանձին հոգին է խտալիայի; վաղը պիտի լինի ճաճանչավառ ասողը, որ մեզ պէտք է առաջնորդէ դէպի ապատամբութիւն. Իր անունն է Յովսէփ Վաճճինի: Կա բանաստեղծ է և մտածող. հայրենիքի ցաւերը նրա աչքերից արցունք են հոսեցնում, բարբարոսի գաւազանի տակ հեծողի վատութիւնը նրա սրտմտութիւնն է գրգռում, տկարի արցունքները նրան շարժում են դէպի սէրը և զոհաբերութիւնը, և մոռախիլապատ Ալյանսների գագաթից մինչև Ետևա՝ ընթանալ է տալիս մի վսեմ սարսուռ: Հայրենիքը ըստի մնայ այլ ևս պապերի և թագաւորների ստրուկը. ժամանակները հասունացել են, և մեր Ռուսականի բերանով՝ ազատութիւնը ձայնում է խտալիային.

Սաղաւարտ դիր, զիր միտենիր,
Ռ'վ իմաւորց կինդ աշխարհի,
Զարթիր, զարթիր, ներիր ննջնա,
Բո նոր օրւաց արշապյան եմ:

— Օրհնված լիւես, ով եղայր. ուժգին բացականչեց անձանօթը, վաղելով դէպի ատենախօսը, որպէսզի գրիէ նրան: Կա ստուերի մեջ էի ապրում և դու լցու տվիր ինձ. այժմ անձում եմ իմ փարոսը՝ խտալիան



ՅՈՎՍԷՓ ՄԱՅԱԿԱՆԻ

է այն, իմ հայրենիքն է. օրչնված լինես . . .

— Խակ գու ով ես, հարցրեց նրանից տաենախօսը զարմացած:

— «Քեզ նման մէկ խտալացի եմ, պատասխանեց միւսը. ինչպէս քեզ, նոյնպէս և ինձ զայրացնում է բռնութիւնը և աղատութեան սէլն ինձ բարերօսմ է . . . իմ անունն է Յովէփ Գարիբալդի¹⁾:

«Եսյն երեկոյեան նու անգամ զրվեցաւ երիտասարդ Իտալիայի գաղանի լոկերութեան, որի եռանգուն պարագլուխներից մին էր այն երիտասարդը. և, ինչպէս աւելի յետոց գրում է Գարիբալդին իր անտիպ ռտանաւորներում, ոիներկայութեան ճորտ կօդակներին հազարդ եղաւ ու բարձր խորհութեան մի հաւատ տաշ ետք ձեռքով եղակացնելով, որ

երիտասարդ ասակում. . .

«Ճանեղ, Պօնտոսի ասերի վրայ երդվում էր Հայրենիքի ամայր մեռնել:

Տարօրինակ բան. Գարիբալդին Առւսաստանում նշմարեց առաջին անգամ իր հայրենասիրական ապագան և այսօրւան օրս այդ կայսրութեան մի քանի գաւառներում գիւղացիները խօսում են նրա մասին, անուանելով նրան Գարիբալդօֆ, այն հերոսը, որ մի այն կարող կը լիներ աղատել նրանց բռնութիւնից:

Առաջադիմութիւնները շատ արագ կատարվեցան: Հայրենիքի կրօնի տեղը բռնեց մարզկութեան կրօնը: Միենոյն տարին էր, որ Սէն-սիմոնիստները փախչում էին Պարիզից, որոնք և գնացին Ա. Պոլիս:

«Ետք, որ նրանց աեղափառում էր, գտնվում էր

1) Այս տեսարանը մեզ պատճեց Տ. Բ. Կունչօ և Ալբանացիը, Գարիբալդիի բարեկամը:

Գարիբալդիի հրամանատարութեան ներքյ. Դրա մէջ կային, ի միջի այլոց, գէրգինանդ լրսուպս, որ այդ ժամանակ Սուեզի պարանոցի պեղման գաղափարն էր յը- զանում և համարված էր որպէս երազող, և ֆէլիչեանօ դաւիթ, որ մտածում էր Անտառ պատի մեղեղին երի ժամին: Բառովոտ, որ այն փախստականների գլուխն էր, խօսում էր Գարիբալդիի մասին Սէն-սիմենիզի ամենա- լայն նպատակների վրայ, որ ձգտում էր գէպի տիեզե- րական բարեկեցութիւնը: Եւ երեսուն տարի յետոյ զօ- րապետը գրում էր:

— Բառովոտը ճանաչելուց առաջ սիրում էի Հայ- քենքս. Նրան ճանաչելուց յետոյ՝ սիրում եմ մարդ- կանց.

Ակայն մարդիկ ճիշդ այն ժամանակ պատրաստում էին Գարիբալդիի համար մահւան դատավճիռ:

IV

ՄԱՀԻԱՆ ԴԱՅԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Երկու մարդ, գաղտնի սերտ խօսակցութեան բըո- ւրված տաք վիճում էին իրար հետ օքնօվայի մի փոքրիկ սենեակի մէջ: Գրանք էին Մահանի և Գարի- բալդի:

— Ես, եզրակացրեց այս վերջինը, կը թողնեմ իմ նաւը, և իմ աղատութիւնը զո՞չ կը բերեմ ուրիշներին աւանդելու համար այն. կը մտնեմ տէրութեան ծովա- յին ծառայութեան մէջ Խառիսյի սուրբ գատին ուխ- տեալ անձնութէներ որոնելու համար: Դուք սոքի կը բարձրացնէք ժողովրդին ցամաքի վրայ, ևս ձեզ կը պատասխանեմ ծովի վրայից:

Ողագուրվեցան և բաժանվեցան: Խրաբանչերը գը-

ծած էր իր ճանապարհը: Մահանին ստանձելց կազմա- կերպել մէկ արշաւախումբի յղումը գէպի Սավցա, որ- պէսզի ապստամբեցնեն այդ երկիրը գէպի հանրապե- տութիւն. Գարիբալդին իրան յայտարարեց որպէս նա- ւատափի Եւսուի գիշէ ֆոէգատի վրայ և սկսաւ իր պրօ- պագանդան:

Ուէ ինչ վախճան ունեցաւ Խամոնիո զօրապետի հրամանատարութեան տակ զուրս արված արարագդ գնդի Սավցա ուղարկվելու յայտնի է: Հանրապետական- ները, անսմօթաբար խարված, կարճ պատերազմից յե- տոյ ցրվեցան, և այն ժամանակ սկսան ամենաանշութ հալածանքները Երիտասարդ Կալիայի իւ գրված անդամների գէմ:

Ե. Յ. Միջոցին, Գարիբալդին, անհամբեր որևէ յա- պազման, 1834-ի յունվար 3-4-ի գիշերը, յանձնա- բարել էր լնկերներին տիրանալու Եւսուի գիշէ ֆոէ- գատին և ինքը ամրացել էր օքնօվա, ուր պէտք է յարձակէր Սառանա հրապարակի կառարինեռների (պահակ սատիկան) զօրանցի վրայ: Ակայն ի զուր սպասեց լնկերներին, և մի ժամ յետոյ լուր տառւ, որ ապստամբութիւնը վիժել էր և հարկաւոր էր փախուստ տալ աղատելու համար, կեանքը վերապահելով նրան լուսագոյն օրերի: Մենոյն բոպէին թագաւորական խրմ- բերը շըջապատում էին հրապարակը: Գարիբալդին կո- րսած էր. չորս կողմը նայեցաւ, մի մրգավաճառի խա- նութ տեսաւ կիսաբաց, մի սատումով այնտեղ ապա- տանեցաւ, ինդրելով.

— Պատուաւոր մի մարդ եմ, աղատեցէք ինձ, փը- տըուում են, որպէսզի սպանեն:

Բարի կիւը տեսնելով այս պատուաւոր և գեղեցիկ դէմբը, ինչճաց և ասաց. «Ծածկվեցէք այստեղ, ներսը ու ոք ձեզ չեղ չենի...» Եւ նրան պահեց բանջարե-

զէնի կողովներում։ զուե՛չկուհին նրա համար գեղջուկի հագուստներ գտաւ, որպէսզի կարողանայ ծագավել, և նրան քաղաքից դուրս հանեց առաջ որևէ մեկից նըշ կատվելու։

Խնչ եղաւ փախստականի առաջին մասձմունքը։ Եր մայրը ։ Խնչ պիտի լինի եր սիրար, առում էր ինքն երան, և թէ իմանայ, թէ իր որդին փախչում է լիոնից լեռ, հայածված թագաւորի զնուրներից։ Աւր էր թէ տեսնէի նրան և գուէ մի համբորով անզորբացնէի։

Տասր գիշեր ման գալուց յետոյ, մի երեկոյ գնաց բաղնեց նիցցայի առաջին առ երից մէկի զուուլ։ Մի մարդ բացաւ և բարձրացրեց ճրագը, որպէսզի աւելի լաւ տեսնէ անծանօթի գէպը։

— Խնչակէս, գու, բացականչեց զարմացած։

— Առութիւն, բացականչեց Վարիբալզին. Թոյլ առուր մտնեմ։ Փոքր ինչ յետոյ գտնվում էր նա զիմացէ զիմաց իր բարեկամի հետ, յետ ընկած մի սենեակում։

— Խակ Մաձձիին, խնդրում էր սա անձկութեամի։

— Ազատ է, գոնէ այդպէս եմ կարծում։ Ես ել նրա պէս թափառական կը շղչէմ օտար երկիրներ, սպասելով Խոարիսյի աստղի ծագման։ Սակայն տաժանելի պայումը ս'սելուց առաջ՝ ուղում եմ մայրական համբորով վերան որոգէ արիութիւնս։ Գնա, ով բարի ֆէտումէ, գնա իմացներ նրան, որ իր որդին մօտիկ է և կամենում է բարեւել իրան գուցէ վերջին անգամայ համար։

Վարօն ֆէտում գնաց այդ լուրը հաղորդելու թշուառ կողք, տիկին Առօգույին, ինչպէս միւչե օրս էլ առուանում են նրան նիցցայի բնակիչները. և յետեալ գիշերը Վարիբալզի, նոր այժ զգեցած այն հըրեշտակատիս կնոջ ժպաից, մէկնում էր գէպի տարագրութիւն։

Էյդ ժամանակին երը Վայուն էր կաղմում սահման պինանտէի և Գրանսիսի մէջտեղ. տարագիրը հասնելով գետի ափը, գտնում է նրան յորդած անձրեներից։ Բայց դա արգելք չէր կարող համարվել մէկ այն պիսի լուզորդի համար, որպիսին իւլին էր։ Կետպում է զրի մէջ և քիչ յետոյ ուղը զնում է հանդիպակաց ափը։

— Աղաւաված եմ, աղաղակում է խնդագին շնչառվ։

— Պանցնեցներ, ձերբակալին, լսվում է մէկ աղմուկ։ Ջրանսիսկան մաքսախցներն էին, որոնք վազում էին գէպի նա։

— Ձեզ հետ որևէ գործ չունեմ ես, պատասխանում է Վարիբալզի։ Պինանտէից փախած եմ Քաղաքական խնդրի համար։

— Ծատ լսւ, վրայ են բերում մաքսախցները։ Յեղափոխութիւնը միշտ յանցանք է. . . կառավարութիւնների գիմաց։ Կը գրենք Վարիլ, խել առ այժմ, մինչ նոր ան բինութիւն, կը լինէր մեր բանտարկեալը։

Վարիբալզի ծպուն չը հանեց։ Մաքսախցները նրան տանում են գուասէ, գուասէից գուագինեան։ Էյդ տեղ փակում են նրան մի սենեակում, առաջին յարկում։ Հէւց որ իրան մենակ տեսաւ, երիտասարդը վաղեց գէպ պատուհանը։ Կերպելը բաց դաշտն էր, մի ոստին և աշա նա աղատ էր։ Կաւաստի էր և գիտէր երկրի մեծ գրբի վրայ կարգալ։ Աստղերի օգնութեամբ ճանապարհն ուղղեց գէպի Մարսէլ։

Վէկ օր և մի գիշեր ման գալուց յետոյ համար մի գիւղ։ Մտաւ պանդոկ. յոզնած էր և քաղցած, ուրովհետեւ առաջին օրից ի վեր բերանը պատառ հաց զրած չէր։ Պանդոկապետը բարի գէմք ունէր, պանդոկապետուհին սիրուն էր, և մինչ Վարիբալզին ուտում էր, թոյլ գտնվեցաւ բանալու նրանց առաջ իր գաղտնիքը։

Պատմեց նրանց դաւադրութեան և փախուստի մասին.
սակայն երբ նա խօսում էր, պանդոկապետի դէմքը
հետզետէ միժագնում էր:

— Պարտաւոր էի ձերբակալել քեզ, ասաց նա
յանկարծ գարիբաղդին:

— Ինձ ձերբակալել պատասխանեց սա ապուշ կը-
տրած: Բայց ոչ, գիտեմ որ կատակ ես անում: Գոնեք
թոյլ տվեք, որ ընթրիքս վերջացնեմ. իրաւունք ունեք
նյութու կրկինը վճարել տալու ինձ, որովհետեւ տակա-
վին ախորժակս սուր է:

“Ես պանդոկում կային շատ երիտասարդներ: Ալ-
բանք խօսում էին քաղաքականութեան մասին, և, ինչ-
պէս սովորական է, պախարակում էին կառավարութիւն-
ներին: Գարիբաղդի առաւ գինիով լիցուն բաժակը և
կանգնեցաւ րանց մէջուղը:

— Խեցէք ինձ, բացականչեց:

Եւ իր տենօրական գեղեցիկ ձայնով, որը անազարտ
պահեց մինչև ծերութեան վերջին օրերը, հմայիչ շեշ-
տերով և ճկունութեամբ երգեց բերանժէի, գրանսիա-
ցի դժոջների երգիծանող բանասեղծի, մի երգը:
ու առուտուոր մարդոց Աստուածը երգն էր
այն:

Այսօր ովէէ, որ չէ իմանում այն. բարի Աստուա-
ծը պատուհանն է գալիս, ինչպէս Արդարների սուրբ
Պետրոսը, նայում է դէպի ցած, այս աշխարհը, և աղա-
ղակում.

Ի՞նչ են անում թըգուկներն այդ գուգած:
Ծակեթեւոն, ձնի գաների վրայ բազմած:
Ճակատն օծված, ամբարտան բնութեամբ
Զեր մըջնոյի այդ պետերս ցնութեամբ
Ասում են, որ նրանց իրաւունքն իմ օրնեւ,
որ իմ չնորոյն են թագաւոր նրանց կանզնեւ
թէ ինձնի են նրանք դարձեւ թագաւորի արժանի,

Օ այստամ, աղերք, թող սատանան ինձ տանի,
թող սատանան ինձ տանի:

Երիտասարդները ոգեսրվեցան. գրկեցին տարագրին-
աղաղակելով՝ կեցցէ գրանսիա, կեցցէ իտալիա, և բո-
լորը միասին սիրայօժար ընկերակցեղան նրան մինչեւ
Մարտէլ:

Պանդոկապետն այլ ևս ձերբակալութեան խօսքը
շարաւ:

Սակայն հայրենիքի համար այնքան վատնգների
ենթարկվելը երբէք չէր թուլացնում իր սէրը դէպի
նա կամ դէպի իր ուսուցիչը, Մածձինին: Եւ գոնի տա-
րի առաջ չուղանում, մի հրապարակային ճառախօսու-
թեան մէջ ասում էր:

— Երբ երիտասարդ էի և մշուշապատ ձգտութեար
միայն սունեի, մէկը վնտուեցի, որ ինձ խորհուրդ տար
և առաջնորդ լինէր ինձ երիտասարդ հասակիս մէջ այդ
մէկը վնտուեցի այնպէս, ինչպէս ծարաւին վնտուում է
ջուրը: Այդ մարդը գտայ: Ա՛ միայն պահպանեց սուրբ
կրտկը, նա միայն հսկում էր, երբ ամենքը ննջում էիւ-
կրտկը, նա միայն հսկում էր, եղաւ և միշտ այդպէս էլ մնաց-
նա իմ բարեկամը եղաւ և միշտ այդպէս էլ մնաց-
նա երբէք նրա մէջ չը շիջաւ հայրենիքի և աղատութեան
սիրոյ սուրբ կրտկո: Այդ մարդը՝ Յովանէփի Մածձինին է:

V

ԱՉԵՏԱՐԱՐՔ

Առաջին անգամ գարիբաղդին իր անունը տպագ-
րուած տեսաւ մի լրագրի վրայ, այդ եղաւ ոգածէտ-
տա Պիեմնտէցէ՝ թերթի 1834-ի 72-րդ թուի մէջ:
Կոուլո Ալբէոտո, որ կամեւում էր երիտասարդական-

գաւառութեանց համար ունեցած զղջման հաւասար
ապացոյցները ընծայել եւրօպայի բանավետներին, իսու-
մուխն ցի գործի իբր հետեւանք՝ ԵՇ գատեր վարեց Եր-
բիտառ տրդ իւտալի այսի անձնուելների գէմ որոն-
ցից տասներկուս հրացանի բանել ամեց, ինն անձների
համար պատժի փոխիտութիւն անարինեց, տասնեւելէկ հոգի
սիխանն, երեսունը զանազան տարի թիւապարտութեան
գտառապարտվեցան և միայն հինգ հոգի արձակվեցան: 1)
Յունիսի 3-ին թագաւորի անունով հրատարակվեցաւ,
ու Առեւտրական ծովային կապիտան և թագաւորական
ծառայութեան մէջ գտնվող երրորդ դասի նաւասարի
նիցցայից Յովսէփ Մարիա Գարիբալդիին թիւկունքի կող-
մից հրացանի բունելու նախատական մահւան գատառ
պարտութիւնը:

Ուր էր և ինչ էր անում գարիբալզի այդ միջաց-
շներին. գտելում էր վաճառականական մի նաև գրայ,
Մարտէի նաւահանգստում, և որպէս ոլի իր երկրի իշ-
խանութիւնների կողմից ըստ յանձվի կառլո Էլլէռտունին
իր անունը փոխած և նրա տեղը առած էր պանէ անու-
նը: Մէկ օր յանկարծ լսում է մէկ աղմուկ նայում է
և տեսնում մի երիտասարդ մերձի մաս կուելիս ջուրի

1) Կառլ Ռիբուսն պատկանում էր Ստավրական տաճ երկրորդական ծիրակին: Վանքանիկի ծիրակ վերջացաւ վելայոր կմհմանուն է Ա-ի և արև կոտուր եղօքը, Կառլ Փէլչել-ի անպատճեթութեամբ: Կառլ Ռիբուսն, որպան յօրելորդութիւն, զատարարակեցաւ վեցաւ իր ստական քաղաքացի, նաև շընէկուր և ապա Պարփռում: Տան և ինս տարինան Էր կը մտաւ նուազօնան բանակը՝ զինուորական ծառայութեան մէջ: Կայսրութեան անկանութեան յետոց վերաբարձու Տօնին ուր ըի ժամանակայ մէջ չուրան իր անշկացրած կեռափ, ուսումնական համարն, մինուրան և ննութեան ու փառաւոր տեսքին հարուցաւ զրաւել ընդ հանուրի համակրո թիւնը: Խու նրա զէվի հարթնիք տածած մէրք և զէվի աստորիական տիքավանութիւնը նրա Թագուն ասելութիւնը ձեռ թրին նրա հանուր մծ մողովի կանութիւնը: Ուսական Էր, որ ապատական ներք մծ հանուր ունենացին նրա գրաւ և յօւսացին, որ նրանում էր կը գննէին պատարակութեան մի յարմարաւոր և ննինականուր պարագուի: Դժբաղդարար, ստացին առիթով, զործականի մէջ նա շարդա-

Հետ, և ոչ ոք ներկայ եղողներից չէր համարձակում
խել այն զոհը մահւան ճիբաններից: Մէկ սատումավ
ծովը ցատկելը, խեղդվելու վրայ եղողն պինդ բռնելը
և մի քանի հուժկու լուզորդի հարուածով նրան զերծ
ծովեզը հանելը մի վայրկեալի գործ եղաւ: Ամբոխը
ծափահարեց նրա արիստթիւնը, խակ ինքը պահվում է,
փախչում և անհետանում: Սակայն աղատվածի ընտա-
նիքը, վնասուելով գտնում է նրան: Խրիստոսարդի հայրը
որ Բամբօ զօրապետու էր, նրա՝ յայտնում է իր շնոր-
հակալութիւնը և սաստիկ պարաւորված լինելը և
խնդրում է որպէսզի մի հարուստ պարզ և ընդունել:

— Ձեր ձեռքը, պատասխանում է գարիբաղջի: Այս-
տանց սեղմեցէք նաև իմը — այդ կը լինի իմ վարձը
զարգել ստորութիւն կը լիներ:

— Աղինեւ երիտասարդ, բացականչեց զօրապետը Հիմացած: Այստանց ձեզ գրիկում եմ. սակայն ասացէք ինձ գոնէ թէ արդեօք շեմ կարող ձեզ համար մի բան անել... արդեօք որևէ պաշտպանութիւն...

— Ըստ Հակոբ Եմ, ոչինչ չէք կարող անել ինչ
չամար: Միայն յիշեցէք երբեմն մեզ իտալացու մասին

E. 2.

բարեց իր վրայ սքած լոյսը, նաև պահեցվ իրան որեւէ, մաս-
նակցութեանց այն յետափառական շարժման, որի մէջ ազատա-
կանները սպահ ապին ննուենալ աղջադակը. կեցցէ ինտիմ ու
Սահմանակ ու թի իւն, պատ իւրացամ Շատուրի ացին և թին:
Միայն ճիկոս Եւրանակէ Եւ-ի զանց հրաժարեանց յանու, երբ
Կառու Փէլքըն Անների Տողէնայի դրամեթին մէջ նորին
Կառանակալ կարգեց Սարցեանական Տէրութեան վրայ (Պիտմանուտ,
և Սարդեսիս կողմն), Կառու Վերևածն օգտվեալ իր թագօր
իշխանութիւնց կանուսաց և ավել դոդովքն Սահմանադրու-
թիւնը, Խանակը կ զբանաւ աւար աէքրութիւններ և նու հայութիւն-
քայնադրութիւնը եւ գրքենիւ իր յօրինորորդու զարութիւն. Եթու
անմիջական նախանձը այդ բայցն՝ Աւատրիական բանակները
մօսն Պիտմանու, Խուաննեցն Սահմանադրութեանների յարցած
ապառաժութիւնը ու վերանաստուեցն իրերի նախկին վիճակը
օ. թ.

Գրանից ու շատ ժամանակ յետոյ՝ Արքէլում
Երեսցաւ խօլէրան։ Առզջապահական նախազգու-
շական միջները չեն զօրում խափանելու սարսափելի
ախտի և կոտորածի տարածվելը. Հարուսաներն ահարեկ
փախչում են քաղաքից. Հիւանդերի համար պակա-
սում են մինչեւ խակ հիւանդապահներ։ Եւ ահա Գա-
րեթազգին քայլերն ուզգեց գեպի հիւանդանոյ, որից
բոլորեքեան խոյս են տալիս, վախենալով թէ մի գու-
ցէ վարագվեն, և

— Հիւանդապաշների պետք ունեք, բացականեց: Զեր տրամադրութեան առկն եմ: Քժիշկը չեմ, սակայն խօլէրան ինձ երկիւզ չէ պատճառում և ո-րիշների ցաւերն իմ գուղին ես շարժում: Կարծում եմ որ բաւական է պարան:

Ուրախութեամբ ընդունվեցաւ, և հարիւր պատեշ
բազմերի ազագայ հերսոն՝ տասն և հինգ օր խելացի և
գթալիք մի հիւանդապահ եղաւ խոլերայից բռնված-
ների համար։ Յետոյ, որովհեակ հիւանդառթեան ոյժը
նուազել էր, ծառայութիւն գտաւ Քոնըգառցի Կւ-
ռուսուտառու երկիրայի վրայ, և Խարիսխ վերցրեց
զէպի Խիօ-Ժանէյո։

Եյնտեղ նրան սպասում էին նոր ցաւեր և աւելի մեծ փառքեր:

VI

ՏԵՂԵԿԱՄԱՆԴԻՑ ԴԵՊԻ ՏԱՐՁԱՆՔ.

¶ Ան ամիսներից ի վեր՝ գարիբաղջի գտնվում էր միխօ-ժանելոյութեամբ: Կաւաչանց գտնվութիւնը անցած ժամանակ տեսնում է զգթայակապ կալանաւորներ, որոնք զինուորաների հսկացութեան տակ փոխադրվում են նաևերից

գէպի բանտերը: Գլուխեան բնազդման մղամնվ մօ-
տեցաւ Դրանց, և զարմագած լսեց այն թշուառների
գանգառները Դյոն իսկ եր լեզուով. Խտալցիներ էին:
1837 թուականի սկզբից՝ Արիո Գուանդէ գտառն ա-
պրստամբած լինելով բուազիլական կայսրութեան գէճ՝
հայ բայլեառութեան զրոշակը պարզել էր: Աակայն Հան-
րապետականները կայսերական գողերի հետ ունեցած
առաջին բաղխման մէջ յաղթված էին, իսկ պարագը՝
լուինները (որո՞ց մէջ գտնվում էին մի քանի խտալ-
ցիներ) առաջ սրբգում էին գէպի բանտ:

— Ալանաւորներ, սասաց ի՞քն իրան գալիքում, ուրեմն խտավագիւերն աշխարհի որ մասումն էլ լինեն, ուրեմն խտավագիւերն աշխարհի որ մասումն էլ լինեն։ Իր վիճակի նշառութեան զօհերը պէտք է լինեն։ Իր վիճակի նշառութեան այն թշուառերի հետ, ևսո որում միաման ութիւնն այն թշուառերի հետ, պատճառը, այն է, ազատուեր թշուառութիւնների պատճառը, այն է, ազատուեր մեան սէրը, — վճռել տվեց Գարիբադլիին նույրվել մեան սէրը, — վճռել տվեց Գարիբադլիին նույրվել մեան սէրը։ Թշջւառութիւն ստացաւ խօսելու որ ծնող նրանց։ Թշջւառութիւն ստացաւ խօսելու որ ծնող նրանց։ Վիլվայի հետ հապետութեան պետի՝ Կօնսալվո դա Վիլվայի հետ և արտօնագիր նամակներ ստացաւ արշաւելու ծովի վը- բայ կայսերական երի դէմ։ Կայծակի արագութեամբ, որոյ կայսերական երի դէմ։ Կայծակի արագութեամբ, որ իր ձեռնարկութիւնների բնորոշ յատկութիւնն է, մի քանի խտավագիւերի հետ տիրառում է բռագլիիա- կան մի նաւակի և հանրապետական դրօշը կայմի ծայ- կան պարզեցված գիմնում է դէպի Մասոնիկան կղղիները։ Պարզեցված գիմնում է դէպի Մասոնիկան կղղիները։

“Այս գաղվելով իմ մի նաւի վրայ, — ու ըստ է աւելի աշ, — ապածեցի բազուկնելս ուրախ ու հպարտ, և արձակեցի մի ճիչ՝ նման արծիւի այն ճիշն, որ նա արձակում է, երբ ճեղքում է օդն ամենալավը լեռների կատարներից վերև։ Ավկիանոսը իմ նարածը լեռների կատարներից վերև։ Ավկիանոսը իր, և իս ձեռքս դնում էի իմ տիրապետութեան վրայ, և իմ փառիկն աւը նա Մահաճինի անուանեց։ Ճիչ օքերից յեւ էր հեռաղետակով տեսնում է մի գո-

լէտտա, որ նաւարկում էր բռազելիսկան զրօշով։ Առաջ ժամանակ անյնել տալում մատենում է, յարձակվում է և գրաւում նրան։ Այն գոլէտտան անուանվում էր Լուիզա։ Արա վրայ գտնվում էր մի ճանապարհորդ, որ դողարով ներկայանում է Գարիբալդիին՝ ձեռքին բռնած մէկ արկղիկ։

— Առէք, ասում է նրան պաշտամագին ձայնով, ընդունեցէք այս գոհարեղէները, բայց աղատեցէք իմ կեանքը։

Այս խօսքերն աբտասանելով միաժամանակ բաց է անում արկղիր, որի միջից ցայտում է շացուցիչ մի ոյս։ Արկղիկը իրն էր ագամանդներով։ Գարիբալդի առաջնորդ կամ կամ փակեց և տիրոջը գարձնելով, պատասխանեց։

— Պահպահցէք ձեզ այդ աւելի լաւ պարագայի համար։ Ես մի ծովաչէն չեմ, որ կողոպտում է խաղաղ ացցրդներին, այլ մի ծովաչէն եմ, որ Ճնշվածների վրէժն է առնում Ճնշողներից։

Երւ իրաւ, բոլոր ճանապարհորդներին արձակեց առողջ, ապահով և աղատ։ աղատեց այն նեգրներին, որ գտնվում էին գոլէտտայի վրայ որպէս գերիներ։ Իսկ գոլէտտան իրան պահեց անուանելով նրան Ակառօպելա՝ մէկ անուն որ գոլիս է գլուց էն տիշից (Rezenzenti — մուրացիկներ), որովհետեւ բռազելիսկի կայսրն (ինչպէս որ արաւ Փիլիպպոս Բ. Հոլլանդիայի ապստամբների նկատմամբ) հանրապետականներին այդ անունն էր տալիս։ Թագաւորների սովորական վրէժինդրութիւնն է այդ։

Դրուաճված նաւի վրայ Գարիբալդի գիմեց գէպի Արևելեան Հանրապետութիւնը, յուսարով որ կը գրանէ նեցուկ և պաշտպանութիւն։ Ասկայն այդ Հանրապետութեան գլխաւորները ըստ կամենալով որ և է գըժ-

տութիւնն ունենալ բռազելիսկի հետ, ուղարկեցին նրա գէմ մի նաւ, որպէսզի կալանաւորեն մեր համարձակներին։ Գարիբալդի հէնց որ իմացաւ այդ գիտաւորութիւնը, պաշտպանողական վիրք ընկանեց։ Կրակը սկսաւ այն ինչ յաղթութիւնը ծիծաղում էր մերոնց, երբ յանկարծ հերոսն ընկաւ իր արիւնով ոռոգված տախտակամածի վրայ. գնդակը վիրաւորել էր նրան վիզ։

Երբ Գարիբալդի ուշքի եկաւ, մի զով քամի շոյց նրա ձակատը։ Եր նաւաստիներն, օգտվելով արեւելեան կողմից փռող ուժեղ քամիից, խոյս տվին թրշնամիներից և մտան Պատանա գետը։ Սակայն այնտեղ էլ Վէօնաուդօ Միլան, Գուալէցուայի կառավարիքը, ուր փախտականները խարխիս էին ձգել, չուզեց ձաւնաչել նոր հանրապետութեան զրօշակը և յայտարարեց, որ բոլորն էլ կալանաւորված են։

— Աը մեռնէ, չի՞ մեռնիլ, ահա հարցերը, որոնք լինում էին այն անկորնի շուրջը, ուր գրված էր Գարիբալդի՝ ընկած զառանցանքների մէջ։

— Ո՛չ, չը պիտի մեռնի, պատասխանած լինելու էր Ալատութիւնը, որովհետեւ նա սուրբ է իմ գործի համար։ Եւ արդարեւ, չը նայելով որ առաջին անգամ վէրքը մահացու դատվեցաւ, Գարիբալդիի ուժեղ կազմուածքը յաղթող հանդիսացաւ որ և է վտանգի։ Եր ապաքինման միջոցին նրան հիւրասիրաբար ինսամում էր մի վեհանձն սպանիացի, Աննեօն Ընդդէաս, որ սկսել էր սիրել նրան մեծ խանդով։ Նրան արգիլված էր գուրս գալ քաղաքից, և գրում էր մի բարեկամի. ոթէ շըրջագայելիս և թէ խօսակցելիս, թէ կարդալիս և թէ գըրելիս, միշտ, նաև այստեղ, սրտում ունեմ իտալիան, և ինք ինձ խօսելով՝ արհամարհանքով աղաղակում եմ.

Կուգէի, որ նա ամայի դառնար եւ իր պալատներն ուշ հիմնախտակ,

նախ ջան տեսնել, որ նա խիստ դողդողար
Այն քիրտ վանդալի մեծ մահակի տակ:

**Այդ միջոցին հրաման է գալիս տանել նրան մայ-
րաքաղաքը, և գարիբալդի, վախենալով, ոչ առանց
պատճառի, թէ մի գուցէ անգթութեամբ վարվեն ի-
րան հետ, մտածեց փախչել: Երկու օր թափառական
շրջեցաւ Պառանայի երկու եզերքներով տարածված ըն-
դարձակ ամայութիւններում, որոնք անծանօթ էին ի-
րան, վստահանալով բազդին և անսանելի հրանուանքով
հառաչելով ազատութեան գեվիւռներին: Մէկ օր, յոդ-
նած երկար պտոյտներից, ընկաւ մի ծառի տակ և քը-
նացաւ՝ երազելով հայրենիքը... Երբ բացեց աչքերը,
իրան գտաւ շրջապատված Միլան կառավարչի ոստի-
կաններով, որոնք որսնում էին նրան:**

**Վարդու ձեռքը դողում է, երբ գրում է այն, ինչ
պատահեցաւ, և ցասման բոցը այրում է երեսները:**

**Գարիբալդիի ձեռքերը կապեցին իր մէջքին, նըս-
տեցրին ձիի վրայ, ոտքերը կապված համետին և այդ
կերպով հանեցին Միլանի տուած:**

— Ո՞ւ տվեց քեզ փախչելու միջոցները, հարցը-
րեց նրանից ամբարտաւան, բարկացայտ աչքերով:

— Ո՞չոք, պատասխանեց գարիբալդի. իմ փախուս-
տըն ինքս, մենակս, պատրաստեցի:

— Դու սուտ ես ասում, բացականչեց Միլան և
մօտենալով կալանաւորին, ձեռքի բարակ գաւազանով
մի հարուած տվեց նրա երեսին:

**Գարիբալդի կա կարմիր կարեց, ձիգ արաւ կոտ-
րատելու իրան կաշկանդող կապանքները, սակայն ոյ-
ժերը չը բաւեցին և նա թուլացած, ուժասպառ գե-
տին ընկաւ, կքելով ինքն իր վրայ:**

**Միլան ժպտեց և մի քանի խօսք փախսաց բան-
տապահի ականջին: Վերջինս՝ օդութեամբ միւս քա-**

շերի՝ կապեց մէկ ուրիշ պարանի ծայրը գարիբալդիի
դաստակներին, իսկ միւս ծայրը անցնելով մի գերա-
նի, բարձրացրեց նրան հինգ վեց ոտք գետնից վեր:
Լսվեցաւ մի սոսկալի ճրճթոց՝ առաջացած ոսկրների ի-
րանց տեղերից խախտվելուց:

— Այժմ վերջապէս պէտք է խօսեն, հարցը նը-
րանից Միլլան:

**Գարիբալդի չէր կարողանում պատասխանել սա-
կայն հաւաքելով ոյժերը, թքաւ կառավարչի երեսն
ի վեր:**

— Օմողէր այդպէս կախված մնայ, հրամայեց Միլ-
լան՝ կատաղութիւնից սպրտեած. այդպէս կը խելքա-
նայ և մեծասրբութիւնը կանցնէ:

Եւ ինքը հեռացաւ գնաց: գարիբալդի կատարեալ
տանջանքի մէջ էր: Նրա գաստակներից արիւնը հո-
սում էր. խայթող ձանձերը, որ այդ երկրում աւե-
լի կատաղի են, քան մեր երկրում, այնպէս էին կը-
ծոտում նրան, որ ամբողջ գէմքը մի վէրքի էր փոխ-
ված: Ծարաւը նրան տանջում էր և չուրը, որ տա-
լիս էին նրան պահպանները, հրատապ ստամբսի մէջ
այնպէս շուտ էր ցամաքում, որպէս թէ նետած լի-
նէին մի հրաշէկ երկաթի վրայ: Անկարագրելի էր
այն նախատինը, որ հասցըին նրան...

Երկու ժամից յետոյ պահպանները, գուցէ մե-
ռած կարծելով, նրան վայր իջեցրին: Եւ անշուշտ մե-
ռած կը լինէր, եթէ վրայ չը հասնէր մի կնկայ սիրա-
լիք հոգատարութիւնը, որ, ինչպէս լցոսի մի ձառա-
գայթ, ներս թափանցեց գարիբալդիի կեանքի այս
սկամոյր շրջանի մէջ այդ կինն էր ոմն Ալէման:

Կառավարիչը տեսնելով, որ անօգուտ է այլ ևս որ
և է փորձ նրան խօսեցնելու և չուղելով իր վրայ առ-
նել նրա մահւան պատասխանատութիւնը, ուղարկեց

Նրան բայց աղաւառի մայրաքաղաքը, ուր երկու ամիս բանտ նստելուց յետոյ՝ ազատ թողվեցաւ:

Բաւական ժամանակից յետոյ բազգը Գարիբեալդիի
ձեռքը յանձնեց Գուալէգուայ գաւառի բոլոր վիճակ-
րական գլուխներին, և բոլորն էլ ազատ արձակվեցան,
առանց ամենափոքր չարիք կրելու նրանից. Դրանց մէջն
էր նաև Սիլվան:

— Ուղղված նրան ազատ, բացականչեց գարիբալդի:
Զեմ կամենում և ոչ իսկ տեսնել նրան: Վախենում
եմ, որ մի գուցէ իր ներկայութիւնը յիշել տալով
ինձ այն բոլոր տառապանքները, որ կը եցի, կատարել
տայ ինձ մէկ այնպիսի գործ, որ պատիւ չը բերէ թէ
իմ և թէ խօսական անուան:

VII

ԴՕՒՆԱ ՄԱՆՈԵԼԻՏԱ.

Ուստի գուանդէն տօնի մէջ էր չերսովի ընդունելութեան համար։ Բոլոր այն թշուառութիւնները, որոնց այնքան քաջութեամբ դիմադրեց, նոյնքան գրաւականներ էին յաղթութեան։ Կրան յանձնվեցան ծովային փոքր ոյժերը, որ ունէր հանրապետութիւնը և առ դօս պատօս լճի վրայ (Բագերի լիճ)։ Գարիբեալդին, միաժամանակ, պատերազմում էր ծովից և ցամաքից։ Իր նաւերով յարձակվում էր թշնամու վրայ, տանելով նրանից բազմաթիւ գերիներ։ յետոյ իր գնդով գուրս էր գալիս ափը և ձի չեծնելով արշաւում էր կայսերական բանակիների դէմ, աչ ու սարսափ տարածելով չորս կողմ։

լէսի քրոջ, Գօննա Աննայի էստանչի այլում կամ
ագարակում։ Գարիբալդիի կողմից յատկապէս դէպի
այդ տունը ցոյց տրված նախապատրաստութեան շար-
ժառիթն էր շնորհալի մէկ աղջիկ, նոյն Աննայի դուս-
տրը, որ Մանօէլիտա անունն ունէր։ Այդ աղջկայ հը-
րապյուն այնքան մեծ էր որ — ասում էր Գարիբալ-
դի շատ տարիներ յետոյ — „ը նայելով, որ զօրկ-
ված էր նրան ունենալու յոյսից, այնուամենայնիւ չէր
կարող այդ պատճառով նուազ սիրել նրան։“ Ար-
դարև, նա նշանված էր իր մօրեղբօր նախագահի որ-
դու հետ։ Տարագիրն իր ալէկոծված գոյութեան մէջ,
երբ ամեն օր դիմագրաւում էր մահւան, պահում էր
իր սրտում այն պլատօնական սաստիկ սիրոյ և յար-
գանքի զգացումը, Տափօլա Ռօտօնդայի հերոսական բա-
րեպաշտութեամբ։

Ես տանչ էի ան գտնվում՝ եր կամամառում։ Այդ
օր Գարիբելդիին լուր հասցըին, թէ ադարակի շուր-
ջը պտտում էր ոմն կապիտան Աբովին, որին եր խո-
րամանկութեանը համար Մօռին գուշէ, այսինքն կուզ-
մականունը տվել էին, 120 մարդով, որոնք բոլորն ել-
աւատրիացի վարձկաններ էին։ Բոլոր իտալացիներն ու-
րախ եղան, այն պատճառով, որ կարող պէտք է լի-
նէին կռւել իրանց հայրենիքի թշնամու դէմ։ Գարի-
բելդի անմիջապէս Մօռինգուէի դէմ ուղարկում է իր
մարդկանց։ Սակայն սա ուրիշ ճանապարհով անսպա-
սելի կերպով համեստմ է էստանչիա, ուր գտնվում
էր Գարիբելդի միայն տասն և մէկ հոգիով, բոլորն ել-
իտալացի։

Հրամայում է իսկոյն փակվել թաքստոցում և
առնելով այնտեղ գտնված հրացանները սկսում են
արձակել առանձին-առանձին, կարծել տալու համար,
թէ բազմութիւն են: Թշնամիները շրջապատում են

տունը և բարձրանում են տանիքը, որպէսզի այնտեղից վառած խորձեր նետեն նրանց թաքստեան վայրը. մերոնքը մարելով խորձերը, առանց հանդիսաւ առնելու շարունակ պատասխանում են հրացանաձգութիւններին: Վերջապէս մի քանի ժամ կուից յետոյ՝ տաճն և մէկ խտալցիները վիրաւորում են Մօղնդուէն բազուկից, սպանում են մի քանի առևտրականների, իսկ մնացածներին փախցնում:

Կախագահն իր խնդակութիւնը յայտնեց Գարիբալդիին իր այդ հրաշալի աջողութեան համար, իսկ սա պատասխանեց հին արժանապատութեամբ.

— Ահ աղատ մարդ արժէ տասը սարուկներ:

Քիչ օրից յետոյ Դօննա Աննան պարահանդէսի տօն ունէր ի պատիւ հերօսին: Գեղեցիկ Մանօկլիտան տօնի թագուհին էր. և մայրը ասում էր Գարիբալդիին.

— Խեղձերեխայ, երբ պատերազմի լուրն առաւ դժգունեցաւ և մտահոգութեամբ ուզեց իմանալ, թէ արդեօք զերծ էիր վասնգից...

Այս խօսքերի վրայ գունատվեցաւ. — Գարիբալդի տեսնում էր իր սիրոյ փոխադարձը, սակայն չէր կամենում երջանիկ լինել, գաւաճանելով մի բարեկամի:

Ո՞ի քանի ամսից յետոյ պատկանում է Անիտային:

Օհէ Բնչպէս հանդիպեցաւ նա իր փառքերի ու ձախորդութիւնների հաւատարիմ ընկերին, այդ կը տեսնենք յաջորդ գլխում:

VIII

ԱՆԻՏԱ.

Թռեկերը ծալած կրծքի վրայ, թիկունքը տված իւտապառիկայի (մի գոլէտտա, որ պատառում էր

Սանտա կատերինա լճի ջրերը) մեծ կայմին, անշարժ կանգնած էր Գարիբալդին: Այդ վիճակի մէջ նա դիտում էր բանաստեղծական հայեացքով ալիքներն ու հրաշալի երկինքը, և ժամանակ-ժամանակ մի հառաջութեանում էր նրա յաղթ կուրծքը.

— Ո՞ենակ, մենակ աշխարհի վրայ, մրմունջում էր: Վեց բարեկամներ ունէի Դամալիսից եկած ինձ հետ, վեցն էլ մեռան իմ կողքին: Ո՞ւր կայսերական երկաթի վեցն տակ ընկաւ, որը ալիքներում անհետ եղաւ վերջին ուրագանի միջոցին, որ խորտակեց մեր նաւերը և Ովկիանոսի վրայ ցանուցիր արաւ առաջապահներին... Ովկիանոսի վրայ կը լինի իմ մտածմունքներին... Մի կին ովկիանոսի վրայ կը լինի իմ մտածմունքներին... Մի կին միայն կարող է անել այդ. նա է ապաւէնը, միաթարութիւնը, աստղը՝ փոթորկի ժամանակի... .

Այդ միջոցին նա աչքերը դարձրեց դէպի ծովեզը, որ շատ հեռու չէր, և նաւի վրայից նշանաց մի քանի երիտասարդ աղջիկներ, որոնք սպասում էին ընտանեկան ծառայութիւններին: Եւ այստեղ թողնում ենք որ ինքը խօսէ:

“ Այսանցից մէկն աւելի դուր եկաւ ինձ. հրամայեցի ցամաք հանել ինձ և իսկոյն քայլերս ուղղեցի դէպի այն տունը, որի վրայ շատ ժամանակից յառաջ էր հայեացքս. կրծքիս տակ ուժգին բարեախում էր սիրտս, սակայն, որքան էլ որ յուզված լինէր նա այլ ներփակում էր մէկն այն որոշումներից, որոնք այլ ևն թուլանում: Մի մարդ հրաւիրեց ինձ մտնելու. — Ես կը մտնէի նոյն իսկ եթէ արգիլէր նա ինձ: Տեսայ երիտասարդուհին և ուղեղ դիմացը երթալով ասացի նրան.

” — Արեշտակ, դու իմը պէտք է լինես:

” Այս պարզ խօսքերով ստեղծել էի մի կապ, ո-

բր միայն մահը պէտք է լուծեր:

Գարիբալդի գարձաւ իտապատճեկա, հետն ու-
նենալով Բառուէ գիւղի շնորհալի և ուժեղ երիտա-
սարդուհին, Անհիտա հերոսուհուն:

የወከድ የጥቃቅ ንብረቱ ስልጣን ተስፋዣ ተስፋዣ ተስፋዣ ተስፋዣ ተስፋዣ
የወከድ የጥቃቅ ንብረቱ ስልጣን ተስፋዣ ተስፋዣ ተስፋዣ ተስፋዣ ተስፋዣ

—Ո՞չ, ո՞չ, պատասխանեց սա. կեզդյ տեղը սիրած
մարդու մօտն է:

ւայն այդ վայրկեանին կայսերականները կը կնապատեցին կրակը: Գարիբալդի ընթանում է սիրոտ առևլու իրայիններին, որոնք կարծես թէ տատանվում էին և ուղղում էին զինաթափ լինել. Անիտան ինքն էլ սըլանում է նաւի միւս կողմը սուրը ձեռքին ոգի ներշընչելու թուլամիտներին: — Համեսում է ուռմբը և գետին է տապալում նրան երկու նաւաստիների հետ միասին: Գարիբալդի թուլում է նրա մօտ, կարծելով արգէն, թէ նրան գիտէնացած կը գտնէ. սակայն նաբարձրանում է առողջ և գերծ. երկու նաւաստիները վիրաւորված էին: Հրամանատարն աղերսում էր կրկին իջնել նաւի խորքը:

— Այսուհետեւ ապատասխանեց նա, միայն վեր
բերելու այն վատասիրտներին, որոնք այնտեղ ծածկված
են:

ԵՇ արդարեւ, քիչ յետոյ վերստին բարձրացաւ,
առաջն ունենալով մի քանի նաւաստիներ ամօթաշար
եղած, տեսնելով իրանը նուազ արխասիրտ, քան մի
կին:

Հինգ ժամ յամառ պատերազմից յետոյ, կայսերականների գլխաւոր հրամանատարը սպանվեցաւ, ըն-

դունելով մի շեշտակի հարուած, և իր նաւերը յետ քաշվեցան անկարգ ու անկանոն դրութեան մէջ:

Ուրիշ պատերազմների մէջ ևս Անհատ իր առաւել-
նու համար հանդիսացաւ նրա պաշտօնեաներից ամե-
նահամարձակը և ամենահանձարեղը: Մէկ անգամ կայ-
սերակաները կամենալով յաղթահարել անպարտելի
դարձած իտալացին, ուղարկեցին նրա գէմ իրանց
նաւատորմիղի ամբողջ ոյժը: Թշնամի նաւերը մէջ
առին Գարիբելդիի նաւատորմիղը, որ բաղկացած էր
փոքրիկ մակոյիներից. մեր հերոսը, ունենալով իր մօտ
իր աներկիւղ կնօղը, պատասխանում էր նրանց կրակին
առանց դադար առնելու. յետպ հասկանալով, որ քա-
ջութիւնը բաւական չէր և շուտով թիւը գերակշիռ
պէտք է հանդիսանար, փոքր առ փոքր ցամաք ուղար-
կեց բոլոր իրայիններին և մնաց միայնակ Անհտայի հետ-
— տեսաւ, որ նրանք արդէն ապահովութեան մէջ է-
ին. կրակ տուաւ վառօդներին և սոսկալի պայթումով
օդը հանեց թշնամի նաւերը. իսկ ի՞քը հաւատարիմ
ընկերոջ հետ լողում էր ալիքների մէջ և անցնելով
ընդհանուր աւերածի միջից, ապահով հասնում է ծո-
վեցը: Այս հրաշալի գէպքը մեղ պատմեց իր մոերիմ
բարեկամի, կունէօ:

Այն ժամանակ սկսան տեղի ունենալ պատերազմ
ները ցամաքի վրայ: Սանտա Վիտոռիայում իտալա-
ցիների լէգէնը, որ հետզհետէ կազմված էր Գարի-
բալդիի շուրջը, կարկառ Ակուննա գումարտակի գորա-
պետին՝ այնպէս ուժգին, որ թշնամու բանակն ամբող-
ջապէս ոչնչացաւ: Անիտան նստած ձիու վրայ գնդակ-
ների կարկուտի տեղատարափի մէջ, երեսում էր ամե-
տեղ, ուր կոխուը մղվում էր աւելի կատաղաբար, ա-
մրճանակը ձեռքը բռնած՝ երբեմն դատարկում էր կայ-
սերականների գէմ, երբեմն իջում էր վիրաւորեալ

ներին օգնելու, գնդակների սահմանից դուրս հանելու
և նրանց բժշկական միջոցներ մատակարարելու:

Այնքան ազող չանցաւ կոռիտիբանիի պատերազմը:
Հանրապետական հեծելախումբն ահաբեկ դրութեան
մէջ էր, իսկ Գարիբալդի իր վաթուն մարդերով՝ շրթ-
ջապատված էր Հինգ հարիւր հոգով: Մէկ անգամ Ա-
նիտան առանձին մնաց կայսերականների մէջտեղ. մի
մարդ թերեւ անձնատուր լինէր, սակայն նա թշնամիների
հրաւերներին — „Ո՛չ“ պատասխանեց և ասպանդակնե-
րը Խթելով ձիու կուշտերին, արագընթաց թռիչքով
անցաւ նրանց միջեց: Կսվեցաւ մի պայթիւն. գնդակը ծա-
կեց անցաւ նրա գլխարկը և այրեց մազերի մի քանի
հիւսկէնները, մինչեւ ձին գետին փուլեցաւ իր տակը
մահացու կերպով վիրաւորված: Հպարտ ամազօնը կա-
լանաւորվեցաւ: Թշնամիները, սրանչացած այնքան քա-
ջութեան վրայ, յարգանքով վարվեցան նրա հետ: Քիչ
յետոյ լուր է հասնում թէ Գարիբալդի սպանված է:
Մի սարսուռ էր, որ անցաւ հերոսուհու երախներով.
այնպէս ձեւացրեց, իբր թէ դժբաղդ արկածի ազդե-
ցութեան տակ ուժաթափ էր եղած և հպատակված.
յետոյ, երբ գիշելը բաւական առաջցել էր արդէն
և պահապանները քնոյ մէջ ընկղմված էին, թեթե ու
զգոյշ քայլերով դուրս ելաւ այն վրանից, ուր նա
գրված էր Հսկողութեան տակ, և յուսահատ վազեց
դէպի պատերազմի դաշտը: Երկար նա թափառեց դի-
ակների մէջ. որոնցից անթաղ մնացածների գլուխնե-
րը բարձրացնում էր, վնասուիլով նրան, որը գտնելու
համար դորում էր, և ազօտ լուսնկայի տակ անձ-
կանօք հետազոտում էր վէրքերից և մահւան դրօշմից
սոսկալի երեսոյթ ստացած դէմքերը: Արշալյոսը սկսում
էր արդէն երեալ, երբ նա վեր կացաւ արիւնաթաթախ
գետնից, դէմքն ուրախութեան ճառագայթների մէջ.

Իր Յովսէփիը վտանգից զերծ եղած պէտք է լինէր: Եւ
այն ժամանակ, առանց աչքի առաջ բերելու վտանգ-
ները, միայն իր անհուն սիրոյն վատահելով, նետվե-
ցաւ անհուն անտառների մէջ, որոնք տարածված էին
իր և հանրապետականների բանակի մէջ տեղ, և ուժ
իր և հանրապետականներից յոդածութիւններից ու յանդրգ-
օրւայ աննկարագրելի յոդածութիւններից ու յանդրգ-
օրւայ աննկարագրելի յոդածութիւններից ու յանդրգ-
օրւայ վերստին հասնելու իր Յովսէփին:

Վաստամիների ծովային պատերազմները պէտք է
նորոգվէին վերստին: Գարիբալդի մէկնում է Սան Սի-
նորոգվէին վերստին: Վարիբալդի մէկնում է Սան Սի-
մոն՝ նաւեր շինել տալու նպատակով: Անիտան մի քա-
միս առաջ երեկեցած այն աշխայդ, կայտառ երի-
նի ամիս առաջ երեկեցած այլ ևս, մայր պիտի գառնար: 1840-ի
տասարդուհին չէր այլ ևս, մայր պիտի գառնար: 1840-ի
սեպտեմբեր 16-ին նա տվեց Գարիբալդիին իրանց սի-
սեպտեմբեր և հայրը համբուրելով իր անդրա-
նիկ պտուղի ճակատը բացականչեց:

— Փոխանակ մի սուրբի անուն, նրան պէտք է
կոչենք մի մարտիրոսի անունով: Այս երեխան պէտք է
անուանվէ Մէնօտտի:

Հազիւ անցած էր տասն երկու օր: Գարիբալդի
մէկնած էր դէմ գնելու իր վրայ ուղարկված զօրքե-
մերի խմբի: Մասնագուէ հրամանատարը, որի մա-
րի մի խմբի: Մասնագուէ հրամանատարը, որի մա-
րի խօսեցանք եօթերորդ գլխում, լսելով որ Սան Սի-
մոն անպաշտպան է թողված, ուղեղ այնտեղ է վա-
ճան լսում է յարձակման աղմուկը, գուրու-
զում: Անիտան լսում է յարձակման աղմուկը, գուրու-
զում: Է ցատկում անկողնիցը և իր Մէնօտտին հետն առած,
ները խառնվում էին հասարակական բարիքի հետ, քաշ-
ները խառնվում էին հասարակական բարիքի հետ, գաշ-

գեցաւ Ռիօ Գուանդէից ուղղվեցաւ դէպի Մօնտէվիդէօ:
Ուրիշ վտանգաւոր ձեռնարկութիւններից յետոյ՝ Գա-
րիբալդի, նշարելով, որ անհատական փառասիրութիւն-
ները խառնվում էին հասարակական բարիքի հետ, քաշ-

ՅՈՒՂԱՎԱՃԱՌԻ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ.

Արագընթաց ձիու վրայ ալանում էր մի մարդ, ինչպէս նետ, արևելեան ընդարձակ, անհուն մարզագետինների միջով։ Այն ընդարձակ ամայութիւնները բըսնակված են ցուլերով, որոնք ապրում են այնտեղերը վայրենի ազատութեան մէջ։ Զիաւորը նետում է պարանը, անդամալուծում է հուժկու կենդանու շարժումները, դարձնելով նրան դիւրաթեք և ընտանի։

Այդ ձիաւորը Գարիբալդին էր։ Այնքան պատերազմներ մղելուց, այնքան տանջանկներով տառապելուց, ՈՒԽ Գ.Ա.Ն.Դ.Է. Հանրապետութեան համար հինգ տարի շարունակ հարիւր անդամներ կեանքը վտանգի տակ դնելուց յետոյ, Գարիբալդի մեկնում էր այնքան աղքատ, որ ճանապարհորդութեան միջոցին թէ իրան և թէ իր փոքրիկ ընտանիքը պահպանելու համար պարտաւորվեցաւ ցուլերի մի երամակ ժողովել, որպէսզի ընտանեցնէ նրանց և ճանապարհին ծախէ։ Բայց դիւրին չէր քշել տանել այդ կենդանիներին, որոնք զուրկ էին որ և է կարգապահութիւնից, և ՈՒԽ Նէգոօ-ից անցնելիս՝ քիչ էր մնացել որ գետը քշեր տաներ նըրանց։ Ի՞նչ արաւ նա յուսահատութեան մէջ. բոլորն էլ մորթեց և կաշիները ծախելով, հարիւր սկուդ¹⁾ ձեռք բերաւ, որոնցով հաստատվեցաւ Պօնտէվիդէօի մէջ։

Փողերը շատ շուտ են վերջանում. և այն ժամանակ Հրամանատարը փոխվեցաւ թուաբանութեան ու-

սուցի։ Աւրում էր ամենաանձուկ կեանք, սակայն սիրություն Գարիբալդիի սիրուն էր։

Մէկ օր հանդիպում է իր մի հինւորին տեսնում է նրան նիշարացած և ամբողջ ցնցոտիներում։

— Պահանջման է եթէ կարող լինէիք տալ ինձ մի շապիկ՝ կատարեալ ծառայութիւն արած կը լինէիք ինձ, ասում էր նրան զինւորը։

— Ի՞նչպէս... Շապիկ չունես, հարցրեց Գարիբալդի։ Եկ ինձ հետ։

Տանում է նրան մօտիկ անտառակը և առանց ուշացնելու, վայից հանելով իր սեփական շապիկը, տալիս է նրան։ Տուն հանելուն՝ Անիտան հարցնում է նրանից։

— Ո՞ւր է շապիկ։

— Ո՞ւշուառ մէկ արարածի տվի, որին հանդիպեցայ փողոցում, պատապիսանում է Գարիբալդի։

— Ո՞ւ, թշուառներս... բայց գիտե՞ս, որ էլ ուրիշ մէ հատ չունես։

— Ասկ այսպէս, պատապիսանեց փիլիսօփայօրէն Գարիբալդի, կոճկելով հագուստը մինչև ծնօտի տակ մարդ առանց նրան էլ լւա է ապրում։

Բայց կարող էր արդեօք երկար ժամանակ շարունակել իր խաղաղ ուսմունքները։

Իր շուրջը բորբոքվում էր կոփիւր, և լօգարիթմայի տախտակները, թէօրէմանները պէտք է մի կողմ դրվէին, երբ լովում էր նոր պատերազմների ժխորը։

1) Մէկ սկսուղը արժէ հինգ ֆուսնկ։

ԻՏԱԼԻԱՅԻ ՊԱՏԻՒԸ ՄՈՆՏՎԻԴԻՕՑՈՒՄ.

Տառը մեծ նաւ շրջապատում են երեք փոքրիկ նաւերի: Պանամայի ջրերումն ենք. տառը նաւերը պատշաճում են բուէնօս-Այրէս-ի վայրենի դիկտատօր Ռօզանին. երեք նաւերը Մօնտէվիդէօյի Հանրապետութեան: Առաջինները դրված են այլ և այլ յաղթութիւններով նշանաւոր հանդիսացած անգլիացի ծովապետ՝ Բուօունի հրամանատարութեան տակ. միւսները գարիբալդիի հրամաններով են շարժվում, որ զիջնելով Մօնտէվիդէիանների թափանձանքներին, հրաժեշտ տվեց իր գալոցին և թուաբանական պարապմունքներին, փրկելու համար տատանվող ազատութիւնը:

Երեք օր շարունակ կրակ է, որ տեղացնում են որմբածիգները և մերոնց ռազմամթերքները պակասում են:

— Կոսորեցէք խարիսխների շղթաները և գործածացէք նրանց որպէս միտրայլ, որուում է գարիբալդիի ձայնը: Բուօուն դադարեցնում է կրակը: «Անձնատիի ձայնը: Բուօուն դադարեցնում է կրակը: «Անձնատուր եղէք ո, աղաղակում է նա Գարիբալդիին ձայնատարի միջոցով:

— Կայս և առաջ մայր, պատասխանում է հերոսը: Եւ կրակն առաջանից աւելի ու աւելի կատաղութեամբ շարունակում է: Վրայ է համում դիշերը. երրորդ գիշերն էր այդ, որ Գարիբալդի չէր քնել: Շղթաներն էլ արձակվեցան թշնամիների դէմ. Գարիբալդի մտաբերում է այն բոլորը, որ նա արաւ Լագունայում, և մտածում է նոյնը կրկնել և այս անգունայում, և մտածում է նոյնը մակուները, նրանց մեջ փոխադրում է իր մարդկանց և անց է կա-

ցնում թշնամի նաւերի միջով: «Ամենից առաջ վիրաւորվածները, հրամայում է նա ցած ձայնով: Մի քանի ժամեւայ մէջ բոլորն էլ եղերը ելան: Ինքը և Անիտան ամենից յետոյ թողնում են նաւը: Այն ինչ իջնում էին իրանց մակոյկը, երբ յանկարծ թնդում է մի սարսափելի պայթիւն: Մօնտէվիդէօյի երեք նաւերըն ամբողջ մի բոց են կազմում. իսկ թշնամիները կատաղութեամբ և նախատված անձնասիրութեամբ դիտում են իրանց ձեռքերի մէջ ապահով կարծված որսի փախուստը:

Ծովեղում կանգնած են առջևնտինեան զինւորները և Գարիբալդի համախմբում է իրայիներին և սուրերով ու սուրիներով (սազմամթերք այլ ևս ըռնէին) յարձակվելով թշնամիների ստուար բազմութեան վրայ, սարսափ ու շփոթութիւն են ձգում նրանց մէջ և ճանապարհ բաց անելով իրանց համար, ողջ և առողջ հասնում Մօնտէվիդէօ, որ ընդունում է նրանց յափշտակված ցնծութեամբ: Ծափահարութեամբ:

Այս զինւորները վագրեր են, ասում էին առջևնտինեան թշնամիների զօրապետին:

— Որոնց հրամայում է մէկ առիւծ, պատասխանեց նա: Անցնում են մի քանի օրեր: Բուէնօս Այրէսի նաւատորմիղը մօտենում է Մօնտէվիդէօյին և սաստիկ նեղը գնում նրան: Գարափը ծածկված էր խիտ մառախուղի մէջ: Գարիբալդի տասներկու անյորդդող մարդիկներ վերցնելով իր հետ, նետվում է մի մակոյկ մէջ և անցնում թշնամիների ջրերը, որպէսզի քննէ և իմանայ նրանց զօրութեան չափը: Վեց-թնդանօթեան մի գոլէտ (խոշոր արագաստանաւ) նկատում է նրան և հետևում. սակայն հերոսը խոյս տալով, ձգում է իրան մի եղեգներով ծածկված խորշի մէջ: Զուրը ծանծաղ լինելով գոլէտան չէ կարողանում հետեւ նրան, բայց շեղ

գիրք բռնելով խափանում է խորչի ելքը։ Գիշերը գա-
րիբարդի ասում է իրայիններին։—

— Ամենքդ էլ ծովը և լողացէք առանց աղմուկին:
Արեն ատամների մէջ սեղմած՝ մօտենում են նաւին,
առանց նկատվելու թշնամիկց. գոլէտի կողերից մագլցելով
բարձրանում են վեր և յանկարծակի ցատկելով տախ-
տակամածի վրայ, սպանում են պահապաններին: Պահապան
զօրքը զարթնում է սարսափահար. Գարիբալդի հրամա-
յում է նրանց զէնքերը վայր գնել և անձնատուր լի-
նել: Մի քանի վայրկեանում նաւը նուածված էր. Գա-
րիբալդի անմիջապէս պարզում է հանրապետական դրօ-
շը, թնդանօթների բերանը դարձնում թշնամու միւս
նաւերին և կայծակներ թափում նրանց վրայ՝ կշաբերց.
ի վերջյ, խարիսխները վերցրած՝ առաջնորդում է Մօն-
տէլիդէօ այն նաւը, որը նուածել էր այնքան յանդրդ-
նութեամբ:

— Պարիբալգի թալիսման ունի, ասում էին Ամերիկայի ժողովագները, ինչպէս յետոյ նցին ասում էին խտալացիները։ Կրան ոչ մի զէնք չի դպչիլ։ Կա ձեռքով քշում հեռացնում է գնդակները, ինչպէս մէկ ուրիշ՝ ճանձները։

Պատմէվիթէյում գտնվում էր քրանսիական մի Աւ-
գէռն, որ փառաւոր քաջութեամբ կուռում էր Հանրապե-
տութեան համար: Շատերն ասում էին. „Գարիբալդին
կտրիճ է, սակայն միւս իտալացիները երկօտ են և վա-
խենում են պատերազմների կրակի առաջ երևալու:
Այս վատութիւնն է պատճառ, որ Նրանք սարուկ են իրանց
շայրենիքում:“

Այդ մեղադրանքը լսում է գարիբալդիի հսկոյն և եթ գնում է և բաղնում այն բոլոր խտալացների աները, որոնք գտնվում են Խօնտէվիզեցում, և մի քանի օրում կազմում է մի լեզեօն՝ վառված պատերազմելու տենչով:

—Երկու բան, ասում էր Նա նորակազմ զինոր-
ներին, պէտք է ցոյց տանք մենք. որ իտալացիները գի-
տեն կռւել և որ յօժարակամ զոհ կը բերեն ե-
րանց կեանքն աղատութեան դատի համար:

Այս զինուորաների հետ շատ յաղթասակոսը կամ
տակեցան և այն կողմերում շատ պատւառը հանդի-
սացրեց իտալական անունը, մասնաւորապէս Զէռոօօի,
Տրէս Կոռոչէս-ի և դէ լա Բայադա-ի երեք դէպէբէրը
մեծապէս նպաստեցին իտալական անուան փառքին: Մի
քանի կոիւներում իրան ընկերացան մի քանի նեգր-
ներ, որոնք շատ քաջ հանդիսացան և մեծ սիրով
կապված էին գարիբալդիի հետ. Նրանցից մին, մաւր
կապված էին գարիբալդիի հետ. Նրանցից մինչև իտալիա:
Անգլիաու, նրան ընկերացաւ նոյն իսկ մինչև իտալիա:

Ամենանշանաւոր իրողութիւնը, որ կատարեցիս ու
տալացիները, դա՝ Սանտ Անտոնիօյի գէպքն էր, Սալ-
տօյում: Գարիբելդիին յանձնված էր պաշտոն 148
չետևակներով և 20 հեծեալյուրով զբաղեցնելու 1500
զինւորներից բաղկացած թշնամուն, որպէսզի Մօնտէ-
զինւորներից կարողանային յետ նահանջել:
Վիդէօցիները կարողանային յետ նահանջել:

— Այսի դէմ մէկ ենք, աղալազկուս է Դարրւ-
բալդի իրայիններին. աւելի լաւ, որքան նուռազ լինենք
այնքան աւելի մեծ կը լինի փառքը: Խնայեցէք վառօ-
դը, գործածեցէք միայն սուինները:

Արանց գտնված տեղից ոչ հեռու բարձրանում
էր մի տապէռա, այն է մի տնակ՝ հաստատված չորս
գերանների վրայ և ծածկված փսխաթով. այնտեղ
հաւաքվեցան մերոնքը: Երեք հարիւր թշնամիներ ա-
ռաջանում էին արագընթաց. երեք բաւական մօտեցան՝
ողջունվեցան հրացանների մի պայթիւնով և անմիջա-
պէս յետոյ՝ սուխն ի ձեռին յարձակումով: Հետեւակ-
ների կարգերը խառնվեցան: Առաջանում է հեծելազօ-
րը, հանդիպում է սուխնների պարսպի: Թշնամիները
վայր են իջնում ձիերից և հետիւնն կռւում, սակայն
մերոնքը և ոչ մի ոտք յետ չեն նահանջում: Կազմը-
վել էին սրանց շուրջը գիտեների ու վիրաւորների շեղ-
ջակյտեր, որոնք ծառայում էին որպէս մարտկոցներ:
Հրացանաձգութեան հետեւում էին մերոնց
Ամենմի հրացանաձգութեան հետեւում էին մերոնց
կողմից իտալական հայրենասիրական երգեր: Թշնամի-
ները մնացել էին զարմացած և ոչինչ չէին հասկանում:
—Ուսպամթերքները վերջանում են, աղաղակում
է սարսափով մի լեգէօնառ:

— Առաջնաժողովի մօտ կիսունեցէք, պատասխանում՝
Գարեգիլիքի:
Եւ մինչ ոմանք պատասխանում՝ Են թշնամու հար-
ռուածներին, ուրիշները խուզարկում են ընկածներին և
հաւաքում փամփուշները։ Հերոսական կոիներ, մե-
նամարտութիւններ էին գրանք, արժանի Արիօստի եր-
գերին։

1846 թւականի փետրվարի 8-ին էր, որ առաջ ունեցաւ այդ ընդհարումը։ Կոխել կէս օրից սկսելով, շարունակվեցաւ մինչև կէս գիշել մծ սաստկութեամբ։ Երկու կողմից էլ ծաբաւից կոտրվում էին։ Մերոնցից միայն հարիւր հոգի էին մնացել կանգուն, բոլորն էլ շամարեալ վիրաւոր ու ջախջախված։ Թշնամու կորուստը, մեռած ու վիրաւոր, 500 էր։ Աերջ ի վերջոյ, առջէն-

այնեւանները յոդնած, յուսահատված ու նուսատացած՝
պարտութիւն խօստովանեցան. իսկ Գարիբեալդի բոլոր իր
վիրաւորների հետ մտնում էր Սանտ Անտօնիո, անց-
նելով սքանչացած ժողովրդի ցնծական աղաղակ-
ների միջնվէ: Հանրապետութեան կառավարութիւնը երբ
իմացաւ այդ դղզեցուցիչ իրողութիւնը, Գարիբեալդին
բարձրացրեց գնդապետից (colonel) զօրապետի աստի-
ճանին, նրան յանձնեց Մօնտէվիդէօյի հրամանատա-
րութիւնը, հրավարտակով յայտարարեց, որ իտալական
լէգէօնը բանակի բալոր հանդէսների մէջ պատի-
տեղն ունենայ, իսկ զրօշակի վրայ ոսկելին տառերով
գրպեցաւ. «Նշան 1846 փետրվար 8-ի իտալա-
կան լէգէօնին՝ գորեթալդին հրամանատա-
րութեան ներքոյ: Բացի սրանից, իւրաքանչիւր լէգէօ-
նառի մի-մի ժապաւէն արվեց թէկի վրայ կապելու՝ հե-
տեւալ գրութեամբ. Անպատճելին էր. կուեցան
8 փետրվար 1846: Գարիբեալդի բացականչում էր
իր յափշտակութեան մէջ:

XI

ՆԱԽՆԻ ԱՆՇԱՀԱՄԴՐՈՒԹԻՒՆԸ.

— Օօրակարը, ուր է զօրավարը. կարելի՞ բան է,
որ գալիքարդին տեսնելու համար հարկ լինի անպատ-
ճառ, որ մարդ իր գլուխը չարդէ:

Այդ կերպով կանչող և մամացողը Լէնէ ծովա-
պետն էր, որ երեկոյեան ուշ ժամանակ մասնելով Մօն-
տէլիկէօ զօրավարի տունը, չէր իմանում որ կողմից գը-
նար, այնքան մռնթ էր ներսը:

— Անհտա, կանչեց գարիբալդի մօտիկ սենեակից, նա-
խասենեակում մարդ կայ, ճրագ վառիր:

— Ճրագ վառել, պատասխանում է Անհտա. լաւ գի-
տես, որ և ոչ իսկ, մէկ սօլդի (Յ սանտիմ) ունենք մի
մոմ գնելու:

— Ճշմարիտ է, բացականչեց գարիբալդի, և անցաւ
նախասենեակը, որպէսզի այցելուին ներս առաջնորդէ, որ
յայտնել էր իր անունը:

— Երեցէք, ծովապետ, ասաց գալիբարդի. բայց
չանրապետութեան հետ կուած գաշինքիս մէջ մոռացել
եմ մոցնելու մի մոմի իրաւունքը: Սակայն և այնպէս
գուք պէտք է եկած լինեք ինձ հետ խօսելու և ոչ
մէ ինձ տեսնելու, չետևաբար կարող ենք մութի մէջ մնալ:

Այս, գարիբալդին, այն յաղթական զօրապետը,
Մօնտէվիդէյում ապրում էր զինւորի բաժինով, որ հա-
ւասարապէս ստանում էր ամեն-մի լէդէօնառ:

Հետեւեալ օրն իմանալով այդ, պատերազմական
մինխատրը, Պաքէկօ ի Օքէս, անմիջապէս ուղարկեց 500
ֆրանկ: Գարիբալդի ըլուց վերաւորել բարեկամին, մէր-
ժելով այդ գումարը. սակայն փութաց բաժանել այն՝
Սանտանիյում ընկած իր ընկերների այրիներին: Ի-
րան համար պահեց մի ֆրանկ, որը տվեց Անհտային:

— Առ, ասաց նրան խորհրդաւոր կերպով. գնիր
մոմ, միայն հաշւով գործածիր, որպէսզի ուրիշ անդամ,
երբ ծովապետը գայ ինձ տեսնելու, մեզ մթութեան
մէջ ըստնէ:

Ջը պէտք է սակայն մեղադիր լինել չանրապետու-
թեան իրեւ ապերախտի: Կա ավել էր իտալական Վէ-
դէօնին հողեր, ադարակներ ու հօտեր. սակայն գարի-
բալդի պատասխանեց.

— Խտալացիները պատերազմում են ազատութեան սի-
րց համար, ոչ թէ շահի ցանկութեամբ:⁴

Եւ նուէրը մէրժվեցաւ: Իր լէդէօնառները վարժ-
ված էին զըկանքների, և մի արշաւանքում, երբ միսը
պակասեցաւ, իրանց ձիերը մորթեցին ու կերան: Յետոյ,
երբ թշնամու վրայ յարձակում գործեցին, նրանցից վեր-
ցրին ձիեր, որոնց պէտք ունեին, որպէսզի կերվաճների տեղը
լրացվէր: Մէկ ուրիշ անդամ գերիէ բռնում մի թշնամի
նաւ. աւարը բաժանում է բոլոր իրայինների մէջ, իսկ
իր բաժինն աւելացնում է ամենից աւելի պէտք ունե-
ցոլների բաժնի վրայ, ասելով նրանց. ԴԱՌէք այս,
ձեր որդիների համար է:⁵ Նաևի վրայ գտաւ փողի մէկ
ահագին գումար. առանց ձեռք գոցնելու՝ ուղարկեց
Մօնտէվիդէօյի գանձին: Իր բաժնի համար այս անդամ
մնաց միայն երեք սօլդի:

XII

1848-Ի ՀՐԱԲՈՒԽԸ.

— Անհտա, իմ Անհտա, աղաղակեց գարիբալդի
մէկ օր, 1847 թ.: Հայրենիքս պէտք է տեսնեմ, նաև
մայրս: Կը տեսնես, թէ որքան գեղեցիկ է իտալիան: Ոիրսս
գուշակեց: Հրաբուխը, որ նկարել տվի մեր Լէդէօնի
գրօշակի վրայ, թնդում է և պատրաստվում է բոցեր
ժայթքելու...

— Ի՞նչ է պատահել որ, ինդրեց նա:

— Արդգա՛, պատասխանեց գարիբալդի, դնելով
նրա առաջ մի քանի լրադիրներ: Հում երերման նը-
շան է տալիս: Տեղի է ունեցել մէկ անլուր իրողու-
թիւն: Ընտրված է մէկ աղատական, պատւաւոր պապ:
ով կարող էր ենթադրել այդպիսի մի հրաշք:

Առանց ժամանակ կորցնելու, վազում է իր ա-
մենասիրելի բարեկամի, գնդապետ Անձանիի մօտ: Ո-

գեռված ճարտարախօսութեամբ հաղորդում է նրան
իր յափշտակվելը և համզում է նրան գրել իր հետ
միասին մի նամակ քահանայապետական փոխանդրդին
(Numzio), յայտնելու համար, թէ իրանք նուիրում են
իրանց բազուկները և սրտերը Պիոս թ. ին: Քահանա-
յապետի նկատմամբ հայրենասիրական պատրանքի շրջանի մէջ էինք:

Լէգէօնառները երբ լսում են այդ նորութիւնը, ու-
ղում են հետեւ իրանց պետին: Ուրիշ իտալցիներ
ստորագրութիւն են բաց անում գէպի Խոալիա մէկ
արշաւախումբ հանելու նպատակով: Մօնտէվիդէոյի
կառավարութիւնը խնդրում է Գարիբալդիին, որ մնայ,
բայց ի զուր. հերոսը պատասխանում է անհամբերու-
թեամբ.

— Չեմ կարող, թիջլ տվէք ինձ գնալ, ապա թէ
ոչ կուշանանք և կը հասնենք այն ժամանակ, երբ ար-
դէն ամեն ինչ վերջացած կը լինի:

1848-ի յունիսի 24-Ն էր. անձկութեամբ հա-
մակված մէկ ամբոխ խոնվում էր Կիցցայի նաւահան-
գստի վրայ: Խարսի վրայ կանդնած նաւերի պարան-
ների վրայ երևում էին թիապարտներ և պաշտօնա-
կաններ. բազմաթիւ նաւակներ գնում էին հեռու մին-
չե բաց ծովը: Հազարաւոր բերաններից կրկնված մէկ
աղաղակ տարածվեցաւ ծովեղերքի վրայ:

— Աչա՛ նա, աչա՛ նա:

Եւ մի սպիտակ առագաստ նկարվեցաւ հեռուն,
հօրիզոնի վրայ:

— Բացվեցէք, բացվեցէք. գալիս է սին եա Ռո-
զա... գլխարկները վայր: Կեցցէ՛ Գարիբալդիի մայրը:

Պատկառելի տիկինն առաջանում էր գանդաղա-
քայլ. նրա կողքերիցը գնում էր Ամերիկայի բարի
և աշխայք աղջիկը, Անիտա Ռիվեռաս, իր Յովսէփի

հերոս լնկերուհին, որ մի քանի ամիս առաջ Մէնօտ-
տիի, Թիչչիօտատիի և ամենակայտառ Տէրէզիտայի հետ
եկած էր աւետելու նրան Սալտոյի յաղթական գա-
լուստը: Ոինեա Ռոզա (յիշում են գեռ ևս նից-
ցացիները), բոլոր այն անորոշ տարիներին, երեկոները
հաւաքում էր նաւահանգստի երեխաներին և ծնրա-
գրքել տալով, աղօթք էր ասել տալիս նրանց իր Յով-
սէփի համար...

— Ասպէռանցա (յօյս). նաւը անուանվում էր
Էսպէռանցա: Նայում է մարդարէական անուան,
որի վրայ ծածանվում է եռադոյն գրօշակը:

‘Նաւը մօտենում է. լէգէօնառներն իշում են նա-
ւակները: Գարիբալդի ցատկում է քարափի վրայ եւ
իրան գտնում սուրբ մօրը գրկում:

Վակայն շատ կարձատե եղան ընտանեկան գուր-
գուրանըին նուիրված վայրկեանները. նրան այրում էր
ժամ առաջ հայրենիքի թշնամիների հետ չափելու
տենչը: Թառչում է Տօսինօ. սակայն նրան ընդունում
են սառնութեամբ, որի մէջ երեւում էին և կասկած, և
նախանձ: Նրան խորհուրդ տվին գնալ կառլո Ալբէռ-
տո թագաւորին և նրա հետ խօսել: Գարիբալդի դի-
մեց թագաւորին և խօսեց ուղղակի:

— Պատերազմեցի, ասաց նա, օտար հողի վրայ,
հիւրընկալ մի երկրի աղատութեան համար, բայց այն
գեռ իմը չէ: Այժմ հասած եմ իմ հաւատարիմների
խմբի հետ հայրենիքի պատերազմները մղելու համար:

Ի՞նչ պատասխանեց կառլո Ալբէռտո այդ համար-
ձակ լեզուին: Պատասխանեց, որ գովում է աղիւ
զգացումները, փափագում էր նրան գործի մէջ գնել,
սակայն չէր կարող, չէր իմանում.... վերջապէս աւե-
լի լաւ կանէր, եթէ գնար Տօսինօ և մինիստրների
հետ խօսեր:

Ահա թէ ինչ էր գրում Գարեգալդի (Նամակն
առաջ է բերված տիկին Եսաիէ Մարիօ-ից՝ Տըէվէսի
կողմից տպված կենսագրութեան մէջ) այն խօսակցու-
թեան մասին, որ ունեցաւ Կառլօ Ալբէտացի հետ.—
“Տեսայ նրան, տեսայ այն մարդուն, որ սպանել էր
Խտալիայի ամենաազնիւ զաւակներին, որ մահւան էր
դատապարտել ինձ և շատ ուրիշներին և հասկացայ իր
ընդունելութեան ցրտութիւնը։ Եւ սակայն ես հաւա-
սար եռանդով կուղէի ծառայել Խտալիային մի թա-
գաւորի հրամանների տակ, ինչպէս և Հանրապէտու-
թեան տակ և միևնոյն ձանապարհի վրայ կառաջնոր-
դէի իմ երիտասարդ մարդկանց, որովհետեւ նրանք
կատարեալ վստահութիւն ունեին իմ վրայ։ Խտալիան
անել մէկ, նրան ազատել անիծված օտարականից, այս
էր իմ և այն ժամանակւայ իմ բոլոր հայրենակից-
ների նպատակը . . .”

Պարիբալդի զոհելով ամեն անձնական պատիւ, գնում է կրկին Տօրինօ: Պատերազմական մինիստրը, Ռիչչի, ասում է նրան.

— զեղ համար տեղ չունենք: Գնացէք վենետիկ,
այնտեղ կարող էք թերևս ծովաշենութիւն անել...

Այս անպատճաճ առաջարկութեան զիմաց՝ զօրա-
վարն ուսերը բարձրացրեց։ Ակրալ զայրսթի զդացու-
մավ լի ման էր գալիս Պօ-ի գոների տակ, երբ հան-
գիպում է Զիակօմ Մէդիչելին, որ արդէն գտել էր
Մօնտէղիդէյում և ուղարկել Խտալիս՝ Հայրենիքին օդ-
տակար լինելու լաւագոյն կերպն ուսումնասիրելու նը-
պատակով։ Մէդիչին շատ ախուր լուր ունէր հալոր-
դելու նրան. գեռ նոր ընդունեց գնդապետ Անձանիի
վերջին հառաչանքը։

— Ըստ Ճանապարհի, բացականչում է Գարիբալդի:
Թող վերջ տրվի ամեն յապաշտան: Գնանք Միլան և

պատրաստենք մի գունդ յանուն մեր կողցրած քաջ
Անձանիի:

Արաբն ու գործը յաջրդում են միմեանց Գարիբ-
բալդիի մէջ, որպէս փայլակն ու որոտը: Միլանի ժա-
մանակաւոր կառավարութիւնը, ճշմարիտ է, չնորհում է
Կրան զօրավարի տիտղոսը, տալով իրաւունք կամաւոր-
ների մի բանակ կազմելու, որ Անձանի անունն առ-
նելու էր, բայց երբ իմացաւ, որ նոր զինւորների դրօշա-
կակիրը Յովսէփի Մաճճինին էր (այն ժամանակ Միլա-
նում), մերժեց տալ զէնքերը, տվածն էլ քիչ և ան-
բաւական: Համազգեստի համար նրանց տրվեցաւ խա-
ռութիւններում գտնված աւստրիացիների կտաւից: Մէկ
ուրիշը նրա տեղ կը վհատվէր. բայց Գարիբալդին
ունի ամենահասարակ կտաւով պատրաստված հա-
նչ: Այդ ամենահասարակ կտաւով զգացաւորված զին-
ւորներով զգեստաւորված զինւորների հետ նա գը-
նուածներով զգեստաւորված զինւորների հայրենասիրա-
նաց Բէռդամո. գունդը հնչեցնում էր հայրենասիրա-
նաց երգեր միսիթարիզելու համար փոխարէն այն ան-
կան երգեր միսիթարիզելու համար փոխարէն այն ան-
կան շուրջ հագուստ հագուստներին: Սակայն անմիջապէս
շուրջ կանչվեցաւ. այն ինչ հասած էր Մօնձա՝ գրվե-
ցաւ նրան. —

—ԱՐԵՎԱՐԴ և ԿԱՆՈ ԱԼՔԵՄԻՍՏՈՆ ՊԱՀԱԳՐՈՎՈՐԾՄԱՆ
ԿԱՐԱԳՐԻՆ: ՓԱԽԱՔՔ, ԳՐՎԵցՔ:¹⁾)

Պարհեալդի սաստիկ զայրացած էր. սակայն նոյն այդ միջոցին աւստրիական մի հեծելագունդ սպառնում

1) Այս դէպքերը վերաբերում են խտավական առաջին ավագանութեան աւստրիական կառավարութեան դէմ: Այս ավագանութեան աւստրիական գլուխ անցած էր, ինչպէս յայսին է, Կառոյ Աւստրիական կառավարութեան գլուխ անցած էր: Սակայն ապատամբութեան, չը այսին էր պիտի հայրենիքի եւ ազատութեան սրբով փառակած իշխան, չը այսին էր իշխանութեան ուժեղ դիմադրութեան եւ նոյն իսկ մեջ քանի փայլուն տալացների ուժեղ դիմադրութեան եւ նոյն իսկ մեջ քանի փայլուն յաղութեան երեք, որ տարին թշնամների վրայ, նուածվեցաւ աւստրիական զօրքերի անհամեմատ աւելի մծ թւի ոյժի տակ: Կառտրիական զօրքերի անհամեմատ աւելի մծ թւի ոյժի տակ: Կառտրիական զօրքերի, իր խորտակված քանակով չափու հազ ապաստան ու Ավելուով, իր խորտակված քանակով չափու հազ ապաստան Միհան բառապում, որ ապատամբութեան կենտրոններից գտաւ Միհան բառապում, որ ապատամբութեան կենտրոններից գլխաւորն էր: Այդ ժնիաժամն էր, որ Գարեւալիք, որը Բէյ-մի գլխաւորն էր:

էր նրան: զնում է կօմօ. այնտեղ նրան հանդիպում է նոր հիսամթափումն. իր հինգ հազար զինւորներից մացել էին միայն երկու հազար: Չախորդ դիպուածը ցիրուցան էր արել տարակուսողներին: Եւ այդ ժամանակ նա սկսաւ այն յուսահատ գնացքը, կօմօ-ից վարեկէ, լադո Մաջջիոնէ-ի վրայ և Լուխնօյում (Բէկիաչչիայում), որի ընթացքում ծածանել տվեց եռագոյն դրօշակը, որ ցեխի մէջ էր թաթախված Միլանի խայտակաբար անձնատուր լինելով:

Զէնօվայի դուքսը մի ժամդարմ ուղարկեց Գարեթալդին, Հեռագրելով միենոյն ժամանակ, որ դառնայ և մանի պիեմոնտական հողը և յարգէ Աւստրիայի հետ կապված դաշնորը:

— Չեմ ճանաչում ո՞չ մի զինադադար, պատասխանեց Գարեթալդի: Խտալիայի զինւոր եմ և երդվել եմ կռւել Հայրենիքին թշնամու հետ մինչև կողքիս մէկ հատիկ ընկեր մնալը: Պատասխանեցէք, որ ես պահում եմ տվածս երդումները:

Ասաց և շարունակեց գնացքն ու կոիւր: Օդուտոսի 26-ին նա Մօռացցօնէ-ումն էր: Գրօշակը սուգի մէջ էր գրել: Այդտեղ իսկ տեղի ունեցաւ ամենաարիւնահեղ և փառաւոր պատերազմներից մէկը. ամերող ցերեկը և գիշերւայ մի մասը թշնամու առաւելակշուր զրութեան կատաղաբար գիմազրելուց յեռոյ, առաւօտեան ժամը 3-ին, առանց դադարելու պատասխանելուց հարուածների մըրկին, դուրս հանեց իր խըմ-

գամօ էր զնացել իր կողմից յարծակում գործելու թշնամիների վրայ, յետ կալվեցաւ օննելու Միանին, որ պաշարված էր թշնամիներից: Բայց մինչեւ նրա համեմը՝ թագաւորը շոտագոյն դաշնոր կուել թշնամու նոյն եւ խաղաղութիւնը վերահաստանել: Թագաւորի այս քայլը ծանր տշաճութեան առիջ տվեց կրակված սրբաւին իւ ազգամայստ տարքի մէջ առաջ երաւ դէպի նա ատելութիւն եւ նոյն իսկ թշնամինը, որից հազի պրաւ նրա կանքը:

Ժ.

բերն առանձին-առանձին այն երկաթի ու կրակի շըրջանակից, որ բոլորած էին նրա շուրջն աւստրիացիները. և յաջորդ օրւայ ծագելուն, երբ թշնամիները երրը. կողմերից մօտեցել էին, կարծելով, որ Գարեթալդին մէջտեղումն էր, իրանք իրանց տեսան կանգնած միմեանց գէմ, իսկ անյաղթելի հերոսն արդէն անհետացած:

— Գարեթալդին սատանայի հետ է կապված, ասում էին իւղձ աւստրիացիներն իրանք իրանց մէջ հագնում է իր կարմիր շապիկը և սատանան գեշերանց փախցնում է նրան օդի միջով:

Իսկ աւստրիացի զօրավար Դ'Ասպուէ, քիչ յետոյ, ասում էր պիեմոնտական զօրավարներին.

— Մի մարդ միայն կարող էր օդտակար լինել ձեր պատերազմին և այն դուք չը ճանաչեցիք. այդ մարդը Գարեթալդին էր:

Մինչ այս, մինչ այն, Գարեթալդի գտնվում էր Լուգանո-յում 29 մարդերով և գնդի զրօշակով, որ ծակված էր ընդունութիւն ունեցից: Լոյմարդիայի պատերազմը վերջացած էր:

XIII

ՀՐՈՄԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ.

Այս դէպքերի վրայից սահած անցած էին հինգ ամիսներ և աւելի: Պիոս I X-րդ փախած էր Բօռբոնի հետ¹⁾. Հուօմում, Աշհմանադիր ժողովի գահին միապատճեն էին ժողովուն երեսփոխան-միասին խմբված էին ժողովուն քառասուն երեսփոխան-միասին:

1) Գրիգոր Ժ. պատպի մահամից յետոյ, որ կատալարութիւնը մինչեւ կերքը կատաղի հակառակորդ հանդիսացաւ ամեն կարգի նորութիւններին, որից նկամուծումը երկրում ստիպողական

ները։ Այդ երեսիովսանների մէջ, որոնք ամենքն էլ սե
հագնված էին, շողշողում էր Մաշէռատայի ընտրեալ
Գարեթալգիի կարմիր շապիկը։ Բայց խօսում էր հայ-
րենատաէր Առմէլլինին։

— Այս էկ ամենասուրբ դաշնակցութիւն, ասում էր,
այն է, ժողովրդների դաշնակցութիւնը, մեծանում է և
օրից օք աւելի և աւելի հոծ կերպարանք ստանում. նա
պէտք է խոնարհեցնէ և նուաճէ, ամեն տեղ ուր որ պէտք
կայ, թագաւորների դաշնակցութիւնը: Դուք նստում էր,
ովք քաղաքացիներ, երկու մեծ ժամանակների (երօուե)
գերեզմանների մէջտեղ. մի կողմից կանգած են կեսար-
ների խտալիայի աւերակները, միւս կողմից՝ պապերի ի-
տալիայի աւերակները. մեզ է ընկնում կառուցանել մի
շինութիւն, որ կարելի լինի գնել այն փլատակների վրայ...
ժողովրդի խտալիան:

Պայմերցան որոտագին ծափահարութիւններ, և երբ
սկսաւ կատարվել երեսփոխանների կոչումը, Կանինօ-ի
իշխանը վեր կացաւ և աղաղակեց. „Կեցցէ Հանրապե-

տութիւնը: «Երբ կարգն եկաւ գարիբալդին, սա ոտքի կանգնեցաւ, բայցականչելով».

— Անչուր ժամանակ կորցնել ձեւերի համար. յանցանք է մի վայրկեան ուշանալը. կեցցէ Հանրապետապետութիւնը: 1849-ի փետրվարի 5-րդ օրն էինք. ումանք կամենում էին երկարել նիստը, որպէսզի նոյն օրն իսկ հռչակվէր Հանրապետութիւնը: Սակայն 8-րդ օրւայ նիստի մէջ հռչակվեցաւ Հանրապետութիւնը. և գարիբադի, ըստ նայած որ հիւանդ էր, չերմով տառապում էր, գնաց ժողովը և իր գուէն տվեց, և այդ առիթով պատմում էր բարեկամներին.

— Եղեք տարի առաջ այս ժամկե յաղթական լըտ-
նում էի Սալտօ. Թերես բարեգուշակ նշան է դա մեր
Հանրապետութեան համար:

Սակայն միւսոյն միջըցին Գրասնակայի կղերակասս-
րը դրդում էին իրանց կառավարութեանը մէկ արշա-
ւանք հանելու գէպի Հոօմ հրամանատարութեամբ Ու-
ղինո զըրավարի և երրորդ ծովակալ Գուէհուարտի, բաղ-

∂ . θ_0

կացած 40,000 մարդերից և 10 նաւերից, որպէսզի պահպատճեն պահպատճեն իր գահի վրայ:

Այստեղ մկումը է գարիբալդիի բաժնը։ Իր գա-
լուց ի վեր, Լօմբառդիայի պատերազմից յետոյ, իրան-
նուկիրել էր կրթելու և հրահանգելու այն բազմաթիւ-
կանաբներին, որոնք վաղում էին իր գրօշակի տակ։

Երբ իմացաւ օտարների գալու մասին, այն բոլորին,
որոնք նկատողութիւն էին անում նրան, թէ ինքը միայն
500 հրացան և 1264 մարդ ունէր, ասում էր արհա-
մարչոս գէմքով :

— Ա ն չ ո ւ զ ա յ ի թ ա ղ մ լ ։ պ ա ս տ ե ր ա զ մ լ ։ դ ա ն ս կ ն ե ր ո վ ։ և ք ա ս բ ե ր ո վ ։ կ ա ն ե ն ք ։

¶ ۱۰۷
¶ ۱۰۸

— Պարիբարակի այնպիսի հոգի ունի, որ ամեն դըմ-
ուարութիւն կը խօրտակէ: Խօսում է և գործում միտ-
քի այնպիսի յատակութեամբ, որի մէջ քիչերը կարող
են նրան հաւասարել:

Վային, սակայն, մի քանիսներ, որոնք չեն կարողաւ-
նում վարդվել Գարիբալդիի նման մի զօրավարի։ Դան-
դովո, որ նրա զինուորը եղաւ, գրում է, որ ոՒր նահա-
պետական պարզութեամբ նմանում է աւելի հնդկական
ցեղի մի գլխաւորի։ Ինըը և իր աւագ-սպայախումբը (éstat
ցեղի մի գլխաւորի) հագած են ծիրանի բլուզներ, ծածկում են
մեն ձեփ և տեսակի գլխարկներ, չունենալով ոչ մի
զինուորական զարդարանք։¹⁴

Բացի սրանից, պաշտօնեաներն իշխում էին ձից և
տանում էին թամբերը վրանի տակ. ունեին օտարութի
կարգեր, բերված Մօնտէվիդէյուց: Գարիբալդիի ետևից
աշտանակում էր թռչողութերով իր նիգր Մանգիառը, վը-
րոն գցած լայն վերաբեռն, զինված երկար նիգակով,
որի ժայրին ծածանում էր կարմիր դրօշակը: Ակայն

այս բոլորի հետ միասին՝ ամենալսիստ բարյականութիւնը թագավարում էր լէգէնի մէջ:

Համարականները նրանից վախենում էին. ժողովուրդը և երիտասարդները նրան սիրում յափշտակութեալը, և խտալիպի ամեն կողմերից դիմում էին գեպի չոօմ նրա հետ միասին թշնամու դէմ պատերազմելու համար. սրանց մէջ Լուչիանո Մանառա, Միլանի հինգ Օբերի¹⁾ գլխաւոր գործիչներից մին:

Ապրիլի 29-ին երեկոյեան, չուօմը ժխորի և սարսափի մէջ էր: Պատրաստվում էին ամրութիւններն ու պատճենները. յուզրումն ընդհանուր էր: Յանկարծ լըստրում է վազող ձիերի դոփիւն. ժողովուրդը իսկցն, մի կողմ թողած երկիւղը, խռնվում է եկողների ձանապարհի վրայ աղաղակելով. „Կեցցէ Գարիթալդի!“:

Նոյն ինքն արդարեւ, փութոյ պնդութեամբ կանչըլվեց պաշտպանելու Հուօմը։ Եւ ժամանակ կորցրած չէր։ Յաջորդ օրը ֆրանսիացիները 7000 զօրքով սկսան յարձակումը։

Յարձակման առաջին փորձը Պօստա Կավալլէջէռի հէտի վրայ կատարելուց յետոյ, որտեղից նրանց յետ մըղեցին արիաբար քաղաքական պահպան զօրքերը, թրշնամիները խուժեցին դէպի Սան Պանկուացիօ ասված դուռը, որի պաշտպանութեան արթնութեամբ հսկում էր Գարիբալդի իր 300 մարդերով։

Այդ մի բուռն կտրիճներով նա գէմ դրեց թրշնամու գնդերի բաղիւման և մի քանի վայրկեան ըստիպեց նրանց ի փախուստ դառնալ։ Այդ հսկայական կուռում տեսաւ նա հազարապետ Մօնտալդիի դիտապաստ ընկնին իր կողքին, գեռ ևս մատաղ հասակում, որ և Ամերիկայից եկողներիցն էր. տեսաւ Հայր Բասսիի, որ իր կողքին էր կանգնած, ձիռ սպանված ընկնիլլ մի հարուածի տակ. իր սրի գոտին ցտված էր մօսկէտից (Հրացան) արձակված գնդակից. երկու ուրիշ գնդակներ ծակած էին նրա պօնկօն. 300-ներից շատերը վիրաւորված էին կրծքից և բազուկները յոգնած ջատված՝ թշնամին գընդակահարելոց . . . Այն ժամանակ Գարիբալդի կարգի բերելով մնացածներին, յետ քաշվեց նրանց հետ և միացաւ պահեստի գումարտակին։ Այնտեղ արագաբար վերակաղմեց, յարդարեց շփոթված շարքերը և միանալով ուրիշ թարմ խմբերի հետ, որոնք տակաւին պատերազմ չէին արած, ընկաւ սաստկաբար թշնամիների վրայ, ուրոնք արդէն առաջացել էին մինչև դոները. ընդհարումը և կատաղութիւնն այնպէս ուժգին էին, որ ֆրանսիացիները, կորցնելով ամեն կարգ ու կանոն, սկսան յետ նահանջել և մերձակայ տներում ապաստան որոնել, որ և աջողեցան, սակայն ոչ երկար ժամանակով։ Գարի-

բալդի միայն երեք ընկերներով անձամբ առաջ նետվեցաւ նրանց հեռացնելու այն տեղից, և պաշարումն այնքան սաստկութեամբ տարաւ, որ երկար կուելուց յետոյ՝ ստիպեց նրանց յետ քաշվել, գերի տանելով նրանցից շատերին։ Այդ փառաւոր կախւը երկարացաւ մինչև երեկոյ յեան ժամը վեցը. Փրանսիացիները կուի տեղը թողին 500 մեռած և մօտ 600 գերի։

Յաղթութիւնը պակաս չէր Ամերիկայում տարածից։ Պատերազմը գաղարելուն պէս մօտենում է Գարիբալդիի վիրաւորներին և գրկելով նրանց, խանդադատանկորվ ասում։

— Արիացէք. Դուք Ընկնում էք Հուօմում Իտալիայի աղատութեան ու պատէի համար։

XIV

ՀԹՈՄԻ ՈՂԲԵՐԳԱՌԻՑԻՆԸ

— Խտալացիներն իտալացիների գէմ. թափել եղայրական արիւն։ Ե՞րբ արդեօք պէտք է գաղարէ Իտալիայի այս ճակատագրական անէծքը։

Այսպէս էր բացականչում ինքն իրան Գարիբալդի, գնալով յուղված քայլերով դէպի Վիլլա Բոնգէ-զէ, որովհետեւ՝ վերև պատմված յաղթութիւնից քիչ օրեր յետոյ՝ հրաման էր ստացել գնալու իր զինւորների հետ նապօլիտանների գէմ, որոնք իրանց թագաւորի առաջնորդութեամբ մոել էին հուօմէական տէրութեան մէջ, որպէսզի պապը վերստին գահը բարձրացնեն։ Հերոսի վեհ հոգու համար գա մի շատ ծանր զոհողութիւն էր. սակայն այս էլ պէտք է տանէր նա հայրենիքի և աղատութեան սիրոյ համար։ Իր զգացած վիշտն արտայայտելով իր զինւորներին, բացականչեց.

ւապօլիի ամբարիշտ թագաւորը մեղ եղայրաւսպանութեան է դատապարտում:

1849 մայիս 8-ին յարձակվում է նապօլիտանների վրայ Պալէստոփինառում. հանրապետական պատիւր յաղթող է հանդիտանում, բայց քանի քանի կեանքերի գնով: Մայիսի 19-ին վերստին յարձակվում է նրանց վրայ Վալէտոփիում. այստեղ իրայիններից մի քանիներ փախուստ են տալիս. ինքը կանգնում է ճանապարհի մշտեղը որպէսզի խափանէ նրանց փախուստը, սակայն վայր է գլորվում և թշնամու ձիերն անցնում են վըրայից, կուկրտելով ու ձմելով նրա ծունկերն ու ուրայից, կուկրտելով ու ձմելով նրա ծունկերն ու ուրայից, բայց մէկ ակնժարթում աչա նա ոտքի վրայ է, երեսում է զինորսներին իր սպիտակ թիկնոցով (runcho), խրախուսում է նրանց և Մանառայի լօմբառդական բէռսայլիօների¹⁾ հետ միասին մղում է թշնամիներին մինչեւ քաղաքի պատերի տակը: Սակայն նապօլիի թագաւորը միջոց գտնելով, աջողում է փախչել իր գնդերի հետ: Ունկ ասում են, որ Գարիբալդի իր անհամբերութեամբ պատերազմն աւելի շուտ սկսելով, արգելք եղաւ հանրապետականներին շրջապատելու թշնամուն և խափանելու նրա նահանջումը. ուրիշները թէ զօրավար Ռոսէլի, որ չուօմի զինորական իշխանութեան ներկայացուցիչն էր, չօգնեց նրան, ինչպէս պարտաւոր էր, բօռքները հալածելու միջոցին: Այսպէս, թէ այնպէս, Գարիբալդի գնում էր նապօլիտանի վրայ, ազգարարելով բնակիչներին, թէ նա գալիս էր „Կանգնելու հասարակաց հայրենիքի դրօշակը:“

Մինչ այս, մինչ այն, մեծանում էր եւրօպական մեծազրութեան մրրիկը Հանրապետութեան դէմ: Աւտորիացիներն առաջանում էին դէպի Բօլօնեա. Սպանի-

ացիները ցամաք էին դուրս գալիս Գիումիշինօ-ում, իսկ Գրանսիացիները վերսկսում էին թշնամութիւնները: Այն ժամանակ Գարիբալդի յետ կանչվեցաւ աճապարանքով չուօմի պաշտպանութեան համար և հազիւ հաղ ժամանակին կարողացաւ հասնել:

Յունիս 2-ի գիշերն իցել էր արդէն: Վիլլա Պամֆիլիի վրայ հսկող պահապանները տեսնում են, որ մի դրօշակ է բարձրանում այն կողմը: Խսկոյն ձայն են տալիս. “Ո՞վ է այն ո:”

— Պօմէսկան Հանրապետութիւն, լինում է պատասխան:

Սակայն մի բոպէում դրօշակն արդէն պահանորդի ուսին է. նրան հետեւում են գնդերը: Դրանք վեց հազար Գրանսիացի են, որոնք խարէութեամբ տիրում են այն կէտին: Աղաղակը և աղմուկը բերանից բերան անցնում են. Գարիբալդի դօկտօր Ռիպառիի հետ էր, որ նրա հին վէրքերն էր բժշկում. անմիջապէս իրայինների հետ, որոնք զարթնած էին աղմուկից, վաղում է դէպի Սան Պանկրացիո:

Գրանսիացիներն արդէն գրաւել էին բացի Վիլլա Պամֆիլիից, նաև Վիլլա Վալէնտինի և Վիլլա դէի Կուտասու Վէնտի: Գարիբալդի նրանց յետ է մղում սուբներով: Երկու կողմերից էլ վրայ են համաւմ նոր խմբեր. կուելը հսկայական կերպարանք է առնում:

— Վառջ, միշտ առաջ, աղաղակում էր Գարիբալդի: Թշնամին դուրս նետեցէք իր բունից. այս պատերի մէջ է չուօմի պաշտպանութիւնը, զէնքերի պատիւր և ամենքի փրկութիւնը:

Մէդիչի զօրավարը նշանաւոր եղաւ Վասչէլլօ ասված կազինոյի պաշտպանութեան մէջ, որի շուրջը կատարվեցաւ ամենակատաղի մարտը, որ տասն և եօթժամ տևելուց յետոյ միայն գաղար առաւ: Գրանսիա-

1) Խոտալական առաջին կարգի գործն է:

ցիները չորս անգամ աւելի կորուստ ունեցան:

Յուսահատ կոիւր նորոգվում էր ամեն օր: Այն չումում էինք, ուր սուսերամարտիչը (gladiateur) մաշացու կերպով վիրաւորված՝ ծածկում էր ցաւը և պատրաստվում էր պատւառորապէս մեռնելու: Քառասուն հազար մարդ 36 թնդանօթներով պաշարած էին քաղաքը, և սա կարող էր պատերազմել մինչև վերջին կէտը, բայց ոչ յուսով պատառմեան:

Յունիսի 12-ին Ուդինո զօրավարը հրաւէր կարդաց քաղաքին անձնատուր լինել: ոչո՞մ անձնատուր չէ լինիլ, “պատասխանում է Եռապետութիւնը¹⁾: Եւ իսկոյն վերսկում է կոիւն ամեն ժամանակից աւելի կատաղբար: Գարիբալդի գրում էր կառավարութեան այդ կուի մասին “մերոնց կատաղը թիւնը հասած էր իր լրման. ուղմամթերքները պահած գալով, կտրիճները քարեր ժողովեցին և նրանցով հարուածեցին թրշնամիներին, նրանց հրացաններից Խլելով սուլինները, գործածեցին որպէս մահացու զէնք:“

Չերեկ ու գիշեր ռմբակոծվեցաւ իտալացիների, ինչ եմ ասում, աշխարհի սրբազն քաղաքը, ուր հաւաքված են երկու մեծ, այն է դասական (classique) և վերածնութեան ժամանակների յիշատակարանները, և ոռւբերի ու գնդակների սոսկալի տարափն աւերում էր յիշատակարանները: շատակարանները և սպանում կիներ ու մանուկներ:

¶ ասէլլօյում, Մէդիչին 22 օր դիմադրեց գծնդակ մենամարտութեան մէջ: “Միայն այս պաշարումը (գրեց

1) Եռապետութիւնը կազմող անձինքն էին հնատեսալները, Յովակի Մածձնի, Աւուլիո Սաֆիի և Կառլո Առմէլինի: Հանրապետական ժողովս այն տագնապալի օրերում Հանրապետութեան պաշտպանութեան համար կազմել էր այդ Եռապետութիւնը, տալով նրան անսահման իշխանութիւն:

գարիբալդի) կարժէր պատմութեան մի հատոր կազմելու:” Ամեն մի ամրութիւն պաշտպանվում էր թիզառութիւնը երեխաները մինչև իսկ մանում էին դիմագրողների շարքերը, փափագող լինելով պատւելու իրանց արիւնով մեծ անկումը: Լոմբառդական գունդը քաջութեան հրացալիքներ գործեց. սրանց մէջ անուանի էր Ֆէռոլամո Ինդունո նկարիչը, որ 27 սուխի հարուածներով հիւանդանոց տարվեցաւ: Բէռտանի նրան ազատեց, նրան բժշկեց և այս տարւայ յունիսի 4-ին նա լալիս էր իր Գարիբալդին՝ այն հանդիսաւոր արարողութեան մէջ, որ կատարվեցաւ Միլանում:

Յունիսի 29-ի երեկոյեան, սուրբ Պետրոսի տօնի օրը, չուօմը լուսաւորվեցաւ, ինչպէս ամեն տարի. Հին ստօյիկութիւն: Նոյն այդ միջոցին բարձրացաւ մի սարսափելի մրրիկ, կայծակն ընկաւ քաղաքի մի քանի տեղերում, իսկ փոյլակը խառնվում էր սումբերի կրակի հետ: Գրանսիացիներն օգտվելով մրրիկց, փորձեցին մի ծայրահեղ ճիգ: Գարիբալդի, իր հետեւրդները և լոմբառդական գունդը դիմադրում էին Սպագաց վելլայից: Ուումբերը խրամատներ էին բաց անում. սակայն դրանց առաջ երեկում էին պաշտպանողները և գնդակն ու վառօդը պահած գալով, վիրաւորում և սպանում էին սուխններով, սուրերով ու նիղակներով: Անպատճառ մեռեալների կամ վիրաւորների վրայ պէտք էր կոխել, այնքան գետինը ծածկված էր լոկածներով: Այն գիշերը սոսկալի էր նայել Գարիբալդիի վրայ. „Նրա սուրբ փայլակն էր, նրանից զարնվողը մեռած էր: Կոր թշնամու արիւնը սրբում լուանում էր ընկածի արիւնը: Կարծես ինքը Լէօնիդասն էր թէրմօպիլէի կիրճում, Գէռուչչին Գալինանաշայում: Ամեն վայրկեան երկիւղի մէջ էր, թէ աշա նա կընկնէ, բայց ո՛չ, նա մնաց միշտ ոտքի վրայ

անսասան որպէս ճակատագիրը՝ (վէկէի):

“Երա ոտքերի տակ ընկնում էր Մօռօղինի երեւասարդը, քիչ այն կողմ իր հաւատարիմ մաւր Անդիառը շանթահար էր լինում գլախ ընդունածի հարուածի տակ. Լուչիանօ Մանառա, տեսնելով այդ կոտորածը, յուսահատված Հռօմի ազատութեան վրայ, աղաղակում էր. “Ուզեմն ինձ համար ձուլված չէ մի գնդակ:” Նոյն վայրկեանին փափագած գնդակը զարկաւ նրան կրծքից: Մինչ նա ընկնում էր, չոօմէական ժողովում որոշում էին ոչ թէ անձնատուր լինել, այլ դադարել այսպիսի պաշտպանութիւնից, որ պատարի ևս անհնարին էր. բողոքում էին դրա դէմ Մաձձինի և Գարիբալդի:

XX

ԱՆԻՏԱՅԻ ՄԱՀԸ.

Անիտան անցնելով թշնամու շարքերի միջից, հասել էր իր Յովսէփի մօտ: Երկու ամսից յետոյ պէտք է մայր լինէր:

— Իսկ ինձ, Անիտա, ասում էր նրան Գարիբալդի. Ամերիկայի քո ընդարձակ դաշտավայրերում չենք: Պաշարումն օրից օր աւելի և աւելի սեղմում է մեզ մօտից. չը կայ այլ ևս ոչ մի ելք. դու կը մնաս մեկ անդամ էլ ինձ հայր անելու համար. պահիր քեզ մը զաւակի համար:

— Պուտ չես ուղում, որ ես մօտդ լինեմ, պատախանում էր թափիծով Անիտան. պատրուակներ ես հիւսում, որպէսզի ինձ հեռացնեա: Ո՛չ, լաւ եմ հասկանում ես այդ. դու տարակուսում ես իմ քաջութեան վրայ, բայց արդեօք հարիւրաւոր փորձեր ցոյց

ը տվի՞. արդեօք զինւորի կեանքը, ձիի վըայ արշաւելու կեանքն ինձ սիրելի չե՞ն: Իմ ի՞նչ փոյթս են յոգնութիւններն ու զրկանքները, եթէ այդ յոգնութիւններով ու զրկանքներով ես ապրում եմ սրտի գոհութեամբ և աւելի կորովի:

Գրանսիացիները պատրաստվում էին չոօմ մտնել, երբ Գարիբալդի հաւաքելով իր զինւորներին Սան Պիէտոյի հրապարակում, ուղղեց նրանց սպարտական պարզութեան ու մեծութեան դրօշմ ունեցող այս խօսքերը.

— Օ ինւորներ, այն ամենքին, որոնք կամենում են ինձ հետևել, ահա իմ նուէրը. քաղց, ցուրտ, արե: Ո՛չ վճար, ոչ զօրանոցներ, ոչ մերեր. այլ մշտական կոիւ, տաժանելի չու և սուինն ուսի վրայ՝ պահանորդութիւն: — Ո՞վ սիրում է հայրենիքը և փառքը, թող հետևէ ինձ:

— Մենք, մենք, լսվեցան հազարաւոր ձայներ:

Եշ մօտ 4500 հոգի հետևեցան նրան: Նրա հետ գնացին, բացի Անիտայից, նաև Զիէւովակիի և Ուգո Բասսի սուրբ քահանան: Գարիբալդի փող չուներ. իր զինւորների համար նա զինւորական արկղից վերեց մի գումար. իսկ իր և իր կողակցի համար նա ծախեց սեփական ժամացնյոցը:

Վրագաբար կազմված բանակի ետևից ընկան բռնաւորներն այնպիսի եռանգով, որ կարծես վայրի գաղաններ հալածելիս լինէին, բայց Գարիբալդի իր արագաշարժութեամբ և սուր հեռատեսութեամբ աղատվեցաւ ամեն վտանգից: Աշխատում է ոտքի հանել ծովանան. սակայն գտնում է ամեն տեղ վհատութիւն և երկիւլ: Աղաղակում է իրայիններին.

— Մեղ մնում է վենետիկը մեռնելու համար:

Աակայն չարաչար յոգնութիւնները փոքրիկ բանակի թիւը հասցրել էին 1500-ի և չը կարողանա-

լով մի կերպ հասնել Սան Մարկօ-ի եղերքը, տարաւ էրայիններին Սան Մառնիսու-ի Հանրապետութիւնը, ուր պայմաններ կապեց իր ընկերների համար, որպէսով սրանք վերադառնային իրանց երկիրները։ Իրան համար արհամարհչեց որ և է դաշինք աւստրիացիի հետ։ Հարիւրի չափ մարդիկ միայն յօժարեցան հետեւ նըրան, յանձն առնելով ամեն բան։ Սրանց հետ միասին փորձում է փախչել ծովով, սակայն թշնամի նաւերը վրայ են համոււմ և գերի են տանում նրանց։ Ինքը և կինը փախչում են, սակայն ոչ Ուգօ Բասախն. Նա ընկնում է աւստրիացիների ձեռքը, որոնք տանում են նրան Բօլոնեա, ուր զինուորական ու եկեղեցական նենդաւոր ատեանների առաջ դատելուց յետոյ՝ սպանում են նրան անարդար կերպով։

Օգոստոսի չորսն էր։ Այն միջոցին, երբ արել մայր էր մանում, մի երկանիւ միալուծ կառք՝ բարձրանում էր համբընթաց այն ճանապարհով, որ տանում էր ծովեզրից գետի Ռավէնայի անտառները։ Կառքի վրայ ձգված էր մի յարդալիր անկողին, իսկ անկողինի վրայ տարածված էր մի գեռատի կին՝ ջերմով փայլատակող աչքերով։

— Քաջութիւն, Անիտա, մրմիջում է նրան Գարիբայդի, որ գիւղացու զգեստներ հագած, հովանոցը ձեռքին, պաշտպանում է նրան արեի ճառագայթներից։ Քաջութիւն, ով իմ կտրիճ ընկերուհի... այն աներում ապաստան կը ինդրենք։

— (Օ) ջօղէ, ես մեռնում եմ, մրմիջում է կինը, դառնալով միւս կողմը։

Եւ սպիտակ փրփուրը ծածկում է նրա հրատապ շրթները։ Գարիբայդի սրբում է նրա բերանը մետաքսեայ թաշկինակով։ Երկու ընկերներ (մէկը գնդապետ էջուուն էր), որոնք փարում էին կառքը, երբեմն-

երբեմն յետ էին դարձնում իրանց գլուխները։ անբաղդի արձակած ողերը խոցոտում էին նրանց սրտերը։ Գարիբայդի դուրս էր հանել կնոջն այն նաւակներից, որոնց ետեւից էին ընկել աւստրիացիները, և ուսերի վրայ բարձած անցել էր բաւական տարածութիւն ծովի մէջ, մինչև կուրծքը ընկրմված ջրում։ Մի բարեկամ նրան ավել էր այն երկանիւը, որի վրայ յոյս ուներ ապահովութեան մէջ դնել իր պաշտելի Անիտային։

Վի գիւղացի կանգ առնելով, սկսում է դիտել տարօրինակ ուղղեկցութիւնը։

— Յանուն մարդկութեան, ասում է նրան Գարիբայդի, ազատեցէք այս կնկան։ Ինձ համար ոչինչ չեմ խնդրում, ամեն ինչ նրա համար։ Ծարաւից մեռնում է. տվէք գոնէ մէկ ումազ ջրու և թոյլ տվէք մեզ հանգստանալ մի քանի վայրկեան։

— Այն անակի տանտէրը ես չեմ, պատասխանեց գիւղացին, բայց կը կանչեմ Ռավայլիսան։

Գուրս է գալիս ագարակից մի կին, որ տեսնելով Անիտային այդ գրութեան մէջ, կարեկցում է նրան։

— Անեղձ կին, բացականչում է, ճանապարհ գնալ այդ գրութեան մէջ։ Բայց դա մահ է կատարեալ։ Ի՞նչ բարեբաղդութիւն, որ այստեղ է բժիշկը, որը կանչված է տանտէրուհու համար։ Իսկոյն և եթ կը կանչեմ նրան։

Արդարեւ, այնտեղ էր գտնվում հաննինի գի Սանտ'Ալբեռտո բժիշկը, որ եկել էր խնամելու ագարակատէրի կնոջը։ Բժիշկը նայում է դժբաղդին և՝

— Այս կինը մեռնում է, բացականչում է։

Յետոյ դառնալով Գարիբայդիին։

— Իսկ դուք, այդ գէմքով... այդ մօրուքով... դոք Գար... .

— Առութիւն, ի ուշը այդ կնոջ, ասաց Գարիբայդի։

գիտէր, որ փնտռում են ինձ մեռցնելու և պատժի տակ են նրանք, որոնք կօգնեն ինձ: Իմ մասին — գաղտնապահ հութիւն:

Ա յայ է հասնում ագարակատէրը, Յովսէփի Ռավայլիս, և սրա հետ ուզում են տեղափոխել Անիտային վերնայարկի անեւակներից մէկում, առանձնացած անկողին: Բժիշկը Գարիբալդիի տված անձկալի հարցումներին պատասխանում էր, թէ ամենածանր, վտանգաւոր ջերմը մաշում էր այն թշուառ կնկան:

Ամենամեծ զգուշութեամբ փախստականը բարձրացրեց հոգեւարքին իր խշտեակի հետ. Ռավայլիան օդնում էր նրան, բանելով ուսքերից: Ակսան բարձրանալ սանդուղտները կամաց-կամաց. սակայն մի քանի աստիճաններ առնելուց յետոյ՝ Անիտան ցնցվեցաւ ջըդագութեամբ.

— Յովսէփ, աղաղակեց, զաւակները...

Խու կարծես ջղագութիւնը վճռական հարուածը տված լինէր այդ կեանքին. ընկաւ իր ծանրութեամբ խշտեակի վրայ: Մեռած էր:

— Ո՛չ, ո՛չ, մեռած չէ, աղաղակում էր Գարիբալդի: Տանենք նրան վեր: Ուշաթափ եղաւ... շտառապեցաւ, խեղճ Անիտա: Կորից ուշքի կը գայ. ուժով է... Մեռած չէ, ասում եմ ձեզ... անկարելի է... Եթէ ճիշդ լինէր, ինքս էլ կը մեռնէի, որովհետեւ մեր կեանքը մէկ է: Ինձ նայիր, Անիտա... շարժիր բիբդ, խօսիր... ձայն հանիր...

Գարիբալդի յուսահատութեան բանդագուշանքի էր հասնում: Ուժով յետ խլեցին նրան գիտից, որը ծածկում էր համբոյներով, և խնդրեցին, որ փախուստ տայ:

— Քո զաւակների համար, Խտալիայի համար, ասաց նրան ցած ձայնով գնդապետ Լէջլէոն:

Բարձրացաւ գետնից, ուր ընկած էր ծնկազը:

— Խեղդվում եմ, ասաց նա, ձեռքը տանելով կոկորդին: Մի բաժակ ջուր տվէք ինձ: Խմեց բարձրացըրեց աչքերը գեպի երկնք, խոնարհեցրեց նրանց Անիտայի վրայ և փախստ սրտամաշ և հեղձամղձուկ հեծեծանքների մէջ:

Պառան հասնելով, յետ դարձաւ: Միայն մի մատանի ունէր, Անիտայից ստացածը, և այն նուիրեց բարի Ռավայլիային իբրև յիշատակ: «Ո՛չ, ասաց ազնիւգիւղին. պահեցէք, սուրբ է այն ձեզ համար:»

Օգոստոսի 11-ն էր:

Ան տիրական շունը թափառելով, երևան էր հանում մի գիտ թաղված փոքրիկ խորութեան մէջ հանումայի աւազում, Մանդուիոլի եկեղեցապատկան հոգի վրայ: Վաղեցին քահանայապետական իշխանութիւնները. մարմնը դուրս հանվեցաւ այնտեղից, և կանչ վեցան փորձառու բժիշկները: Յայտնվեցաւ որ յի կնկայ մի գիտ էր այն. մաղերը կտրված ունէր ալարուտա, հագած էր շապիկը, ըջաղգեստը և մի բարոն: Մերկացրին գիտէն իր զգեստներից, ի ցոյց եւրոս: Մերկացրին գիտէն իմացվէ թէ ով էր, և խեղճ գրին նրան, որպէսզի իմացվէ թէ ով էր, և խեղճ գրին նրան գիտէն գերեզման գրվեցաւ, մերկ: Իր ուսնիտան վերստին գերեզման գրվեցաւ, մերկ: Իր ուսնիտան ուրիշներից որոշելու համար անկվեցաւ այն կը լինէրն ուրիշներից որոշելու համար անկվեցաւ այն կը լինէր իսկ: Յետոյ Ճշմարտութիւնը յայտենալ մի բարձր խաչ: Յետոյ Ճշմարտութիւնը յայտենալ մի պատժում նրան, որ կատարել էր իր մարդկային կոչումը:

Այսօր Անիտան հանդաստանում է խաղաղութեամբ պատկառելի շիրմի մէջ, Գարիբալդիի մօր մօտ:

XVI

ՄԻԶԻՆՔ. ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ.

Ամանդուիօլիս աղիողորմ գէպքից քիչ օրեր յետոյ՝
մի մարդ, յաղթակաղմ, սակայն վերին աստիճանի
տժգյն ու տիրադէմ, գուրս էր գալիս Մօդիյլիանա
փոքրիկ գիւղից: Ճանապարհը, որով նա գնում էր,
ամայի էր. բայց շուտով երևեցաւ զինւորների մի խումբ,
որ աւստրօգոտեան հայհոյակներ էր տեղացնում:
Աւստրիացիները խումբ-խումբ բաժանված էին ամեն
տեղ գարիբալդիի հետքերը գտնելու: Մարդը քիչ
հեռուն աննշան մի պանդոկ է տեսնում գիւղական, և
խկյուն մտնում է այնտեղ, որպէսզի խյոս տայ իտալիա-
յի կրօստի համար դաշնակցած երկու ժանտաժուտ
իշխանութիւններին պատկանող կտրիձներից:

Հազիւ նստած էր մի սեղանի առաջ, երբ մի քա-
նի խուռատներ մտնում են նոյնպէս այնտեղ:

— Յայտնիցայ, ասաց մարդը իւրովի, և արդէն
պատրաստվում էր պաշտպանվելու:

Օխնւորները, կէս հարբած, նստան մօտիկ, մի սե-
ղանի առաջ. և մինչ ագահաբար կոնծում էին գի-
նին, որը դոդողալով պանդոկապետը դնում էր նը-
րանց առաջ, աղաղակում էին.

— Ա՞չ, Գարիբալդի գա, աչ, աչ, ծուղակն ընկած
ես... մէնք քեզ կը գտնենք...

Գարիբալդի վեր կացաւ կամաց-կամաց և դռնից
գուրս սահեցաւ: Քիչ յետոյ արդէն հեռուն էր, ա-
րագընթաց քայլում էր դաշտերի միջով:

Ճշմարիտ չէ, որ Գարիբալդի երբ և է ծպտված լինի
իբրև քահանայ, ինչպէս ասացին ոմանք: Մօդիյլիանա-

յի բարի քահանան, գօն օհօվաննի Վէռիտա՛, որ նը-
րան պահեց իր տան մէջ, հեղքում է այդ բարբան-
ջանքը:

Գարիբալդին և հարիւրապետ Վէջէռօն թշնամի-
ների միջից անցան իրանց զգեստներով, անտեսանելի
եղած իտալիայի բարի ոգուց: Փախստի մէջ նրանց
օգնեցին արիասիրտ հայրենասէրներ, արհամարհող անձ-
նական վտանգների. և շնորհիւ նրանց անձնուրացու-
թեան, Գարիբալդի կարողացաւ վերջապէս հասնել
Պուտո Վէնէռէյի եղեղները և գնալ կիավառի:

Ժողովրդին ուրախացած խուռներամ հետևում էր
նրա քայլերին. սակայն Դի Կոսիլյա գաւառապետը
Սարդինեայի թագաւորի անունով ձերբակալել տվեց
նրան և կառաբինիէռների ուղեկցութեամբ ուղարկեց
քէնօվա: Պիէմօնտական նախարարութեան երախտագի-
տական ողջոնն էր այդ՝ փոխարէն իտալիայի սիրոյ
համար կրած տառապանկներին:

Իսյց այդ անարժան ընդունելութիւնը վիրաւորեց
թէ ժողովրդին և թէ Պառլամենտը. և սեպտեմբերի
10-ի նիստում երեսփոխաններն ազդու կերպով յան-
դիմանելուց յետոյ Պիոէլլի մինիստրին պատահած ա-
նախորժ գէպքի համար, քուէարկեցին մէկ օրակարդ,
որի մէջ յայտարարվում էր, որ „Գարիբալդի զօրա-
պետի ձերբակալումը և նրան Պիէմօնտէից գուրս հա-
նելու իրաւունքը խախտում էին Սահմանադրութեամբ
նուրիսագործված իրաւունքները և դիպում ազդայնու-
թեան զգացման և իտալական փառքին:“

Այնուամենայնիւ նրան գեռ ազատ չը թողին: Ճա-
տերն այցելութեան էին գնում նրան բանտում. և
նրա շըմներից ոչ մի բարկութեան խօսք չէր զուրս
գալիս իր բանտարկուների գէմ: Կարծես թէ անմե-
նեին չէր նկատում, թէ կալանաւոր լինէր. ամենքի

Հետ խօսում էր Դատավայի ապագայի մասին, և՝
— Ձաւած ունեցէք, ասում էր, պատրաստվեցէք,
մի սիրտ, մի հոգի, ազգային պատերազմի համար. այդ
պատերազմը հեռու չէ, ոչ էլ կորած...

Մինխարութիւնը, հակառակ պառլամենտական քու-
էին, ուղում էր վտարել նրան հեռու. սակայն դը-
նալոց առաջ նա ցանկութիւն յայտնեց կրկին տես-
նելու մօրը և զաւակներին: Պատիկանական մի գործա-
կալ առաջնորդեց Հովոի պաշտպանութեան հերոսին
պատկառելի Ոինեա Ռոզայի բնակարանը:

Դարի կինն այն ժամանակ 74 տարեկան էր ար-
գէն. Գարիբալդիի հետ լացեց Անիտայի կորստի վրայ
և խոստացաւ հսկել փոքրիկների վրայ, որոնց նա յանձ-
նում էր նրա սիրոյն:

— Եթէ այլ ևս չը կարողանա՞ք տեսնել միմեանց,
մրմնեց մայրը վերջին հրաժեշտի գրկախառնութեան
միջցին. Եթէ երբ և է վերադառնաս քո այս բնա-
կարանը և ինձ գտնես պառկած այնաեղ, գերեզմա-
նում, յիշէր գոնէ իմ մասին, որ այնքան սիրեցի քեզ:

Եւ նա երբէք չը մոռացաւ նրան: Կապոէռայում,
այն սենեակում, ուր նա աւանդեց իր մեծ հոգին,
տեսնվում է մի ծերունու կինդանագիր, որ փափկու-
թեամբ ժպտում է. Ունի ա Ռոզան է այն:

Մի նաւ տարաւ Գարիբալդիին թունիդ. սակայն
բէյը, վախենալով որ և է բարդութիւնից, արգելեց
նրան բնակիլ քաղաքում: Տարագիրը թափառեց
Մադդալենայից Ֆերալտար, Ֆերալտարից՝ Տանջէոփի,
և վերջապէս մէկ օր խարիսխ վերցրեց գէպի Նիւ-Եօրկ:
Մէծ մայրաքաղաքի ոչ շատ բազմաքնակ փողոցներից
մէկում բարձրանում էին մէկը միւսին կից երկու հաս-
տատութիւններ. մէկը՝ ճրագուի մոմի գործարան, միւսը
ծխախոտի մի մեծ խանութ: Գործարանում աշխատում

էր Գարիբալդին, խանութում սիդարներ էր բաժա-
նում զօրապետ Ավէձձանան: Մի ծովային պաշտօնեայ
առաջինի բարեկամը, Նիւ-Եօրկից անցնելով, ուզեց
հերոսին այցելութեան ելնել: Վերջինս, թէերը վեր
քաշած, պատրաստվում էր պատրոյդներն ընկոմելու մի
մեծ կաթսայի մէջ, ուր եռում էր ճրագուն, երբ
պաշտօնեան երևեցաւ:

— Oh bravissimo, աղաղակեց, գալ ինձ տեսնելու.
ամենայն սիրով կուզէի գրկել քեզ, սակայն այս աղ-
տեղութիւնն արգելում է ինձ: Բայց, ճիշդն ասած,
զզլեցայ այս արհեստից. օդի, շարժման, նա մանա-
ւանդ ծովի պէտք ունեմ. շուտով կը տեսնվենք ջրի
վրայ:

Երդարեւ, դրանից քիչ յետոյ թողնում է մոմի
գործարանը և ընդունում է առեւտրական նաւերի հը-
րամանատարութեան պաշտօն. վաճառականութիւն է
անում Լիմայի և Զինի հետ. և վերջապէս ապահո-
վութիւն առնելով, որ կարող է հայրենիք մտնել ա-
ռանց ուրիշ ձանձրութիւն կրելու իշխանութեան երե-
սից, գառնում է Նիցցա:

Բայց աւաղ, հայրենական տան գուան շէմքին չէ
տեսնում այլ ևս մօրն ալեսոր գլուխը, որ հեռուից
բարի գալստի ողջոյնն ուրախութեամբ յայտնէր իրան.
Նա մեռած էր 1858 մարտ 19-ին, օրհնելով իր շատ
սիրեցեալ Յովակին, որի անուան տարեգարձն էր
ընկում այն օրը: Այդ ժամանակից սկսած՝ մարտի
19-ը Գարիբալդիի համար միշտ ինքն իր մէջ ամ-
փոփելու և տիրութեան օր եղաւ և իր անուան օրը
ստացած հաղարաւոր հեռագիրներն ու նամակները,
որոնք բարեմաղթութիւններ էին պարունակում իրան
համար, կրկնապատկում էին իր թախծութիւնները,
արթնացնելով իր մէջ տիրուր յիշատակը:

Հայրենական տնակում գտաւ եղայրներին ու զաւակներին: Գարիբալդիի եղայրները չըրս էին. Անվելո, իրանից մեծը, զաճառականական ասպարէզը մտաւ, հարստութիւն ձեռք բերաւ և մեռաւ իրրե Սարդինեայի հիւպատոս Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Միկէլէ, որ Գարիբալդիից փոքր էր, նաւապետ եղաւ. մեռաւ 1866 յուլիս 22-ին: Փէլիչէ, կրտսերը, զաճառականութիւն արեց, պճնասէր մարդու (Zerbino) համբաւ ունեցաւ. մեռաւ Գարիբալդիի բազուկների վրայ 1855-ի նյումբերին: Սենեա Ռօզան մի փարբիկ աղջիկ էլ ունեցած էր. բայց սա գեռ մանուկ հասակի մէջ, աղէտալի զիպուածի հանդիպելով, քըստմելի մահով մեռաւ, բոցերի մէջ այրվելով:

Փէլիչէ եղայրը թողեց հերոսին մի փարբիկ ժառանգութիւն. շնորհով գրան, սա կարողացաւ գնել կապուա կղզեակի մի մասը, որի վրայ տարիներից ի վեր փափագով նարում էր իրրե խաղաղ պատսպարան կեանքի աղէտներից:

Գարիբալդիի կեանքի այս շրջանում ներս է մըտնում մի կին: Լօնդոնում պատահեց մի շատ գեղեցիկ այրի կնկայ, աղնւական, հարուստ ու հանճարեղ. սիրահարվեցաւ նրան և առաջարկեց ամուսնանալ իշրան հետ: Կինն ուրախութեամբ համաձայնվեց և գընաց նրա հետ իտալիա: Երկու տարի նշանված միացին. նրանց մէջ մի բան կար, որ երկուսին էլ անյարմար և ամօթալի դիրքի մէջ էր դնում միմեանց հետ անքակտելի կապ հաստատելու: Կինն ապրում էր, այսպէս ասած, պերճ ընկերութեան մէջ, որի օրէնքներն ու սովորութիւնները գիտէր. իսկ Գարիբալդիի խոյն էր տալիս մեծարողական (cérémonieux) շրջաններից և գերադասում էր ժողովրդական զուարձութիւնները: Երբ 1856-ին նա գնաց Լօնդօն հարսանիքը

կատարելու, նշանածի տնից գուրս փախաւ սարսափաշար:

Պերճութեանը չափ չը կայ, ասում էր: Մի ծառայ չետևում է ինձ ամեն մի քայլիս. երեք ժամ սեղանի վրայ է անցնում և անկողին մտնելու ամենեւին ժամանակ չը կայ... մէկ ամիս այդ կերպով ապրելն ինձ համար մահ կը լինէր:

Արսանիքն օդը ցնդեցաւ: Գարիբալդի, բացի գըրանից, վախենում էր, թէ մի գուցէ ազնւական ամուսնութիւնն արգելք լինէր իրան ամբողջապէս նուիրվելու ժողովրդին: Եւ այժմարդէն զգում էր, որ շատ մօտ էր կուի բոպէն:

XVII

ԱԼՊԵԱՆ ՈՐՍՈՐԴԻՆԵՐԸ.

Գարիբալդիի իր ամենամեծ գործնական հասկացողութեամբ ուղում էր, որ Խոալիայի առաջին շարժումը մէկ օգտակար արդիւնքի յանձէր: Այդ պատճառով էլ գրում էր տիկին Եասսիէ Ռւայտ Վառիօ-ին, 1850-ի փետրվարի 3-ին, այս խօսքերը, որոնք տալիս են իր ապագայ ընթացքի բանալին.

„Պիէմոնտէյում 40,000 մարդկանց մի բանակ և մի փառասէր թագաւոր կայ. գրանք տարրեր են ըսկընաւորութեան ու աջրդութեան, որին հաւատում է այսօր իտալացիների մեծամասնութիւնը:“

Այս զգացումներից ոգեսրված՝ յօժարութեամբ մտաւ Խոալաւ կան ազգային ընկերութան մէջ, որին նախագահում էր Զիոռջի Պալլավիչինո և որ ունէր այս ծրագիրը: Ետալիայի անկախութեան և միութեան մեծ սկզբունքը նախագասել ո՞ր և է քաղաքա-

կան ձեւի առաւելութիւնից. լինել Ախկտօր Էմանուէլի¹⁾ հետ, քանի որ սա Խտալիայի հետ է, խոչեմութեան սահմանների մէջ։“

Վրբիկն Աւտորիայի դէմ գնալով՝ մեծանում էր։ Հասաւ 1859 թւականը. Ախկտօր Էմանուէլն իր մօտ կանչեց Գարիբալդիին յունվար ամին. և հերոսն այդ Խոսակցութիւնից դուրս գալուց յետոյ կատարեալ խնդութեան մէջ ասաց Բէռտանիին։

— Այս անդամ իրապէս լինում է. սաա բարեկամներին, որ ամենն էլ պատրաստ լինեն։ Պէտք է, որ ամենքս միացած լինենք, եթէ ուզում ենք Խտալիան Մի անել։ Յոյս եմ գնում ձեր և բոլոր բարեկամների վրայ։

— Իսկ ֆրանսիացիները, հարցրեց Բէռտանի, սեղմելով նրա ձեռքը և ակնարկելով չումի պաշտումը։

— Ուրան աւելի լինենք մենք, այնքան քիչ պէտք կունենանք, պատասխանեց Գարիբալդի։

Յետոյ Խտալիաի գրկութեան գաղափարով հետզետէ բորբոքվելով, նկարագրում էր Բէռտանիին իր յցաւը որպէս իրողութիւններ։

1) Վելսոր Էմանուէլ Կալո Ալբենո-ի որդին էր։ Նօվառի պատերազմից յնոյն, որ Խտալացիների համար շատ անաղող ելք ունեցաւ, Կալո Ալբենո ճախտարվեց Պիէմոնտական զահից, իրան յաջորդ նշանակելով նրիտասարդ գահաժանք՝ Վելսոր Էմանուէլին այն ժամանակ Սավօյայի գործ Երիտասարդ թագաւորը զայը բարձրանալուն պէս իր առաջին գործն արեց վերականգնել Պիէմոնտի նու ամբողջ Խտալիայի առաջ Սավօյայի տան ընկած վարկը եւ գրաւել ժողովրդի սէրը, որ վերջին ճախորդ նէպերից ի վեր զգակի ներպով նուազել էր։ Մրան համար նա լայն գործադրութիւն տվեց Սահմանադրութեան, իսկն էլ նովարկվելով սրա տրամադրութիւններին։ Իր ժամանակը Պիէմոնտի դարձել էր Խտալիայի ամեն կողմերից հաւածված փախտական յեղափոխականների ապաստանաւում։ Բայց Վելսոր Էմանուէլ իր ժողովրդականութիւնը ծեռք բերաւ մանաւանդ այն չերմանադ մասնակցութեամբ, որն ունեցաւ Խտալիայի անկանութեան գործին, գրաւելով այդ կողմեց նոյն իսկ չանը ապ ետական Գարիբալդիի համակրութիւնը։

Փ. Թ.

— Ալ տեսնես, եղօակացնում էր, քաղաքացիների գնդեր, որոնք անդիմագրելի սաստկութեամբ պէտք է ընթանան աւստրիացու դէմ։ Կը տեսնես Խտալիան աղատված մեր ձեռքով։ Սակայն պէտք է ամենքս միացած և զինված լինենք, եթէ ուզում ենք, որ մենք ինքներս անենք։

Կապօլէօն 111 և Լամառմօռա գէմ էին կամաւորների բանակի կազմվելուն, այնպիսի պատճառներով, որ գիւրին է հասկանալ։ Սակայն կավուռ խելացի գլուխեցաւ չը զիջանելու։ 1850-ի մարտի 17-ի հրովարտակով Գարիբալդի պաշտօն էր ստանձնում կազմակերպելու կամաւորներին Ալպեան որարդների անունով։ և նա իսկոյն կանչում է իր մօտ Կօղէնց, Մէդիչի, Ալպօհնո, Կինո Բէքսի, Սակի և գօկտօր Բէռտանիին, յանձնելով այս վերջինին բանակի հիւանդանոցների հոգուր։

Անպատմելի եղաւ այն ոգերութիւնը, որ առաջ բերաւ Գարիբալդիի անունը։ Խուռաներամ ընթանում էին զինուորագրվելու իր գրօշակի տակ. ազնւական ու ռամփի, Ճարտարապետ, երկրաչափ, փաստաբան, նըկարիչ, որոնք ամենքն էլ թողնում էին իրանց ետեղ պատւաւոր ասպարեզ և անցնում պատերազմի դաշտ։ Կային նրանց մէջ և աղքատ ժողովրդականներ, որոնք միայն իրանց կեանքն էին կարողանում տալ հայենիքին։ Գեռատի անմօրուս պատանիներ պաղատում էին ընդունել իրանց, և Գարիբալդի խորհուրդ էր տալիս գրել նրանց իր շարքերում, որովհետեւ չումում տեսած էր երեխաներ, որոնք իրանց հասակից բարձր գործեր էին անում։



XVIII

ԼՈՄԲԱՌԻԴԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ.

Վայիսի 23-ին Ալպեան որսորդների բանակատեղին ժխորի մէջ էր: Հաւաքման փողը փչում էր. զինոր ներն աճապարանքով վաղում էին զէնքերն առնելու: — Ըստով, շուտով, գնում ենք, ասում էին պաշտօնեաները:

— Եւ ուր:

— Գաղանիք է, Գարիբալդի գիտէ այդ և բաւական է:

Քիչ յետոյ ամենքը պատրաստ էին. գնում են: Կամաւորների կարգերում տիրում էր ուրախութիւնը. „ գնում ենք կուելու, զօրանոցի կեանքը վերջացաւ վերջապէս, ասում էին միմեանց ցած ձայնով: ”

— Առութիւն, պատուիրում էին նրանց երբեմն երբեմն պաշտօնեաները: Գնալու ժամանակ չէ կարելի խօսել:

Առութեամբ գնում էին ամբողջ գիշերը: Գարիբալդի աչքի էր անցնում կարգերը և մի խօսքով արիացնում յոդնածներին, ոգեւորում լքեալներին և անձամբ հսկում ամեն դործի վրայ: 24-ին հասան Մաջդիօսէ լձի եղեցքը:

” Այն կողմը լոմբառդական հողն է “, ասում էին երիտասարդները. միւսներն աւելացնում էին. „ այնտեղ է մեր տունը, այնտեղ են մեր խեղձ մայրերը, որոնք հառաջում են մեղ համար... “ Մի քանի նաւակներ պատրաստ կային և կամաւորներն անցան միւս ափիք:

Ամենըն էլ վառված նոր բաղրի յուտով, Առաքինութիւն սրտերում կրելով, Ուլստ, երդում արին. որ էլ այն ջըռեր ջբաժնեն իրարից երկ օտար ափեր:

Կւստրիացիների առաջին կայանը գտնվում էր Սէտա- տօ կալէնդոյում: Գարիբալդի անները հէնց որ երկեցան այդտեղ, սրանք սարսափահանար նետեցին զէնքերն, տղաղակելով. ա զատ վել, ա զատ վել:

Մնցան սահմանները: Գարիբալդի այնքան արագ և այնքան յանդուգն շարժել էր, որ թշնամիները մնացել էին ապշած: Մինչ այս, մինչ այն, նա յայտարարութիւններ էր ուղարկում լոմբառդացիներին, գըրգուելով նրանց դէպի ապստամբութիւն, հետևելով իրանց հայրերի օրինակին, որ կատարեցին զօնտիգան և լէնեանօն, և եղակացնում էր. ոի զէն, սարկութիւնը պէտք է դադարէ, և նա, որ կարող է զէնք վերցնել և չէ վերցնում, դաւաճան է: ”

“ Եաւ աւստրիական բանակի մարաջախտը (magéchal) անցութն օկուէյ, բարկութիւնից կատաղած՝ իր յայտարարութիւններն էր անում, որոնք մոլեգնութեան դրօշմն ունէին իրանց վրայ: „ Երդվում եմ (դրում էր նա), որ հրով ու սրով պէտք է պատժվին այն բողը տեղերը, որոնք յեղափոխութեան կը մասնակցեն: ” Եւ կանչելով անցութ և արիւնաբու զօրապետ՝ իւռբանին՝ ուղարկեց նրան հերոսի դէմ:

— Երդվում եմ քեղ, ասաց իւռբանը օկուէյին: որ մի քանի օրւայ մէջ պէտք է բռնեմ և կախաղան բարձրացնեմ Գարիբալդիին և բոլոր իր աւազաններին:

Կունց ժամանակ կորցնելու գնում է վառէդէի վրայ, թողնելով իր ետելից յափշտակութեան ու կոտորածի հետքեր, որոնք լաւ յայտնի են լոմբառդիայում, այն բոլոր տեղերը, ուր երկեցաւ աւստրիական

Համազգեստը: Ապիկայն գարիբալդի ամեն ինչ պատրաստել էր նրանց գիմաւորելու համար, ստանալով նաև կտրիճ քաղաքացիների օգնութիւնը: Հարիւրապետ դէ կոխստօֆօլիս աւստրիական առաջապահը ցիրուցան անելուց յետոյ արագաբար յետ է քաշվում: Ալպեան որինչ որսորդներ թշնամուն սպառնում էին մի պատնէշի ետեւը՝ վառեղէ-ից կօմո տանող ձանապարհի վրայ: Թողնում են, որ աւստրիացիներն առաջանան, որոնք կարծում էին, թէ պատնէշն առանց պաշտպանի կը լինէր, և ապա նրանց ընդունում են գնդակների հոծ տարափով: Նոյն միջոցին գարիբալդի ամենայանդուգն մարտիկների սակաւաթիւ խմբերի ընկերակցութեամբ դուրս է գալիս քաղաքից աննկատելի կերպով և մի կարճ կոր գծելուց յետոյ՝ շեշտակի ընկնում է աւստրիացիների կուշտի վրայ, որոնք կատարելապէս խորտակված փախչում են, թողնելով կուի վայրում զէնքեր, ռազմամթերքներ, բազմաթիւ մեռեալներ ու վիրաւորներ: Մեր կողմից երեք հոգի մեռան, որոնցից մէկն էր Էռնեստո Կախովի: Այս պատահեցաւ մայիսի 25-ին:

Խւռաբան փախչում է դէպի կօմօ, կատաղութիւնից ձեռքերը խածոտելով: Աւազ ակը ջախչախեց նրան: Երդումը, որ արել էր քելէյին, այլ ևս դժուար էր թուում իրան կատարել: Գարիբալդին էլ իր կողմից հանգիստ չէ թուում նրան: Այն ինչ իմանում է, թէ նուր է քաշված, շարժվում է դէպի կօմօ: Ռազմագիտական յարմար վայր էր Սան Գէռմօ, մի բարձր գագաթ, որ տիրապետում էր դէպի կօմօ տանող բուլը ձանապարհներին. Գարիբալդի քայլերն ուղղեց դէպի այնտեղ: Աւստրիացիները սպառնում էին նրան: Այն ինչ մեր լոտեսները Կավալլասկա հասած, հրացանները պայթեցան նրանց վրայ:

Դէ կոխստօֆօլիս հարիւրապետի առաջնորդութեան տակ գտնվող խումբը յարձակում գործեց թշնամու վրայ ձակատից. երկու ուրիշ խմբերի կուշտից վրայ ընկան:

Արացանաձգութիւնը գնալով սաստկանում է... և այլ ևս մէկ ահարկու, անվերջանալի թնդիւն է, որ լսվում է: Դէ կոխստօֆօլիս փայլակնացայտ աչքերով իրացիններին է նայում շեշտակի և նշանացի սրովը ցոյց է տալիս ձանապարհը. — Կեցցէ գարիբալդի, ի վազ, բացականչում է և իր ետեւից արշաւում են պաշտօնեաներն ու զինւորներն ահեղագոչ ուռուայով... կտրիճների խումբն ընդունվում է հրացանների մի տարափով. ընկնում են պաշտօնեաներ ու զինւորներ:

— Կտրիճների պէս առաջ, քաջութիւն, ի վազ: Եւ ձանապարհը կտրեցին անցան և բանակատեղին վաստակեցան: Սան Գէռմօ մերն է, սակայն այն ձեռք բերվեցաւ քաջ Դէ կոխստօֆօլիսի, Պէտօտտիի, Կառտէլիէռիի, Բատայիլիյի և այլ կտրիճների կեանքով: Գարիբալդի ընկնում է աւստրիացինների ետեւից, կամաւորները կեցցէներ են աղաղակում նրա համար իրանց արշաւանքում: Այդ անունը զինւորներին սնապաշտական սարսափ էր աղքում: Գարիբալդեանները Յ հազար, բայց որոնք յաղթահարված, կործանված շուտափոյթ փախստի ձանապարհն են բռնում: Մայիսի 27-ին տեղի ունեցաւ Սան Գէռմօյի այդ փառաւոր պատերազմը:

Պէտօտանին մատակարարեց իր բժշկական ինսամբները վիրաւորներին Կավալլասկայում: Թշուառն կառտէլիէռի թախանձագին խնդրում էր — իսկ Գարիբալդի ուր է: — Կօմօյում, պատասխանեց նրան Բէռտանի: Այն ժամանակ համբուրում է սուրբը և աղաղակելով՝ „կեցցէ գարիբալդի“, աւանդում հոգին:

Օօրապետը փորձ է փորձում գիշերով յանկարչակի բերել լավինօյի պահապան զօրքը Մաջխոռելքի վրայ, սակայն չէ աջղում. ապա նորից վերադառնում է Վառէզէ: Յունիսի առաջին օրը նա կանչվում է մի շատ գեղեցիկ երիտասարդուհու կողմից, որ աներկիւղ և անվնաս անցնելով աւստրիական զինուորների միջից, գալիս էր նրա մօտ գետպանաբար: Այդ երիտասարդուհին կոչվում էր մարկիզուհի Ռայխմօնդի:

— Եկէք կօմօ, հասէք մեղ օգնութեան, այսպէս էր նա խնդրում զօրապետից. աւստրիացիները սպառնում են քաղաքին: Ազատեցէք մեղ բարբարոսների վրէժինդրութիւնից:

Գարիբալդիին դուք եկաւ այդ կնոջ համարձակութիւնը և հաստատակամութիւնը, որ երեւան էր գալիս նրա ամեն-մի գործերից: Գուցէ իր մաքի մէջ նրան համեմատեց իր հերոսուհի Անիտայի հետ, երբ վերջինս նրա ընկերուհին էր պատերազմների և յաղթութիւնների մէջ:

— Ասացէք կօմօցիներին, որ ամուր կենան և դիմագրեն մինչև վաղը: Իմ Որսորդների հետ միասին ինձ կը տեսնէք կօմյում:

Երւ իրօք, յաջորդ օրը կատարելով մի չու, որի համար ռազմագէտները վկայում են, որ ամենայանդուշըն չուերից մէկը եղած լինի, որը կարելի լինի երեւակայել, հասաւ թշնամիների վրայ, սպառնալով նրանց ամեն-մի կէտից, անդամալուծեց նրանց բոլոր շարժումները և համարեան նրանց աչքի առաջ մտաւ կօմօ, տիրանալով բոլոր մուտքերին:

Ապա թուչում է դէպի Լէկի, այնտեղից անակնկալ կերպով՝ Բէռգամօ և գտնելով հեռագրական պաշտօնէութիւնն իր պաշտօնի մէջ, ստիպում է նրան Վէռօնայից 1500 զինուոր խնդրել՝ աւստրիա-

ցիների անունով: Վէռօնայի հրամանատարը ծուզակն է ընկնում և գարիբալդի սպառնում է զինուորներին կայարանում. բայց Բէռգամօի մօտերը տեղեկանալով կատարված խաղին, յետ են դառնում: Մի քանի վագոններ սակայն զատված լինելով, գերի են բոնվում մեր զինուորների հետ: Նոյն միջոցին հարիւրապետ Կառչեցով Բունձէտի մօտ հազարից բաղկացած թշնամու զօրաւոր մի բանակի վրայ, ցրվում է նրան եւ մի քանիներ գերի վարում: Գարիբալդի նրան անուանեց սահմանական վագոն:

Աւստրիացիները Տրէնտինո-ն վտանգի մէջ տեսնելով, ուղարկում են այնտեղ շտապով բազմաթիւ գնդեր, բայց գարիբալդի, ընդհակառակը, գնում է մինչև բոշշիա, ուր նրան սպառնում են քաղաքացիները ուսքի կանգնելու համար: Համում է այնտեղ յունիս 11-ին: Երեք օր յետոյ զեկուցում է ստանում, որպէսզի թագաւորի ցանկութեան համեմատ իր բանակը տաներ Լօնատօ-ի վրայ, ուր նրան նեցուկ պէտք է լինէք հեծելազօրը:

Խւրբան բաւական մէծ ոյժ էր համախմբել Կաստէնէգօյի բարձրութիւնների վրայ և այնտեղից կայծակներ էր թափում մերոնց գլխին, որոնք ճակատել էին տասնապատիկ մէծազօր թշնամու դիմաց: Ի զուր քաջարի կամաւորները հրացան ի ձեռին յարձակվում են թշնամիների վրայ, մագլցելով բլուներից դէպի վեր: Բունձէտափ ընկնում է մահացու վէրքը տակ, մի գնդակ ծակում անցնում է Տիւռու-ի ձախ թեր, տեղակալ Գուագէնիգօ սպանվում է կոկորդից ստացած մի գնդակից: Սակայն և այնպէս թէ վիրաւորները և թէ անվնաս մնացոլներն աղաղակում էին միակերպ. սառաջ, միշտ առաջ, յանուն գարիբալդիից:

Բաէտոլէտում զօրապետն աւստրիացիներից կործանված մի կամուրջ շնել ավեց. և վերջապէս հասաւ իրան խոստացված օգնութիւնը, որովհետեւ թագաւորն ինքն այդ մասին չերմալէս թափանձեց Զիւլդինի-ին: Կամաւորները, հակառակ աւստրիացիների առաւելագոյն թուին, պահեցին իրանց դիրքերը: Դըժբաղդ բոօնձէտո աւանդեց իր հոգին բոէշիայում, 17-ին:

Աօմբառդիայում տարածված մի լուրին նայելով, աւստրիացիների մի բանակ կամենում էր իջնել Տուէնտինո-ի և Վալտէլինա-ի վրայով՝ հարուածելու համար գանակիցներին կուշտից: Գարիբալդի մինչև Սալօ առաջանալուց յետոյ, ուր, 18-ին, գառդայի լճի վրայ ընկղմեց մէկ աւստրիական պատերազմանաւ, միացնում է իր ոյժերը Վալկամօնիկայում և յետ է մղում աւստրիացիներին, որոնք յուլիսի 5-ին փորձեցին անցնել Բօումիօն: Այդ միջոցներում նա մտածում էր ուրիշ նոր յաղթանակների մասին, որոնք ուրիշ եղեայների շղթաներն էլ պէտք է կոտրատէին, երբ նրան շանթի պէս հարուածեց Վիլաֆուանկայի տարաբաղդ խաղաղութեան լուրը:

Անետիկը խաբված էր:

XIX

ՎՃՏԻ ԳԼՈՒԽԸ:

— Տէր, ասում էր Գարիբալդի Վիկտոր Էմանուէլին. Վիլաֆուանկայից յետոյ ես և իմ բանակի բոլոր պաշտօնեաները տալիս ենք մեր հրաժարականները: Ի՞նչ պատասխանեց նրան թագաւորն — այդ դադունիք է: Անշուշտ յուսատու խօսքերով հանդստացրած

պէտք է լինէր նրան, որովհետեւ այն մանիֆէստներում, որոնք նա գրեց յետոյ, չէ երեսում, որ դեռ հաւատաքը կորցրած լինէր: Բայց այդ միջոցին բացվում են Զիւլդինի կօնֆէրէնցիաները, և Գարիբալդի դող է ելնում նոր, մեծանձն անհամբերութիւնից:

— Անդրում եմ անսահման հրաժեշտ, գրում է նախարարութեան:

Կախ և առաջ մերժում են նրան տալ այդ, յետոյ գիշանելով նրա յաճախակի թափանձանքներին, շընորհում են նրան և յայտնում, որ պիէմօն տական կառավարութեան անծանօթ պատճառներով՝ կառիբալդի թողնում է իր կազմած բանակը և մեկնում Տօսկանա: Այնտեղից նա անցաւ Ռոմանիա (Roma) և օգնեց Գանտիկին կենտրօնական Իտալիայի բանակի յարդարման գործում:

Եւ այստեղ նոր անհնարին ցաւեր բարդվելով մէկը միւսի վրայ, խոցոտում էին մեծ մարդու սիրտը: Յիշում էր այն կնոջ պատկերը, որ երեցաւ նրան Վառէլում, ուր նրան կանչում էր կօմցի օգնութեան: Գարիբալդի կարծեց գտնել այն կնոջ մէջ նոր ընկերուհի, իր կեանքի զօրավիդը: Եւ ամուսնացաւ նրա հետ: Հատ ուշ իմացաւ, որ նա արժանի չէր իրան. և կարեվէր սրտով, հարսանիքի նոյն իսկ օրը, յանձնելով աղջիկը մարկիզուհի Ռայիմօնդիկին՝ մէկնեցաւ կապուեալ Մէնօտակի և Բասսօ բարեկամի հետ:

Արտմտած այն ընդունելութիւնից, որը ցոյց տվին խալացիները կատարված գէպերի նկատմակը, հրաժարվեց Ազգային Ընկերութեան նախագահ հութիւնից և Հիմնեց մի նոր ընկերութիւն՝ Զինաւոր ված Ազգ (Nazione Azzata) անունով, գիւանագիտական արուեստի տեղ ժողովրդի զօրեղ մի ձայն գնելու համար: Նոյն այդ ժամանակ լուծում են հին աղդային ժողովը (Cham-

ხოდ), և նա՝ բազմաթիւ ընտրական շրջանակների քուէնեւ-
րով մտնում է պառլամենտը: Վիլսաֆրանկայի խաղաղու-
թիւնը խլում էր նրանից իր ծննդավայր սիրած քաղաքը,
իր սիրած Նիցցան: Եւ այն ժամանակ Գարիբալդի, վի-
րատորված սրտի պերճախօսութեամբ խօսեց անարդար
խաղաղութեան դէմ և ժողովում խնդիր բարձրացրեց
մինիստրութիւնն ամբաստանութեան վիճակի ենթարկե-
լու մասին... Խնդիրը լսելի չեղաւ...

Կըանից կորզեցին այն հողը, ուր հանգստանում
էին մօրը սոկորները, որպէս թէ իտալիայի համար օտար
լինէր այն երկիրը, ուր նա լցու տեսաւ, իսկ ինքը,
միշտ մեծանձն, օտարականի առաջ նուաստացած իտա-
լիայի համար պատրաստում էր միութիւնը և փառքը
— պատրաստում էր Մառսալյայի արշաւանքը:

XX

ՄԱՌՍԱԼՅԻ ՀԱԶԱՐԸ.

Թռեւրը խաչաձե կրծքի վրայ ծալած, աչքերը գե-
տին յառած, Գարիբալդի մտածում էր: Նրա առաջ
լուս և յարգանքով կանգնած էին դօկտօր Բէռտանի,
մի նաւաստի և մի քանի երիտրարդներ:

|| սկսում էր նրա մրմնջելը.

— Խակ կավուու, իսկ հապօլէօն...

Յետոյ յանկարծ դառնալով նաւաստիին. „գու ինձ
ապահովացնում ես սակայն, հարցըց նրանից, որ ա-
պստամբութիւնը Սիկիլիայում բորբոքվում է:“

— Պատարելապէս, զօրապէտ, պատասխանեց նա-
ւաստին: Այսեղից եմ գալիս, և Ռօզալինօ Պիլօ և
Կոռաո, որոնք ես ինքս ցամաք հանեցի, դիմում են
ուղիղ Պալէռմօյի վրայ, որ ապստամբութեան մէջ է,

տարածելով գրգռումը բոլոր իրանց անցած ձանապար-
հի վրայ: Սակայն նրանք զոհ կը գնան, եթէ նրանց
օգնութեան չը համնցէր ձեր անունն ու ձեր բազուկը:

— Ա աւ, բացականչեց Գարիբալդի, և դառնալով
միւսներին. „Դուք էլ գալիս էք:“

— Յայտնի բան է, գալիս ենք ամենքս էլ և մեր
բարեկամներն էլ մեղ հետ միասին:

— Հաղար հոգի բաւական է ինձ. աւելի չեմ ու-
զում... Եւ հիմա բաւական է որբան շատախօսեցինք:

Այս կերպով ահա Վիլլա Վէկիիս ա կուտառո-
յում, Զէնօվլյի մօտ, ուր գտնվում էր Գարիբալդի
1860 թ. ապրիլին, վճռվեց Հաղար-ի արշաւանքը: Եւ
ժամանակն էր, որ եղայլներն օգնէին եղայլներին:
Պալէռմիտանները (Պալէռմո քաղաքի բնակիչ) սորի
էին ելած արդէն սկսած ապրիլի 4-ից և գանչայի
վանքում, ուր փախած ապահուած էին ապստամբները,
տեղի ունեցած աւերն ու կոտորածը և մաշւան գա-
տապարտութիւնները նուազեցրին քաղաքացիների սէրը
գէսի ազատութիւնը: Կառինի-յում միենցին ամսի 18-
ին, կատարվեցան սոսկալի ու զազեր եղենագործու-
թիւններ. աղատականները ստիպված էին ապաւէն փրն-
տըուել լեռների վրայ, որտեղից շարունակում էին կեն-
դանի պահէլ ապստամբութիւնը:

Պայիսի 4-ի երեկոյեան մի քանի մարդ մտնում
էին Զէնօվլյի նաւահանգստում լնկած մի հին, խար-
խուլ, կմակը դարձած նաւ, որ կոչվում էր Ն ա-
վէ Ժօղէֆ: Դրան շատ մօտիկ գտնվում էին Պի Է-
մօն տէ և Լո մը ա ո Ռուբատտինօ ընկերութեան
երկու շոգենաւերը: Վերջինս ասել էր. „Առէք իմ
շոգենաւերը, սակայն այնպէս ձեւացրէ՝ որպէս թէ
ուժով էք տիրանում նրանց, որպէսզի կառավարու-
թեան հետ գլխի ցաւ չընենանք:“

Այս վճռական մարդկանց մէջ, որոնք 4-ի երեկո-
յեան ձեռնամուխ եղան շոգենաւերի գրաւման գործին,
դտնվում էր նինօ Բիբսիօ, որ գրապանիցը գնդապետի
մի գլխարկ հանելով, դրաւ գլուխը և բացականչեց
յառուկ մի ձեռվ.

— Այս վայրկեանից սկսած ես եմ հրամայում:
Ուշդրութիւն իմ հրամաններին:

Մէկ անկթարթում ցատկեցին երկու շոգենաւե-
րի վրայ և վառել տվին կրակները մեկնան համար:
Պատրաստութիւնը տեղ համարեա ամբողջ գիշերը.
մայսի 5-ի արշալոյսը ծագում էր արդէն, երբ երկու
շոգենաւերն ուղղվեցան դէպի կուտառո, ցամաքը դուրս
գալու ժամադրափայրը:

Գարեբալդի ծովափումն էր, հագած իր կարմիր
շապիկը, վրան առած րոնչուն և կշտից կախ արած
սուրը: Հանդարտ էր և պայծառ. այն համարձակ ձեռ-
նարկութիւնն իրան համար մի պարտականութեան լը-
րացումն էր: Նրա ետել կանգնած էին երիտասարդ-
ները, որոնց գաղտնաբար իմաց էր տրված մեկնան
մասին. ամենքն էլ փորձառու մարդիկ, Ամերիկայի Լէ-
գէօնառներ, զոօմի և Վենետիկի պաշտպաններ, Ալպ-
եան վաղեմի Որսորդներ և ուրիշ նորեկներ՝ պատե-
րազմների մէջ նետվելու եռանդով լցված, ծաղիկ ե-
րիտասարդութիւնը հայրենիքին նուէր բերելու տենչով
տոգորված: Ամբողջ Խտալիան ներկայացված էր այնտեղ:
Աչքի էին ընկնում Սիւտոնի, լուրջ ու վճռական,
կափոլիները, գոհածոտտի, Պէրգուկա և Պավիացի
Բասսինի, Միասոնի, Մայօկիկի, միլանցի Աիէզա, վինե-
տիկի Մառինի, տուկանցի Բանդի, Աչէռի և ման-
տօվացի Իպալիտո Նիէզուն, բէոգամօցի Կուլօւն, Հոօ-
մայեցի Բոռուցէզի, Կանցի և երկու Մօստոները, Սա-
վի, Բուռլանտօ, ջէնօվացի Ստալլօ, Կախապի և իր ա-

ռաջին ընկերուհին (Խմբի մէջ միակ կինը), Լա Մա-
զա, Կաստիյլիա, Կառինի, Կալվինօ, սիկիլիացի Պալեց-
ցօլօն, Մառուուն և կալաբրուացի Սիչէլի-ն, Բնչպէս և
Ստոկիո, Անֆօսի, Ռիպառի, Բոլդուինի, Ջիուլինի... և
միւս հաղարը: Խարիսխ վերցնելու բոպէին պակասում
են այն հրացանների ամբողջութիւնը, որոնք ձեռք էին
բերված հայրենիքի աղատութեան համար մէկ մի-
լի օն հրացան անունով բացված ժողովրդական ըս-
տորագրութեան արդիւնքով:

— ։ո՞դ չէ, բացականչեց Գարեբալդի, կը մեկնենք
առանց դրան էլ:

Եւ երկու շոգենաւերը սուլելով, ճանապարհ են
ընկնում դէպի լայն ծովը: Տալամօնէում գրաւում են
զէնքեր ու ռազմամիջերքներ: Այդտեղ իսկ հազարը
բաժանվում է եօթ մասերի, որոնց ամեն-մէկի հրա-
մանատարութիւնը յանձնվում է Բիբսիօնին, Օռունի-ին
Ստոկիո-ին, Լա Մազա-ին, Անֆօսի-ին, Կառինի-ին և
Բէնէդէտո Կափոլի-ին. Մօստո-ին տրվեցան քէնօ-
վայի կառաբինիէռները. Սիւտոնի-ին՝ Ապայապետու-
թիւնը (Etat Major). Տիւռու-ը նշանակվեց որպէս բա-
նակի առաջին օգնական, Աչէռը՝ տեսուչ, իսկ Ռի-
պաու՝ առողջապահական ծառայութեան պետ: Յետոյ
կազմեցին մէկ ուժերորդ յաւելուած, Պավիացի Բաս-
սինի Անջէլօ-ի հրամանատարութեան ներքե, բաղկա-
ցած համարեա բացառապէս Կարիճ բէոգամօցիներից:
Այնտեղից մի նամակ ուղարկեց Վիկտօր Էմանուէլին:

“Տէր, այն տառապանքների ձայնը, որ Սիկիլիացի հա-
սաւ ինձ, շարժեց իմ և իմ հարիւրառ վինակից ընկեր-
ների սրտերը.... Լաւ գիտեմ, որ ձեռնարկում եմ
վտանգալից գործի, սակայն յանձնապաստան եմ լի-
նում Աստուծոյ և իմ ընկերների քաջութեան ու անձ-
նուիրութեան:”

Եզրակացնում էր ասելով, որ պատերազմի աղաւակը պէտք է լինէր „Խտալիս և վիկտօր կմանուէլ:“

Միենյն ժամանակ գրում էր բէռտանի-ին բարձրացնելու յեղափոխութիւնը կենտրօնական Խտալիայում և գրգռելու խտալացների ազդային զգացումը՝ հայրենիքը կանգնելու համար... .

Կաւերը ճեղքում անցնում էին ծովը: Պիէմօնտէ-ն, որի վրայ գտնվում էր Գարիբալդի, պանում էր Լոմբարդո-ից երկու մղոնով աւելի առաջ. 10-ի գիշերն աչքից անհետ եղան: Գարիբալդի որ և է թիւրիմացութեան առաջն առնելու համար՝ մտածեց սպասել Լոմբարդո-ին, բայց և մարել տվեց կրակները, որպէսզի թշնամի նաւերի մէջ կասկած չարթնացընէ:

Ինքսիօ, որ իր կողմից միւնոյնն արել էր իր շոգենակի վրայ, տեսնում է մի սկ կոյտ՝ անշարժ կանգնած ծովի մէտեղ. խսկոյն մտածեց, թէ գուցէ իրան գերի վարելու համար դարանի կանգնած լինէր այնտեղ: Մի գուումով արթնացնում է կամաւորներին, տալիս է հրամաններ և գրգռում է դէպի մարտ: Բայց նոյն այդ միջնոցին մի ձայն հնչում է միջութեան մէջ.

—Օհէ, կապիտան Ինքսիօ:

—Գարիբալդի, պատասխանում է սաստիկ զարմացած:

Վիչ էր մնում որ Հաղարճները միմեանց զարնէին:

11-ի արշալոյին, աղատութեան արգոնարդները տեսան Սիկիլյի կանանչաղարդ և ուրախ ափերը: Օրն ուրբաթ էր: Գարիբալդի որոշում է ցամաք գուրս գալ Մառսալյի նաւահանգստից: Երկու բուռբօնեան ֆուէժատներ, կապուի, Ական-ի հրամանատարութեան տակ և Տանկու գի, կառաչչիօլո-ի հրամանատարութեան տակ, հետեւում էին նրանց: Ակայն զօրապետն առանց

շփոթվելու հրամայում է ցամաք ելնել: Խլեցնում է կամաւորներին նաւահանգստում գտնվող մակոյիների մէջ և ուղարկում ցամաք: Մի վայրկեանից միւսը սպասում էին, որ բուռբօնական ուումբերն աչա կը պայմէ-ին և ծովի յատակը կիշեցնէին մակոյիները. սակայն հնառէպիդ (Intrepid) և Առգուս (Argus) անգլիական նաւերը, որոնք նաւահանգստում կանգնած էին, աղդաբարեցին բուռբօնեաններին չարձակել ուումբերը, մինչև իրանց պաշտօնեանների գուրս գալը և վտանգից զերծ լինելը. բայց դրանից զգուշացրին չը վնասել նաւահանգստի վրայ գտնվող անգլիական տներին: Այդ եղաւ մի փրկարար յապաղում: Երբ թագաւորական նաւերից կրակը սկսաւ տեղալ, մերոնք արդէն ամենքն էլ ցամաքի վրայ էին: Հաղարի մէջ կար և գէնտասույլիա անունով մէկը, Պիէմօնտէ-ում մի ժամանակ հեռագիրների տեսուչ, որ իր հետ ունէր հեռագրական գործիքները: Առաջններից մէկը եղաւ իր երկու երեք բարեկամների հետ, որ նետվեցան մի մակոյի մէջ, գուրս եկան ափը և վաղեցին հեռագրատուն: Պաշտօնեանները վեր են ցատկում սարսափած:

— Փառղ ոչ ոք չը շարժվէ իր տեղից, աղաղակում է գէնտասույլիա: Մօտենում է գործիքին և տեսնում է, որ դէպի Տռապանի հեռագրված վերջնն խօսքերն էին սրանք. հեռաստան նաւեր:

Տռապանիի պաշտօնատունը տեսնելով դադարումը, խփում է և հեռագրում.

— Ինչո՞ւ էք լուսմ: Ի՞նչ կայ նոր: Խակ նաւերը:

— Ի՞նչ նաւեր, պատասխանում է հեռագրով գէնտասույլիա:

— Այն նաւերը, որոնց վրայ զինված մարդիկ կային (պատասխանում է Տռապանի): Պալէռմո-ից տեղեկութիւններ են ուզում ստիպողաբար:

— Աւերը (հեռագրում է այն ժամանակ Պօնտասույլիս) ցամաք հանեցին մի քանի հաղար մարդիկ և բազմաթիւ թնդանօթներ:

Տուապանիի պաշտօնեան երկիւղեց վեր է ցատկում, մարդ է ուղարկում տեղեկացնելու հրամանատարին: Արդէն Տուապանի-ից մի գումարտակ շարժվել էր գէպի առաջ յարձակվելու յոդնած գարիբալդեանների վրայ, բայց այդ տեղեկութեան վրայ զինորները սարսափահար կանգ են առնում և փակվում զրանոցների մէջ:

Մինչ ուումբելն ընկնում էին Մառսալայի վրայ, առանց մեծ վնաս պատճառելու, չորս բուռբօնեան զօրախմբեր փախուստ էին տալիս շտապով, սարսափի մէջ ընկած միմիայն այն յայտնութեան վրայ, թէ գարիբալդեանները ցամաք էին դուրս եկել: Մինչ այս, մինչ այն, գարիբալդի հաստատում է մի ժամանակաւոր կառավարութիւն և ուղղում է սիկիլիացիներին իր հակիրծ և ազդու մանիֆէստներից մին.

«Սիկիլիացիներ, ես ձեզ համար առաջնորդելով բերի կտրիձների մի խումբ, որոնք փազեցին եկան Սիկիլիայի հերոսական ձայնին: Մենք ձեզ հետ ենք — ուրիշ բան չենք կամենում, բայց եթէ մեր երկրի ազատութիւնը: — Գործը հեշտ և կարճ պէտք է լինի, եթէ ամենքս միացած լինենք: — Ով չէ վերցնում զէնք, նա վատ է կամ հայրենիքի դաւաճան...»

XXI

ՀԵՐՈՍՆԵՐԻ 201Կ.

11-ին ցամաք ելան — 12-ին Սալէմի հասան — 15-ին Ճանապարհ ընկան գէպի կալատափիմի: Շատ

սիկիլիացիներ ոգեսորութեամբ միանում էին մեծ մարդկանց բանակին:

— Յոյս ունեմ, որ մեծ բազմութիւն կը լինենք, ասում էր գարիբալդի, ժպտելով: Ճանապարհին մի ֆրանչիսկեան եղբայր ընթանում է զօրապետի ձիու առաջ:

— Ոչչին, ով գարիբալդի, բացականչում է: Քո գարիբալդը լրացնում է ստրկութեան մարդարէների խօսքը: Դու ազատութեան ձշմարիտ Մեսիան ես: Թոյլտուր, որ չետեւմ ձեր յաղթական քայլերին: Խաչը մի ձեռքիս, սուրը միւս ձեռքիս, ոտքի կը բարձրացնեմ ամբոխները յանուն հայրենիքի սուրբ անուան:

Գարիբալդի մի վայրկեան մնաց վարանված ու անորոշ վիճակում. յետոյ՝ մեկնելով ձեռքը գէպի եղբայրը.

— Ուգօ Բասսի, ասաց, մեռած չէ: Քո մէջ վերբրսին գտնում եմ նրա ոգին: Հետեկի ինձ:

Այն եղբայրն անուանվում էր Զիօվաննի Պանտալէօ: Իր անշահանդիր անձնուիրութիւնը գէպի Իտալիայի դատը կամաւորների համար ոչ նուազ արգաւաւոր եղաւ:

Լանդի զօրապետը հրամայում էր 3,500 բուռքանների, որոնք ունէին իրանց հետ 4 թնդանօթներ. Հաստատվել էր նա Պիանտո գէմ Ռոման ասված բըլուրի վրայ, կալատափիմի-ում: Մերոնքը, ընդամենը 1,200 հոգի, կամենում էին ուժով գրաւել այն տեղը, որպէսզի ընթանային ուղիղ Պալէոմօ-ի վրայ: Զէնօվացի կառավիրիւներն ու առաջնորդները շարվում են պատերազմի և չեն շարժվում. բուռքանները ցածինելով բլրակից, կանգնում են նրանց գէմ, սակայն արանք մնում են լուռ. կրակ արին — գարձեալ լը-

ոռութիւն։ Երբ մօտենում են, այն ժամանակ մերոնք աշխուժով յարձակվում են թագաւորականների վրայ և նրանց կարգերը շփոթում։ Սակայն թշնամիների թընդանօթները կասեցնում են Հաղպարին. վրայ են հասնում ուրիշ աւելի թարմերը և կրկնում յարձակումը, սակայն երկրորդ յարձակումն էլ խափանվում է միտրայլց։ Սկիաֆինո, որ կրում էր մի եռագոյն դրօշակ, ընկնում է ոգեսպառ։ Դրօշակի վրայ ծագում է մասնակի կուտ. բուռքները պինդ պահում են նրան, սակայն մերոնցից մին ի բաց պատառում է ամբողջ կտաւը։ Գարիբալդի հրամայում է երրորդ յարձակում։ Թագաւորականներն արգէն երերվում էին, երբ նրանց թնդանօթները միտրայլ ժայթքելով, կոտորած են ձըդում կամաւորների մէջ։ Մենք էլ սակայն ունենք թընդանօթի նման բաներ, որոնք ուղղվում են թշնամուդէմ։ Կրկնվում է մի չըրրորդ յարձակում անդիմադըրելի սաստկութեամբ, որն առաջնորդում է նոյն խէլ ինքը Գարիբալդի, և թագաւորականները, ցրված և կարգերը քակված, մեծ շտապով փախուստ են տալիս։ Կորիւր պատահեցաւ մայիսի 15-ին և տեսք առաւօտայ ժամը 10-ից սկսած մինչև երեկոյեան 6-ը։

Պալատափիմին առնվեցաւ. մնում է զալէռմօն։ Այնտեղ կան 24,000(0) մարդ, այնտեղ են ումբաձիգ զօրքը և ամրութիւնները, այնտեղ՝ հռչակաւոր զօրապետ Բօսկօ։ Ի՞նչ կերպով կարելի կը լինի յաղթել արդեօք։

Գարիբալդի իսկոյն յաղնում է պատերազմի մի յատակիծ, որի մէջ ցողանում է իր հանձարը։ Մարդ է ուղարկում Ռոզալինո Պիլօ-ին, որ լերան վըրայ բանակած էր, իմացնելու, որ Պալէռմօն ըրջապատող բլակների վրայ մեծ կրակներ վառէ և աշխատէ տկարացնել առաջացող պահպես բիներին։ Յետոյ ուղարկում է լա Սալան իր փոքրիկների հետ (Սիկիլիա-

ցի երիտասարդներ, որոնք ընթացած էին եռագոյն դըրոշակի տակ) Զիբիլը սասա-ի բարձրութիւնների վրայ, ուր նրանք տեսնվում էին վեր ու վայր վազելին, աչագնագործ փողեր փչելով։ Այսպէս նա ձեացնում էր իբրև թէ կամենում էր յարձակվել Մօնուէալէ-ի վրայ։ Զօրապետ Բօսկօ դիմում է այստեղ 8 հազար զօրքով, յետոյ, տեսնելով փոքրիկներին տարածված բլուրների վրայ նուրբ շղթաներ կազմած և միւս կողմից տեսնելով իրան ենթակայ եղած Ռոզալինո-ի յարձակման, ուղարկում է բերելու այլ ևս 8 հազար զօրքեր, որոնք Պալէռմօ-ում էին։

Ռոզալինո Պիլօ, որ ճիգ էր թագում միանալու գարիբալդին, խառնուրդի մէջ մի գնդակ ընդունելով Ճակատին, գիտապատ ընկնում է նոյն խէլ յաղթանակի վայրկեանին։ Կոկորդների ընդհանուր Ճակատագիր։

Այն ժամանակ Գարիբալդի հրամայում է փոքրիկներին քաշվել դէպի Պատուինիկօ։ Բօսկօ կարծելով որ նրանք փախչում են, չետեւում է նրանց։ Ռազմագիտական հնարագիտութիւնն աջողել էր։ Մինչդեռ բուռքնեան զօրապետը կարծում է, թէ Գարիբալդին իր աջ կողմն է ընկել, սա 23-ին իրայինների հետ միասին գտնվում է նրա ձախ կողմը։ Այնտեղ գնացել էր նա մի փոթորկալի գիշերով, անցնելով լեռնային կոկորդը, գժւարին Ճանապարհներով։ Բայց Բօսկօ մարդ է ուղարկում Պալէռմօ նոր գունդերի ետևեց, կարծելով, որ կածողէ իր առաւելացներ թուով իսպառ խորտակել Գալիբալդիին։ Ի՞նչ է անում այն ժամանակ մէր պետը։ Հրամայում է գնդապետ Օռախինի-ին ձեացնելու մի նահանջ դէպի կոլէօնէ և սրիւել տարածել Ճանապարհի երկարութեամբ կօշիկներ, պարկեր, զգեստներ, կարծել տալու համար, թէ բանակի մէջ արհաւելք (բանիզ) է տարածված։ Կրկին

Բօսկօ ընկնում է ծուղակը և սկսում է հալածել նրան, կարծելով, թէ գարիբալդիին է հարուածում:

Իսկ սա անցնելով անտառներ, լեռներ ու ձորեր, առանց Բօսկօ-ից տեսնվելու, հասնում է Մառինէօ. այնտեղ մի քանի վայրկեան իրայիններին հանգիստ տալուց յետոյ՝ ձանապարչ է ընկնում դէպի Միսիլմէոի: Այնտեղ խնդրում է իմանալ իր հարիւրապետների կարծիքը, մի բան, որ սովորական չէր իր համար: Բայց ամենի համար էլ կեանքի և մաշւան ինդիր էր: Պատերազմական խորհուրդը տեղի ունեցաւ սաղարթախտ մի ծառի տակ: Գարիբալդի խօսում է կարճ ու որոշ կերպով.

— Մեր առաջ երկու ձանապարչ ունենք. կամ յարձակում տալ Պալէոմօ-ին, կամ քաշվել կղզու ներսերը: Ո՞ն էք նախադասում:

— Յարձակում տալ Պալէոմօ-ին, պատասխանեցին միաբերան:

— Լաւ, այն ժամանակ պատրաստ եղէք վաղւան:

Գարիբալդիի զօրքը 4500 էր, որի մեծ մասը բոլորովին նոր էր զէնք բռնելու համար: Եւ, ցաւալի բան, անփորձութեան վասները երկեցան: Գարիբալդի հրամայել էր գնալ Պալէոմօ-ի վրայ լոռութեամբ, առաջին կայանները սուխներով գրաւել յարձակումով և յանկարծակի մտնել Պալէոմօ:

27-ին արշալյան համար են քաղաքի արուարձանները. սակայն փոքրիկները մի քանի հրաձանաձգութիւնից զարհուրելով, սկսում են գոռում գոչումով փախուստ տալ: Ի զուր Պանտալէօ եղբայրն աշխատում է նրանց պահել. նոյն ինքն Բիքսիօ յետ է գառնում, տեսնելով փախչողներին: Այս կերպով թագաւորները հասկանում են գաղտնի դիտաւորութիւնը. յանկարծակի բերել ի դերեւ ելաւ:

Վիոտօնի հրամայում է յարձակվել սուխներով և մղվում է դէպի առաջ մի քանիսներ հետևում են նրան. համար են Տուկուհի առաջապահը և քաջարին նուլո, որ այն ամենայանդուգն յարձակման մէջ առաջինը եղաւ, Ամիուայլատօ-ի կամուրջից այն կողմըն է անցնում: Մի գնդակ խրվում է Բիքսիօի կըրծքում, բայց նա հաստատուն ձեռքով դուրս քաշեց փամփուշտը մսերի միջից և շարունակեց պատերազմը:

Պատերազմը ստանում է ընդհանուր կերպարանք: Գարիբալդի ուղարկում է օգնութեան գնդերն էլ, և ամենքը միասին իրանց ոյժերը թափում են պատնէշների վրայ, բռնադատում են դուռը և մտնում քաղաքը: Այդ միջոցին՝ Վիչենցո Գուքսա, որ ուղարկված էր Գարիբալդիի կողմից Պօւտա Ռէալէ (թագաւորական դուռ), նա էլ մտնում է այնտեղ իր սիկիլիացիների հետ... և Պալէոմօն առնված է:

«Նչում են զանգակներն աղմկալի կերպով. բացվում են տները և քաղաքացիներն ազատված՝ վազում են քաջերի գերկը:

XXII

ԳԱՐԻԲԱԼԴԻՆ ԴԻՏԱՆԱԳԻՏ.

Իռուբօնեան պաշտօնաւորները, որոնք ամեն անգամ փառաւորապէս ծեծվում էին Գարիբալդիից և կարմիր շապիկների առաջ սարսափահար փախչում, ամենամեծ արհամ ըանք էին տածում դէպի զօրապետը: Սակայն Լանձա, թագաւորականների գերագոյն պաշտօնեան, զինագագարի պէտք ունէր մեռեալները թաղելու և վիրաւորները մէկ ապահով տեղ փոխադրելու համար: Ո՞վ պէտք է երթայ Գարիբալդիի մօտ:

Իր պաշտօնաւորները մերժեցին գնալ, այն ժամանակ Լանձա մտածեց ուղարկել այնտեղ մի գարիբալդեան, որ գերի էր ընկած իր ձեռքքը: Կանչել տվից նրան իր մօտ և

— Ալ կամենայի՞ր, հարցը եց նրանից, գնալ Գարիբեալդիի մօտ՝ խնդրելու մի քանի ժամեայ զինագաղաք, և եթէ յանձն ես առնում գնալ, խոստանում ես, որ կը վերադառնաս:

— Յանձն եմ առևում գնալ, պատասխանեց կալանաբղը, և կր վերադառնամ:

— Ի՞նչ գրաւական, պնդեց Լանձա, ունես տալու վերադառնալուդ համար:

—Պատրի Խօսք, պատասխանեց նա, մէկ իտալացու, որ իր կեանքը նուէր է բերել Հայրենիքին:

Եւ գնաց Գարիբալդիի մօտ: Նրան յայտնեց թըշ-
նամու զօրապետի ցանկութիւնը. ապա ողջունելով նը-
րան, կրկին ձանապարհ ընկաւ գէպի բուռքօնեան բա-
նակը: „Գնա՛, զաւակս, ասաց նրան ողջունելիս Գարի-
բալդին. քո առաքինութեամբ բարձր պահիք Խտալիս-
յի պատիւը:“ Գարիբալդեանի վերադարձը սաստիկ զար-
մացրեց զօրապետ Լանձային և բոլոր նրա պաշտօնեաներին.
Նրանք աւելի ուրբախ եղան, իմանալով, որ համաձայն-
վում էր բանակցելու: Ցաւում եմ, որ մոռացել եմ
այն Գարիբալդեանի, Ատոմիլս Ռէգօլօ-ի պատիկ ժա-
ռանգորդի, անունը. յիշում եմ միայն, որ նա վենե-
տիկի էր:

Առաջին բանակցութիւնները յանդեցան միայն քըսան և չըրս ժամեայ մի զինադադարի: „Ուզում էին, ասաց Գարիկալդի Պալէսոմօ-ի ժռղովըդին, որ ես ընդունէի անպատճեր պայմաններ և վերադարձը դէպի հին ճորտութիւնը, որոնք ես մերժեցի ձեր անունով:“

— Ա եցցէ՝ գարիբաղդի, պատասխանեցին պալէոմիտանները: Լաւագըն է մահը, քան բուռբօնը:

Ղուտով ձեռնարկում են պաշտպանութեան միջոցների և պատնէների հաստատութեան։ Բայց նոյն այդ միջոցներին զօրապետ Բօսկօ խուժում է գէպի Պօռատա Տէրմինի։ Զօրապետ Սիրտօսին (այն ժամանակ գնդապետ) ուղղվում էր այն կողմը, երբ տեսնում է ժողովրդի մի խուռն բազմութիւն խառնաշխոթ ու աղմկալից յետ քաշվելիս, խակ նրանց ետևից, նաև փախըստական, Լա Մազայի փոքրիկների խմբերը, որոնք աշխատական, Էին ահարեկ. ոթագաւորականները, թաղաղակում էին ահարեկ. ոթագաւորականները, թագաւորականները։ Սիրտօսի մերկացնում է սուրը և վագելով փախստականների ետևից, կանգնեցնում է նրանցից շատերին սրի տափակ հարուածներով։ ոՒ՞նչ էր ցից շատերին սրի տափակ հարուածներով։ Թըշանում, գոռում է։ Զէք ամաչում վատութիւնից։ Թըշանմին ձեր ետևն է. դարձրէք ձեր ճակատը նրա գէմ, կռւեցէք, ի սէք Աստուծոյ։ Եւ իր օրինակով խրախուսելով, հանեց նրանց թշնամու գէմ։ Եւ կատարեալ աջողութիւն եղաւ այդ, որովհետև այդ կերպով արգելք եղաւ բուռբօններին 48 ժամւայ զինադադարի համար լինելիք զինաթափութեան միջոցին՝ յարմար դիրքերը գրաւելու։

Աւելի յետոյ, զինադադարը երկարնցաւ պահաւ մարեք օր. և վերջ ի վերջոյ խօսվեցաւ հաշտութեան մարեք սին: Եւ այստեղ, ասում էր Սիոտուի, գարդիբալդի հանեց գիւանագիտական այնպիսի ճարտարութեան հանեց գիւանագիտական այնպիսի ճարտարութիւն, որ կարող էր յաղթել ամենաեփված պետական անձին: Խօսելով թշնամի զօրապետների հետ, ասում էր նրանց.

— Ես հիացած եմ ձեր քաջութեան վրայ։ ԵՐԵ
ձեր զինւորներն արիաբար պատերազմում էին մերնց
դէմ, ասում էի իւրովի հառաշելով. „Երկու բանակ-
ների խտալցիներ, ի՞նչու փոխանակ միմանց խողիո-
ղելու, չը կարողանային միասին պատերազմէլ հայրենի-
ղելու,

Քի անունով օտարականի դէմ: Այն զինուորների առաջնորդների ոգին, որոնք այսօր մեր թշուամիներն են, վաղը կարող էր տանել մեզ շատ աւելի փառաւոր պատերազմներից:

— || ակայն, զօրապետ, ընդհատում էր բօսկօ, հաւատարմութիւնը, որ ունեմ գէպի մեր օրինաւոր թագաւորը, թոյլ չէ տալիս ինձ հետևել ձեզ այդ գաղափարներով . . .

— «Քաշւ լիցի, քաշւ լիցի, վրայ էր բերում գառ
ըիթաղի, բայց նոյն իսկ այդ հաւատարմութեան հա-
մար ձեզ վայել չէ աւելի ևս մնալ Պալէռմօ-ում:
Այստեղ մնալով, դուք աւելի էք վնասում քաղաքին,
խաղաղ քաղաքացիներին, քան պատերազմող հակա-
ռակորդներին. ընդհակառակը, տեղափոխելով պատե-
րազմը բաց դաշտի մէջ, այստեղ ձեր առաջ կունե-
նաք միմիայն զինված մարդիկ: Դուք ինքներդ շատ լաւ
պէտք է հասկանաք մեր դրութիւնը: Մենք պէտք ու-
նենք տարածվելու, ապա թէ ոչ զուր է մեր գործը.
և եթէ յեղափոխութիւնը Սիկիլիայից տարածվէ մայր
ցամաքի վրայ, այն ժամանակ դուք մեր համաքաղաքա-
ցիների աչքին կերևաք որպէս գարշելի և եղայրաս-
պան մարդիկ: Պատերազմական դափնիները չեն հրա-
պուրում մեզ. ես չեմ եկած այստեղ պատերազմը բե-
րելու, այլ իրապէս, ազատութիւն ու եղբայրութիւն...»

Այսպէս փոխիսաբար գովեստներ, ռազմագիտական
նկատողութիւններ յայտնելով, հայրենիքի սէր արծար-
ծելով նրանց մէջ, Գարիբալդի աշխատում էր սիրա-
շահել Բօսկօ և Կօլոննա զօրավարների հոգին, որոնք
եկել էին ժողովին: Եւ եթէ այն իմաստուն խօսքերին
աւելացնենք ձևերի ազնւութիւնը և ձայնի հմայքը,
աւելի լաւ կը հասկանանք նրա առաջ բերած հը-
րապոյրը:

Պատրիքազդին խօսքերը տարածվում էին Երկու բանակների մէջ և եթէ բոլորովին չէին խռնարջեցնում գորապետներին, բայց և այնպէս խրամատներ էին բաց անում բռուբօնական զինւորների սրտերում։ Եւ աշակերտանք թողնում են թշնամի բանակը, նախ առանձին սրբանք յեղանում՝ խմբովոյ՝ խմբովին, և մժում այն բանակը, ուր ծածանվում էր եռագոյնը։

Ճաղղղվուրդը կամենում էր, որ նա տաճարի գոյացությունը կապահպահում էր, որ եպիսկոպոսները միապետներին

էին հարկում. և գալլուբառդօն ամենքի բերա-
նումն էր, ամենքի սրտերումն էր:

XXXIII

ՄԻԼԱՀՅՈՒՅԹ ՖԱՌՈ.

Գարիբալդի իր չաղարի մէջ յիշատակում է Միլահձօ-ի պատերազմը (20 յուլիս 1860) որպէս մէկն այն ամենանշանաւոր պատերազմներից, որոնց ինքը մաս-
նակցել է: Բօսկօ կամենում էր կտրել բառչէլճնարի ճանապարհը նրա առաջ, իսկ Գարիբալդի՝ արգիլել Մէս-
սինայի ճանապարհը Բօսկօ-ի առաջ: Բայց թագավոր-
րականներն ամենալաւ գիրքեր ունեին, որտեղերից կա-
րող էին ծեծել մերժում, մնալով իրանք ծածկված. Գարիբալդի ամենները ըրջապատված էին անտառակներով,
որոնք խանգարում էին նրանց տեսնել թշնամուն, լի-
նելով իրանք ենթակայ վերջնիս արձակած շանթերին: Գարիբալդի կառավարում էր պատերազմը մի խրճի-
թի տանիքից, որտեղից նա կարող էր նեցուկ լինել զին-
ւորների շարժումներին: Երկու կտրիճներ, Մալէնկինի և
Մէյլիավակիա, իրանց գնդերով դիմադրում էին թշշ-
նամու առաջին բաղսման: Զօրապետն ուղարկում է
նրանց օգնութեան Կօղէնց-ին և Մէդիչի-ին: Յետոյ
ինքն էլ մտնում է տաք խառնուրդի մէջ: Ճանապարհի
վրայ բուրբոնների երկու թնդանօթներ կոտորածներ էին
անում մերժում շարքերից: Գարիբալդի բացականչում է.
— Քսան մարդ ինձ հետ, և խլենք այն թնդա-
նօթները:

Թնթանօթները միտուայլ են դուրս ժայթքում:
Հէնց որ պայթումը տեղի ունեցաւ՝ Գարիբալդի և իր
քսանները կայծակի նման ընկնում են թնդանօթների վը-

բայ և սպանում ումբաձիգներին: Յաղթութեան վայր-
կեանին դուրս է գալիս մի կոլմից թագաւորական հե-
ծեալների մի վաշտ. Գարիբալդեանները քաշփում են
յետ, մնում են մէշտելը Գարիբալդի և Միասուի: Բուռ-
բօնեան սպայն խոյանում է Գարիբալդի վրայ. սակա-
սով կտրում է նրա կոկորդը: Տասնապետը և ուրիշ
հինգ կամ վեց հոգի ըրջապատում են նրան. սակայն
այդ միջոցին Միասուի իր ուկոլվերով սպանում է
նրանցից երկուսին, և պատերազմելով զօրապետի հետ
միասին, փախցնում են միւսներին:

«Ո՞վի մէջ, եղերեխն մօտիկ, Խարիսխ ձգած կանգ-
նած է Տուկէուի ֆուէգատը: Գարիբալդի գնալով
այնտեղ, թնդանօթի է բոնում բուռբօնեան հեծելա-
զօրին, որ պաշտպանվում էր թիկունք տված բերդին,
զօրին, իր իջնելով եղերը, յարձակվում է բուռբօնի աջ
յետոյ իջնելով եղերը, յարձակվում է ձախը և
թեփի վրայ, մինչդեռ Մէդիչի հարուածում է ձախը և
շփոթութեան մէջ գցելով թշնամուն, փախցնում է
նրան մինչև Միլահձօ-ի ներսը: Միլանցի Միլիավակ-
նրան, որ թագավորականների ետևից ընկած հալածում
էր, յալթութեան վայրկեանին ընկնում է ամրոցների
միտուայլի տակ:

Բայց միջնաբերդը նուաճված էր, և յունիսի 24
ին բուռբօնները դուրս էին գալիս նուաստացած:
Բօսկօ-ի յանդգնուութիւնը կոտրված էր: „Խոստա-
նում եմ ձեզ, ով տէր, Գարիբալդի գլուխելս“, այս-
պէս գրեց նա իր թագաւորին, ֆռանչեսկոս Ա-ին: Իսկ
Մէսսինացիներին ասել էր. ոխօսք եմ տալիս ձեզ, որ
Մէսսինա պիտի մտնեմ նստած Մէդիչի-ի, Միլահձօ-ի
տակ հրամայողի, ձիու վրայ:

Գարիբալդի իմացաւ այդ լիրը խօսքերը և ուզեց
պատժել նրան: Միլահձօ-ում, երբ Բօսկօն ստիպվեցաւ
անձնատուք լինել, Գարիբալդի բոլոր սպանների ձիերն

իրանց թողեց, միայն պահանջեց քօրիուի ձին. որը և
նուիրեց Մէդիչ-ին:

(Օգոստոսի 8-ի երեկոյեան, այն ծովում, որ Սի-
կելիան և Կապոլէտանուն բաժանում է միմեանցից,
ճօճում էին ալիքների վրայ՝ միմեանց բաղնիւլով՝ եռ-
թանատուն երկու նաւակներ: Գարիբալդի, ծովեղում
յոտնկայս, խօսում էր իր ամենահաւատարիմ հետեղոդ-
ների մի խմբի հետ.

— Ձեզ է ընկում, ասում էր, ինձ կանխելու
պատիւը: Զեռնարկութիւնը յանդուգն է, սակայն ձեր
վրայ հաւատ ունեմ: Փորձով ճանաչում եմ ձեզ...
Յտեսութիւն կարճ ժամանակի համար:

Երեկոյեան տասներորդ ժամն էր խփում: Ամեն
մի նաւակի մէջ մտան երեքական մարդ և թիավար-
ները շարժվեցան: Աստեղազարդ մի դիշեր էր, առանց
հողմի: Ո՞ւ ամենքը գիտէին արշաւախմբի նպատակը:
“Ի՞նչ պէտք է անենք, հարցո՞ւն մի քանի հոգի:

— Պէտք է դուրս գալք Կապոլէտանական հողի
վրայ և յանկարծակի առնենք Ալտա Գիումանա-ի բեր-
դը՝ ապահովելու համար մեր բանակի անվտանգ ցա-
մաք դուրս գալը:

Վնցը կատարվեցաւ լոելեան: Վերջապէս հասան
ափը: Ենթատեղակալ էռջիստո բէձձիւն, տրէնտինացի
և Ալբէրտո Մառիո մէկ ոստումով ամենից առաջ կո-
խեցին կալաբրիայի գետինը: Անմիջապէս յետոյ հե-
տեւում էին Միսսուի, Ռոսսի, Ստուդիվառի և միւսները:

Ապայն յանկարծակի բերելու նախագիծը ջուրն
ընկաւ: Բուռբօններն իմացան փորձը և յետ մղեցին. Եր-
կու հարիւր կտրիճները քաշվեցան դէպի Ասպոմօնտէ
այնտեղից տարածելու համար ապստամբութիւնը կա-
լաբրիայում:



ՆԱՊՈԼԻՑ ՎՈԼՏՈՒԹՅՈ.

“Դուք գիտէք, որ ես հաւանութիւն չը տվի ձեր
արշաւանքին... և կարծում եմ, որ ամենախելացի բան
կը լինէր յետ կենալ որ և վերջին փորձից Կապոլէ-
ի թագաւորութեան դէմ:” Այսպէս էր գրում Ակա-
տոր Էմանուէլ Գարիբալդիին, որ պատրաստվում էր
անցնելու նեղուցը. և սա պատասխանեց նրան.

“Անչփած լինելով ժողովրդների կողմից, եթէ
յապաղէի, պարտաւորութիւններիս մէջ թերացած կը լի-
նէի և վտանգի ենթարկած, Խոտալիայի սուրբ դատը:
Հետեւաբար, թոյլ տվէք, տէք, որ այս անդամ ան-
հնագանդ գտնվեմ դէպի ձեզ...”

Երկու հարիւրներն արդէն գնացել էին. օգոստո-
սի 8-ի երեկոյեան իր ոյժերը փօխազրեց Կապոլէտա-
նական հողերի վրայ, ֆռանկի լին և Տօռինօ նա-
ւերով:

Այստեղ սկսում է մէկ արագ, հրաշալի գնացք:
Օգոստոսի 20-ին գնում է Ռէջջիօ-ի վրայ, 21-ին Բիբ-
ուիուն մտնում է քաղաքը. Երեկոյեան բերդը հաշտու-
թեան պայմաններ կրեց իր հրացաններով, թնդանօթ-
ներով ու ձիերով: Կօղէնցը ցամաք է դուրս գալիս
բանեառաւում, և այնտեղ սպանվում է քաջն լա Փը-
լոտէ, Գրանսիացի ռամկավարականը, որ եկած էր մեզ
օգնելու պատերազմի մէջ:

Այս ժամանակ Գարիբալդի գնում է Մէլէնդէզի
բուռբօն զօրապետի դէմ, և տարածում է իր կարմիր
շապիկները թագաւորականների շուրջը, որպէս երկաթ-
եայ մի շղթայ: Արգելում է իրայիններին կրակ անել.

ընդհակառակը, թողնում է, որ բուռքներն արձակեն, յետոյ մարդ է ուղարկում հրաւիրելու անձնատուր լինել, եթէ չեն ուզում, որ արինահեղութիւն լինի: Զինսորները, յուզված մեր պետի վեհանձնութեան առաջ և հաւաստի ակներև կոտորածին, զէնքերը ձբդում են մի կողմ և անձնատուր լինում: Այսպէս 9 հազար զօրք, Սան Զիօվաննիում, և 11 հազար գիօի բաժանումից՝ Սօվէոխառում, տեղի տվին հերոսի առաջ: Յաղթելու համար բաւական էր այլ ևս, որ նա երևէր: Բուռքօնեաններն ու կամաւորները միանում էին այս աղաղակով. „Կեցցէ Գարիբալդի“:

— Տանձը հասած է, ասում էր զօրապետը, կեցցէ Խոալիան:

Իր յաղթական ընթացքի մէջ առաջ գնալով ամեն վտանգ միշտ արհամարհող Գարիբալդին, միայն տասն ընկերներ ունենալով հետը, սեպտեմբերի 7-ին մտնում է Նապոլի, ուր կար 14 հազար պահապան զօրք: Նկարագրել նապոլէտանների տօնախմբութիւնը, ոգեստորութիւնը, զառանցանքը՝ կարելիութեան սահմանից դուրս է: Այնպիսի մի տեսարան պատահեցաւ, որ երբէք երկրորդ անգամ չը պիտի կրկնէ: Ժողովորդին յագենալ չը կար անմենեին նրան տեսնելուց, նրան լսելուց, և Ընդուհի պալատի լուսամուտների տակ նրան դուրս էր կանչում անզուսպ ուրախութեան արտայայտութեամբ:

— Ետ իրաւոնք ունեք (ասում էր Գարիբալդի) իր շրթունքներից հիացումով կախ ընկած ամբոխին) ցընծութեան այս օրւան մէջ, երբ դադարում է ձեր վրայ ծանրացած բռնութիւնը: Այս օրից սկսում է աղատութեան նոր թուական:

Այս կեցցէները վերսկսում էին այնպիսի թնդեւնով, ինչպիսին է որոտը: Երեկոյեան մօտ Գարիբալդի յոդած էր այլ ևս և ուզում էր հանգստանալ. այն ժա-

մանակ Պանտալէօ եղայրը ելաւ պատշգամը և ասաց. — Առութիւն պահեցէք. Օօ քած օօրմե! (Հայրը քնած է):

— Օօ քած օօրմե! Կրկնեց մեղմօրէն ժողովուրդը. և իսկոյն գաղաքեցաւ ամեն աղմուկ, մօտակայ փողացներում քաղաքացիները ըջում էին լուռ ու մունջ, որպէսզի չը խռովեն աղատարար հօր հանգիստը:

Յաղթութիւնների մէջ տեղ տիրութիւն է ազգում սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած Կայաձնօսի չարազէտ պատերազմը, որի մէջ մերսնցից շատերը կորան պարդիւն կերպով:

Պակայն ամենակարեսը պատերազմը եղաւ Վօլտուռնում, և կարելի է ասել, որ նա եղաւ գրեթէ մի կատարեալ պատերազմ, որ և վերջացաւ փայլուն յաղթութեամբ:

Շառութանական ֆուանչիսկոս թագաւորի զօրապետներն ասում էին նրան: „4-ին, ձեր անուան օրը, ովք վըսեմափայլ, ձեզ պէտք է առաջնորդենք Նապոլի յաղթական:“

Պարիբալդիի աչքից չը վօիպեցաւ ոյժերի համախմբումը և իսկոյն պէտք եղած միջոցները ձեռք առաւ: Բուռքնեանների յատակագիծն էր միաժամանակ յարձակվել մեծաքանակ և առաւելակիո. զրութեամբ՝ գարիբալդեան զօրքերից գրաւված բոլոր գիրքերի վրայ: Յոյս ունէին յաղթելու, ցրվելու թշնամուն և յաղթական մանելու Նապոլի, որովհետու 38 հազար զօրք ունէին, այսինքն Գարիբալդիի զօրքերի կրկնինից աւելին: Պակայն սա նախատեսել էր գլխաւոր վտանգները և իր ոյժերը յարմարաւոր կերպով բաժանած, որով կարող պէտք է լինէր քանդելու բռնբօնեան յատակագիծը:

Հոկտեմբերի 1-ն էր: Գարիբալդի իր բանակը կազ-

մեց, յարդարեց սյսպէս. Միլբիցը՝ Սանտա Վարիա-ում և Սան Տամմառօռում. Կօստէն՝ Ավոսառում. Մէ-գիշե՞ն՝ Սանտ Անջլօռում. Սակին՝ Սան Լէուչիօռում, Պիլադէ Բունձէտիի՞ն՝ Կաստէլ Մոռօնէռում. Բիքսի-օ՞ն՝ Մադդալօնի՞ռում. Տիւռուը պահեստի դրաւ Կազէռ-տառում: Ընդամենը 18 հազար մարդիկ: Յարձակում տեղի ունեցաւ նախ և առաջ Սան Տամմառօռում. Գա-րիբալդի այն տեղ. Հասցրեց մէկ օգնութիւն, յետոյ ուղղվեցաւ դէպի Սանտ Անջլօ. Գնալու ժամանակ ըս-պանում են նրա ձին. այն ժամանակ նա, հետիոտն, մերկացնում է սուրբ և պատերազմ է միտում թշնամու հետ մարմին առ մարմին, ինչպէս մի հասարակ զին-որ: Սակայն Սպանդառո՞ի և Կաստէլլացցօ՞ի գարիբալ-դեանները պաշտպանում են նրան իբրև վահան և պահպանում են նրան Հրամանատարութեան: Դիկտա-տորը տեսնում և նախատեսնում է ամեն ինչ: Թշնա-մի երը փորձ են փորձում շրջապատել նրան բարձրա-նալով Սանտ Անջլօ-ի բլուրների վրայ, ինքն ել ու-ղարկում է Միլանցիններին մի գունդ՝ շրջապատելու թշնա-միններին և նրանց կալանատորելու: Մէդիչի թշնամուն-ցոյց է տալիս մէկ անընկճելի դիմադրութիւն. իր հետ ունէր Սպանդառո՞ի և Սիմոնէտտա-ի ընտրեալ գնդե-րը: Զը նայելով այդ բանին, կէսօրից յետոյ ժամը 2-ին, պատերազմը մէջ համար վատթարագոյն գարձուածք էր ստանում:

Բայց ահա գարիբալդի լեռների ձանապարհով հաս-նում է Սանտա Մարիա, ուր առաջնորդում է Սիրտօռի պահեստները. սրանց երկալուն պէս՝ պայմանները փոխ-վում են. Կամաւորները սիրտ են առնում. յաղթութիւնը նրանց ձեռքումն է: Ամենացաւալի կորստներից մին եղաւ Բունձէտի հերոսի մահը, որին յանձնված էր ընդի-մադրել թշնամուն Կաստէլ Մոռօնէռում, և միայն 227

Կարիճներով գիմադրեց գէռունէ զօրապետին, այդ կեր-պով միջոց տալով Բիքսիօ-ին յաղթութիւն վաստա-կելու: 1-ին կատարված այդ պատերազմում մեռան 506 հօգի, վերաւորվեցան 1328.

Ետևեալ օրը Կազէռտառում և նրա բարձրութիւն-ների վրայ տարվեցաւ վերջնական յաղթութիւնը, ո-րին մասնակցեց և իտալական բանակի բէռուսայիլիկոնների կէս գունդը, և այդ բաւական եղաւ, որ չափաւորական մամուլն անմիջապէս Հրամանատարութիւն մասնակի նրանում ձեռքողը կանոնաւոր բանակն էր եղած:

XXV

ԲԱՆՍԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԽ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Օարմանալի հերոսութեան ու զոհաբերութեան հետ կից, պատմութեան մուսան, որ միրում է հակապատ-կերները հաւասարապէս, ինչպէս կատակերգութեան մուսան, մեզ երկան է հանում նենդութիւնն ու ին-տրիգները Ալլամարինա մարկիզը, որ Ալկատր Էմանու-էլ թագաւորի կողմից ուղարկված էր Նապոլի, գրում էր յուլիսի 24-ին և հաստատում 30-ին. „Խիստ ցանկա-լի է, որ Նապոլի-ի ազատումը ըստ կատարվէ Գարիբալդիի գործով. ըստ որում, ուր որ այդ տեղի ունենայ, այնտեղ յեղափոխական դրութիւնը պէտք է գրաւէ միապետական-սահմանադրական կուսակցութեան բռնած տեղը: Ուստի անհրաժեշտ է, որ Նապոլի-ում տեղի ունենայ մէկ ազգային շարժում՝ նախ քան Գարիբալ-դիի այնտեղ հասնելը:“ Այս նպատակով է, պատմում է Մարիօ-ն, որ Ալլամարինա զինուրագրեց 200 գուեհիկ-ներ, որոնց իւրաքանչիւրին վճարում էր մի-մի դա-շեկան. սակայն այն օրը, երբ կամենում էին յանկար-

ծակիի բերել կաստէլ Սանտ' Էլմօն, համաձայնութեամբ
մի քանի բուռքօնեան սպաների, գահեկաններ ստա-
ցող երկու հարիւրից միայն երկու հոգի ներկայա-
ցան:

Պարիբալդի, որ երևակայութեամբ սլանում էր
գետի աւելի լայն իգեալներ, հառաջում էր չոօմի
համար: „Այնտեղ է քաղցկեղը (cancer), ասում էր,
որ կրծում է իտալիայի սիրտը և պէտք է յաղթենք
նրան:“ Մաձձինի թելադրում էր նրան մէկ արշաւանք
հանելու դալմատիայում, բայց այս առաջարկութիւնը
չէր հրապուրում նրան: Ընդհակառակը, լսվեցաւ, որ
երբ կազէռուտառում էր գտնվում Բիբսօնի և ուրիշ նը-
րան շրջապատողների հետ, ասում էր.

—Եթէ բովանդակ Եւրոպան իմ գէմ կանգնէր,
չոօմ կերթայի. բայց սակայն այնտեղ են (և մատով
ցոյց էր տալիս հոօմէական սահմանները) . . . Իտալիայի
եղբայրները:

Ծանր խնդիրը՝ թագաւորութեան հետ միացման
խնդիրն էր: Պէտք էր անմիջապէս կատարել այն: Գա-
րիբալդի ուղում էր սպասել, որովհետեւ ուղում էր
նախ չոօմ երթալ. իսկ կավուրեանները ստիպողա-
կանութիւն էին ցոյց տալիս և ուղում էին, առանց
յապաղման, ժամ առաջ կատարել միացումը:

Անսնաւոր բանակի գնդերը պատրաստվում էին
մեկնելու Նապոլէտանական երկիրը. սինիոռ Տոխագոտին,
դարիբալդեանների հրամանատարը սահմանագլխում,
խնդրեց Բէռտանի-ից, դիկտատօրի ընդհանուր քարտու-
ղարից, իր անելիքի մասին: Աս պատասխանեց, որ
„պէտք է գարիբալդիից հրահանգներ խնդրել:“ Եւ
հրահանգներն իրօք հասան. դիկտատօրը հեռագրում էր
սեպտեմբերի 25-ին. “Եթէ պիէմօնտէզները մտնեն մեր
հողը (territoire), ընդունեցէք նրանց որպէս եղբայրների:“

Հափաւորականներն ասացին ու տպեցին այն օրերը, թէ
բէռտանի և Տրիպոտի կամենում էին սպիէմօնտէզները
հրացաններով “ընդունել. “այս,“ գրում էր բէռտանի,
“այնքան մեղադրանքներից, որոնցով ուղեցին ինձ
հարուածել, ամենաանամօթն է:“

XXVI

ԹԱՎԱՒՈՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ.

Տէանօ-ի ճանապարհի վրայ, մի քանի աշնանահար,
գեղնած կաղամախիների տակ, դադար էր առած հեծ-
եալների մի խումբ: Հագած ունէին այնքան պարզ և
այնքան փառահեղ կարմիր շապիկը, իսկ նրանց մէջ-
տեղ՝ գարիբալդին: Հոկտեմբերի 25-ի արշալոյն էր: Անցնում էին իտալական կանոնաւոր բանակի սպանները,
գնելով ձեռքերն իրանց գդակի վրայ. նրանցից կային,
որ նայում էին նրան պատկառանքով, և կային, որ
նայում էին ծայրագոյն հետաքրքրութեան դրօց ու-
նեցող երկոյթով: Յանկարծ լսվեցաւ Սավյայի թագա-
ւորական քայլերդի (marche) ձայնը. և աչա առաջա-
նում է քառարշաւ, խաչերով և զարդարանքներով պլա-
նված բազմաթիւ զօրապետների և գնդապետների մէջ-
տեղ՝ ունենալով առջեկց կառաքինիկոնների խումբը,
վիկոօր էմանուէլը՝ զօրապետի զգեստներով: Գալիս էր
ստանալու Նիցցաող-ից սրա ազատած թագաւորութիւնը:

Գարիբալդի հանեց իր քոլորակ գդակը. իսկ թա-
գաւորը մէկնեց գէպի նա իր աջը.

—Օ՛հ, բարեւում եմ ձեղ, իմ սիրելի Գարիբալ-
դի. ինչպէս էք:

—Լաւ եմ, վեճմափայլ, իսկ բնքը (գուք), հար-
ցըրեց գարիբալդի:

— Ծառ լաւ, պատասխանեց թագաւորը:

Այն ժամանակ Գարիբալդի դառնալով էր շրջապատողներին, աղաղակեց. „Կեցցէ Խտալիայի թագաւորը”:

Միւսները կրկնեցին աղաղակը և ճանապարհ ընկան: Երկու աւագ-սպայակոյտերը հետևում էին, դեւելով միմեանց, սակայն բաժանված երկու գծերի ամեն մէկն իր սպաների հետ: Ամբողջ ճանապարհի երկարութեամբ գիւղացիները խմբում էին փառաւորելու հերոսը. և բոլոր անցքի վրայ աղաղակում էին, դիմելով գէպի հերոսը.

— Կեցցէ Կալլիքսոդ:

Գարիբալդի, միշտ համեստ, բայց աւելի ևս այդ պարագային հրաժարվում էր, յետ էր քաշվում և թագաւորին էր ցոյց տալիս՝ ասելով.

— Ահա Վիկտօր Էմանուէլը, Խտալիայի թագաւորը, կեցցէ թագաւորը:

Ակայն գիւղացիները կրկնապատկում էին ծափերը: Այն ժամանակ թագաւորը ձիավարեց քառասմբակ: Երբ հասաւ Տէանօսի մօտ՝ Գարիբալդի գլխարկը շարժեց և բաժանվեցան իրարից, ամեն մէկն անցնելով, սեփական սպաների առաջը:

Գարիբալդի քիչ յետոյ գտնվում էր մէկ ախոռում, նստած մի նստարանի վրայ: «Կախաճաշում էր կանգնած մի տակառի վրայ: Տեսնվում էր մի կտոր հաց՝ մի կտոր պանիր և մի շիշ ջուր: Կետոյ մօտեցրեց շիշը շրթունքներին, բայց գրեթէ ամիջապէս բացականչեց:

— Հոտած է, ջրհորում վաղուց ի վեր սատկած կենդանի ընկած պէտք է լինի:

Եշւ այդ մարդը, որ և ո՛չ իսկ մէկ ումագ մաքուր ջուր ունէր խմելու, մի քանի վայրկեան առաջ Վիկտօր Էմանուէլի ձեռքի մէջ էր դրել մի թագաւորութիւն:

Կալվիում հաւաքվելու համար՝ իրայիններին պէտք եղած հրամանները տալուց, նրանց բորբոսունած պաշարը հայթայիթելուց և ուրիշ կարգադրութիւններ անելուց յետոյ՝ երեկոյեան Գարիբալդի պառկեց մի խուրձ յարդի վրայ, մսուրի մէջ, Կալվիուի եկեղեցու մօտ. ձիու թամբը նրան ծառայում էր բարձի տեղ, իսկ վերարկուն (runcho)՝ վերմակի:

Կիչ օրից յետոյ, մէկ անձրւային օր, թագաւորը և Գարիբալդի իջնում էին Կայարանը. այս անգամ թագաւորը նրան կանչել էլ տվել, որպէսզի միասին մտնեն քաղաքը: Ժողովուրդը նրանց ընդունեց յափշտակութեամբ. կեցցէներին վերջ չը կար: Հասան թագաւորական պալատը. թագաւորը բարձրացաւ այն գալիճը, ուր գայն էր, և այնտեղ ընդունեց ամեն կարդի իշխանութիւնների մեծարանը: Դահլիճի մէկ անկիւնում կանգնած էր Գարիբալդի իր մի քանի հաւատարիմների հետ: Այն փաղաքողներից ոչ մէկը, որոնք մի քանի օր առաջ նրա նշարներին էին սպասում և խնարհում նրա առաջ, նկատում էր նրա ներկայութիւնը: Արեածաղեկները ցըջվում էին գէպի նոր սատղը:

Բայց Գարիբալդի, կարծես, և ո՛չ իսկ նկատում էր այդ: Գրպանից ակնոցները հանած մի նամակ էր կարգում: Երբ կարդաց վերջացրեց, ուղղվեցաւ գէպի գալիճ և՝

— Թագաւոր Վիկտօր, ասաց, ես գնում եմ. այս տեղ այլ ևս ոչինչ չունեմ անելու:

— Գնացէք, ոչինչ, պատասխանեց թագաւորը, մը մոռանաք, որ այսօր Ճաշի եմ սպասում ձեզ:

Գարիբալդի, սակայն, դուրս ելաւ պալատից և այլ ևս ոտք չը դրաւ այնտեղ: Գնաց բնակվելու հիւրանոցում: Երբ Դէլլա Ռոկա-Ն վճռեց ումբակոծել կապուան,

զօրապետն իր վիշտը յայտնեց. „Երբ ռմբակոծում է մի քաղաք, բացականչեց, միմիայն թշնամի զօրքին չէ, որ վնաս է հասցվում, այլ և քաղաքացիների ընտանիքներին... Ես չէի կամենալ մի ռումբ ձգել իտալական քաղաքների մէջ...”

Այս քող ենք քաշում այն պատահածների վրայ, որնք յետոյ տեղի ունեցան, մինչև որ Գարիբադդի ներկայացրեց իր հրաժարականը: Իբր վարձատրութիւն՝ թագաւորն ուղարկեց նրան կոյսի Աւետման մանեակը: Զօրապետը ձեռքն առաւ մանեակը, նայեց նրան, ինչպէս նայում են մէկ օտարոտի բանի, յետոյ վերադարձնելով՝ ասաց.

— Տարեկ թագաւորին իր պարգևը և շնորհակալութիւն յայտնեցէք նրան. պինձեղէններ չեմ կրում ես:

Իր հետևորդները միւնոյն արժանապատւութիւնը չունեցան:

“Եսյեմբերի 7-ին, կէս գիշերից յետոյ ժամը երկուսին, վարձը վճարված երկը կառքեր կանգ առին բըրիտանիա անուն հիւրանոցի գուան առաջ: Գալիս էին տանելու Գարիբադդին: Նրա հետ էին Անկոստին կացիօն, Բասսոն, Մարիօն, Միսսոոփն, Նուլօն, Տըրէկին և Չաղիօն: Ուրիշ բարեկամներ նրան սպասում էին ծովեզրում: Ո՛չ մի պաշտօնական կամ պալատական ներկայացուցչութիւն: Բարեւեց ամենքին, համբուրելով ամեն-մէկի ճակատից:

— Անաք բարով, եղբայրներ, ասաց: Եթէ իտալիան պէտք ունենայ ձեզ, թերի մի գոտնվէք: Ես երբէք չը պիտի մոռանամ այն բոլորը, որ գուք արկք:

Դոլորեթան յուղված էին: Բարձրացաւ Washington-ուն-ի վրայ. ինքն իսկ անցաւ զեկի գլուխը, վերցնել տվեց խարիսխը և յստակ ու հնչիւն ձայնով հրամայեց: — Պահպի կապուէու:

XXVII

ԿԱՊՈՒԷՌԱ.

Վիշերկրական ծովում, տասն երկու կղզեակների խմբում, կոռսիկայի և Սառդէնիայի մէջտեղ, բարձրանում է կապուէուան: Նմանում է բարձր լեռնից գըլըրված և այնտեղ խոտն, մէկը միւսի վրայ ընկած ժայռերի մի շեղչի: Նրա անունը գալիս է (իսկ և խսկ Դանտէի կապուայան, Առնօնի գետաբերանից քիչ հեռու) այն բազմաթիւ վայրենի այծերից, որոնք այնտեղ աղատօրէն թափառում էին: Այստեղ Դիկտատորը, այնքան վեհանձնութեամբ մի կողմ թողած գերագոյն իշխանութիւնը, որի և ոչ իսկ մի նշանարը պահեց իրան, գնաց որոնելու հանգիստ և նոր պատերազմների ներշնչում: Արուեստագէտի խօսքերով նկարագրում է Գարիբադդին իր այս սիրեցեալ կղզեակը Կլելի ավելի քայլերգի մէջ:

„Խտալական Արշիպեղագոսի մէջ, որ սկսում է հարաւակողմում Աիկիլայով և վերջանում է արևմտակողմում կոռսիկայով, գտնվում է գրեթէ ամայի մի կղզի: Կազմված է մաքուր գուանիտից (հատաքար) — իր քաղցր ջրի աղբերակները սքանչելի են: — Թէե ամառը չեն առատաբուխ: — Կղզին հարուստ է բուսականութեամբ — ոչ բարձր թուփերով — որին արգելք են լինում մրիկները, որոնք անխնայ կերպով խլում տանում են նրանց: Գրեթէ շարունակ և չափազանց ուժգին փշող քամիների պատճառած վնասը փոխարինվում է նրանով, որ հաստատվում է այնտեղ մէկ օրհնեալ, առողջարար օդ: — Ժայռերի մէջտեղերում բուսած գալարիքն անուշաբոյր են ամենքն էլ — և եթէ գու, հիւր այս հողի վրայ — կրակ վառես, — կը զգաս այրվող

սստերի արձակած քաղցր բուրմանքը, որով լքվում է օդը:

„Ակաւաթիւ արածող կենդանիները, որոնք թափառում են զառիվերներով, ցած են հասակով, սակայն շատ ուժեղ: — Այսպէս և իր սակաւ բնակիչները, որոնք չեն ապօռում փառաւոր կեանքով — սակայն բարեկեցիկ առատութեան մէջ — ձկնորսութեան և որսորդութեան արգասիքներով — քիչ էլ երկրագործութեամբ — բայց առաւելապէս շնորհով բարեկամների առատասիրտ հոգատարութիւնների, որոնք մայր ցամաքից ուղարկում են անհրաժեշտ եղածը:“

„Բնակիչների սահմանափակ թիւն աւելորդ է գարձնում կառավարութիւնը և սստիկաննութիւնը: — Այս- տեղ Աստուած պաշտում է ինչպէս պէտք է, հոգու հաւատով — առանց ցուցամոլութեան — բնութեան հոյակապ տաճարում, որի կամարը երկինքն է, իսկ ձըրագները՝ աստղերը:“

Երկար ժամանակ կղզին անբնակելի մնաց: Մէկ ու կէս գար կայ, որ կօսսիկայից մէկը գուրա գալով իր կնոջ և զաւակների հետ միասին, այնտեղ պատսպարվեցաւ: Դրանք եղան առաջին բնակիչները, որոնք կըղղում ապրում էին, որպէս Ռօբինզօն, մոռացված ամենքից:

Դէպի 1830 թւականը սարդինական կառավարութիւնը ծախու դրաւ կղզին և մէկ անգլիացի միզանատուպ, Ռիկառդո Կոլիինս անունով, նրան գնեց այնտեղ բնակելու համար իր կնոջ հետ: Ահա սրանից գարիբաղի իր եղքոր ժառանգութեան արդիւնքով ձեռք բերաւ կղզու մի մասը:

Այստեղ հերոսն ինքն իրան երկրագործութեան տվեց: „Կուի համար ծնած՝ (դրում է Մարկէզէն) ինչ որ եղաւ Մառսի գաշտերի վրայ, նոյնը եղաւ նաև կէ-

ռէռ-ի գաշտերի վրայ: Ինչպէս պատերազմեց և յաղթեց աշխարհի գերիշխան պետերին, այս և այն արշաւակներին, պատերազմեց և յաղթեց նաև քնութեան:“ Փոքր առ փոքր կղզու այն մասը, ուր հազիւ մի բուռն հող կար ժայռերի մէջտեղերը, իր աշխատութեամբ ծածկեց հասկերով ու խոտերով և եղաւ մայր գժգոյն ձիթենիների և սակեգոյն նարնջենիների: Տնկում էր ծառեր, ցանում էր ցորեն, դաշտերի մէջ թափում էր աղըն իր թագաբաշխ ձեռքերով: Գլխաւոր երկրագործագէտների հետ թղթակցութեան մէջ էր, և գեղցիկ էր տեսնել այն յաղթական պատերազմողին, որ իր բոլոր գործունէութիւնը նուիրում էր մի տերեկի վթմելուն և մի տունկի զարգանալուն: Մի բարեկամ վթմելուն և մի նոր բրիչ և փոխարէնը ստացաւ հինը նուէր՝ այս խօսքերով.

—Պահցէք այն, իբրև պարզ գրաւական իմ հին և մշտական մտածման. այդ այն է, թէ աւելի խելացի մարդիկ պէտք է գործածէին այդ թանկագին մետաղը, որ է երկաթը, ոչ թէ մի մեանց սպան ելու, այլ մարդկային ընտանիքի համար աւելի մեծ երջանկութիւն հայթայթելու:

Այսօր այդ բրիչը գտնվում է կանապիդօյլիօ-ում, ուր դրաւ սինեօս Վէկիին:

Չեռքի աշխատութիւնը վերջացնելուց յետոյ՝ կարդում էր և դրում և երեմն մինչև անգամ նկարում:

Ապուէռա-ից գուրս ելաւ 1861-ին երեսփոխանակի ժողովը գնալու համար, Տուինօ-ում: Հարցը գարիբաղեան բանակի՝ կանոնաւոր բանակի մէջ խառնելու մասին էր: Կամենում էր անցնել իր մի նախագիծը, որ էր ազգային վլնուրութիւնը, դիմաւորութիւնը ունենալով իտալիայի կատարեալ ազատութեանը: Ապրիլի 18-ին այդ նիստում գարիբաղի դուրս

իեց գառնութեամբ ուռած իր հոգին և յանդիմանեց կոմս Կավուրին այն բանի համար, որ նա դադարեցրեց յեղափոխութիւնն իր լաւագոյն յաղթութիւնների վայրկեանին և գրգիռ տվեց իտալացիներին քաղաքացիական պատերազմին:

Այս խօսքերն առաջ բերին փոթորիկ և հարկ եղաւ դադարեցնել նիստը: Յաջորդ օրը փորձեցին հաշտեցնել նրան Կավուրի հետ, իսկ նա պատասխանեց. Թող վիճակութիւնը ամբողջ ազգը և ես կը մոռանամ անցեալը: Զը լսեցին. և առաջւանից աւելի սրտաբեկ՝ հերոսը քաշվեց կրկն իր Կապոէռան:

Ա երջ ի վերջոյ, չը կարողանալով այլ ևս մնալ ատրուկ եղբայրների մասին ունեցած շարունակ տանջող մտածման մէջ, մի գեղեցիկ օր խարիսխ վերցրեց Կապոէռանց և մեկնեց դէպի մայր ցամաքը: Ուզում էր կը կրկն հարցնել, ուզում էր զգալ, թէ իտալացիների սիրացն իրանին հետ միաձայն էր խփում, թէ քաղաքացիները պատրաստ էին պատերազմելու օտարականի և պապի բոնակալութեան դէմ:

1862-ի մարտի 5-ին նա քէնովայում է և նախադաշնում է Ազատագրող Ընկերութեան (Società Emancipatrice) ժողովն, որի նպատակն էր երկրի աղատական ոյժերի բոլոր միութիւնը — այն միութիւնը, որ գեռ այսօր դէմօկրատիայի իդձն է: — Այնտեղ, կանխելով ժամանակները, քուէարկել է տալիս այս օրակարգը. „ժողովրդի ներկայացուցիչները պէտք է ընտրված լինեն ընդհանուր քուէարկութեամբ (suffrage universel)“:

Մարտի 21-ի երեկոյեան հասաւ Սիլան, առաջ բերելով ցնորեցուցիչ յափշտակութիւն, և այնտեղ պատուիրում է սովորել Նշանառութիւնը (Tiro a segno):

Այն օրը, երբ ամեն-մէկ իտալացի կարող կը լինի գործածել մի կառաբինա, այլ ևս պատերազմի

պէտք չենք ունենալ պահանջելու այն բանը, որ մերն է....

Այն ժամանակ ժողովուրդը երգում էր նապօլէ-տանական ստիլով մի երգ.

Գարիբալդին է մեր քաղաքացին, իր սիրով նուիրեց նա հայրենիքին....

Պօնձառում, Լոդի-ում, Պառմա-ում, Գարիբալդի կրկնում է միենցին խրախոյսը դէպի նշանառութիւնը, և ամենքն էլ, հմայված նրա ներկայութիւնից, երգ-վում էին նրա հետ լինել ամեն մի փորձի մէջ հայրենիքի համար:

XXVIII

ԱՍՊԻՇՄՈՒՏԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ.

— Պանդապետ Նուլօն ձերբակալված:

Այսպէս էին ասում Գարիբալդիին Տրէսկոռէ-ում, մայիսի 15-ին և թիւ յետոյ նրան համնում էին ուրիշ տեղեկութիւններ:

— 16-ին Սառնիկո-ում և Ալցանօ-ում կապված են հարիւր երիտասարդներ: Բանտերի մէջ պահված են իբրև չարագործներ:

Այդ երիտասարդներին մեղադրում էին այն բանի համար, որ նրանք կամեցել էին զինված բանակ կազմել՝ պատերազմ մղելու համար Աւստրիայի դէմ: Բայց աւելի վատը վերջինն էր: Նուլօն տարած էին Բուէշիա-ի բանտը: Ժողովուրդը փորձեց ազատել նրան. զինւորների հրացանները մահ սիրեցին այն բոլորի մէջ, որոնք ամենից մօտ էին գուանը: Ապա զինւորները, թե լադրված մինիստրների հրամաններից, հրացանաձգութեամբ հալածեցին փախչողներին: Անզէն քաղաքացի-

Ներից երեքը մեռան, շատերն էլ վիրաւորվեցան։ Գաւրիբաղի, երբ լսեց այս անգութ արարքը, կարմրեց՝ մնչպէս խաբէութեամբ զարնված առիւծը։

— Խտալացի զինւորները քաղաքացիների դէմ են յարձակվում, աղաղակում էր նա անդադար։ Բայց միթէ հնարաւոր բան է այդպիսի գարշելի եղքայրասպանութիւն։ Մի յիշատակարան կանգնենք, ով խտալացիներ, ոռու Պօպօվին, որ Վարշավայում կոտրեց սուրբ, որպէսղի ըս գործածէ նրան մի ճնշված ժողովրդի վրայ։ Թող գրաւական լինի այն յիշատակարանը նրա դէմ, որ կատարեց բուելիանի կոտրածը։ Թող այն խրատ և օրինակ լինի խտալական բանակին։

Աւազ, այն եղքայրական զէնքերը կարճ ժամանակից յետոյ իր կրծքի դէմ պէտք է ուղղվէին։

Դրանից յետոյ զօրապետը վերստին քաշվում է կապուռա և այնտեղից գրում է և պատերազմի գըրգում պապի աշխարհական իշխանութեան դէմ։

Դրանից քիչ օր յետոյ Պալէոմօռումն է, շըջապատված ժողովրդից, որ ծափահարում է իր աղատչին։ Իսկ ինքը միշտ առաջնորդված է լոկ փակ մտածումով։

— Ո՞ի նախատինք է, աղաղակում է, որ 25 միլիոն խտալացի լինենք և գեռ ստրուկ եղքայրներ գտնվին... Այս, մի նախատինք է, սակայն այդ նրանց համար է, ուրոնք մինչև հիմա անդործ մնացին... Իսկ մենք... մենք կաղատենք չուօմը և վենետիկը... Եւ թէև ծերացած յոյս ունեմ նաև օգնելու ուրիշ ճնշված ժողովրդների աղատութեան։

— Եւ մենք ձեղ հետ, ընդհատեց ժողովուրդը։ Զեղ հետ դէպի չուօմ, վենետիկ, աշխարհի ամեն կողմ։

Այնու ամենայնիւ իր զօրքերի շարքերը չէին ըստուարանում։ Խտալիան ցնցվում էր, շարժվում էր, սակայն քիչ կամաւորներ էր տալիս մեծ գործին։ Գաւ-

րիբալդի խտալացիների մէջ ըս գտաւ այն արիութիւնը, որ համապատասխանէր իրանին։ Անվերջ ցոյցեր ու ծափահարութիւններ ունեցաւ, սակայն քիչեր եղան վեհանձն դէպի այն զոհաբերութիւնը, որով արտազեղում էր իր հերոսական հոգին։

Գիկուցցառում լնդունեց կամաւորների լէդէօնին։ չորս հազար հոգի էին։ Համարձակներն աղաղակում էին պատմական գարձած նշանաբանը։ Կամենում էնք չուօմը կամ մասն ում էնք չուօմը կամ մասն ում։

Գրանսիացիների կայսրութիւն մտաւ Բօնապառտի ժողովները, պատմեց այդ աղաղակի մասին և աւելացրեց։

— Ան, մահը կը ստանան, որովհետեւ չուօմը չուսի ստանան։

Տօնինօռում, նապօլէօնեան ակնարկին հլու հնազանդ մինիստրները և Վիկտոր Էմանուէլ թագաւորը յայտարարում էին Գարիբաղդին իրքեւ օրէնքի սահմանից գուրս եկած, և իսկոյն խիստ հրամաններ հանցին։

— Խտալական գնդերը մեզ հալածում են, ասում էին հաւատարիմները Գարիբաղդիի։

Օօրապետը ըս պատասխանեց։ Սասիկ տժգունեց և աչքերը լցվեցան։ Տասը տարիով ծերացած էր երեւում։ Խտալական զօրքերը նրա դէմ, նրա, որ ուրիշ բան չէր կամենում, բայց միայն Խտալիայի պատիւը։

XXIX

ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.

Իանակում ծառայող երեսուն և եօթ կտրիճ սպաներ, որոնք կուել էին հայրենիքի պատերազմներում հրաժարվեցան, բողոքելով այն բանի դէմ, որ երբէք յանձնառու չէին լինել կուելու իրանց եղքայրների դէմ։

Օգոստոսի 24-ին, երկու առեւտրական նաւեր, դիմապահն է և Աբատու Հայի, կամաւորներին Սիկիւլիայից փոխադրեցին Կալաբրիա: Մարիա Ադելլա ահա է ֆուէգատը և ուրիշ պատերազմական նաւեր ներկայ էին անցրին. Ինչու այն ժամանակ չը կալանարեցին գարիբալդեաններին: Կարող էին այդ անել առանց մի կաթիւ արին թափելու:

Վանաձառում զօրապետն իմանում է, որ Ռէջիլիու գրաւված է Զիլարդինի-ի կողմից. նա երայինների հետ ուղղված է դէպի Ասպոմօնտէ-ի գագամիքը:

Նրանց թիւն իջած էր 1,200-ի:

Մի բանի Գարիբալդեաններ գերի բռնեցին հինգ կանոնաւոր զինուորների և նրանց տարին զօրապետին:

— Եկէք, զաւակներս, ասոց Գարիբալդի կալանաւորներին, ես ձեր թշնամին չեմ: Մի է այն երկիրը, որ մեր ծնունդը տեսաւ, մեր մէջ միմիայն փոխանակութիւն պէտք է լինի: Խտակիայի թշնամիներն են Աւարիան, Պապը և Կապուէօն. Նրանց պէտք է զարնէք, նրանց գէմ պէտք է ուղղէք ձեր զէնքերը, ով կտրիճներ և ոչ ինձ դէմ . . .

Պանակլով ապա իր օգնականներին.

— Ուտելիք տվէք երիտասարդներին, ասաց, քիչ էլ փող: Եւ այժմ (շարունակեց խօսել կալանաւորներին) գնացէք կամ մնացէք. ազատ էք:

— Այցել Խտակիա, աղաղակեցին կամաւորները:

Վակայն կանոնաւոր բանակի զօրապետներն այդպիսի վեհանձնութիւն չէին ճանաչում. Նրանք առաջ մղեցին բէսոսայլիէռները, որպէս զի յարձակվեն զօրապետի վրայ: Աս, որևէ ընդհարումից խօսափելու համար, իր գարիբալդեաններին առաջնորդեց գահալլէք և գարաւանդ ճանապարհներով, անցնել տվեց գետերից բազած ջլատված վիճակի մէջ:

Ըստերը և աւելի ուժասպառներն ընկնում էին Ճանապարհի վրայ. նոյն խակ Գարիբալդիի կօշիկները պատառութած էին և ոտքերն արիւնուոված: Իրան հետ մօտիկ գնացող, մի քանիսներին ասաց ժպտալով.

— Աիրելի երիտասարդներ, այսպէս են ծառայում Հայրենիքին:

Ամենքն էլ խիստ անօթի էին: Այստեղ ցանված կային գետնախնձորներ. Գարիբալդի իր ձեռքերով մի քանի հատ արմատախիլ արաւ, անցրեց երանց հրացանի ձողիկի վրայ և մի քանի բռու չոր տերեւների վրայ խորովեց: Ուրիշները հետեւցան նրան, և այդ եղաւ նըրանց կերակուրը:

Ճեռուսայլիէռները մօտենում էին նրանց՝ նեղելու աստիճան: Գարիբալդի ցրվեց զօրքը և հրամայեց նրանց կրակ չանել:

Ճեռուսայլիէռները սկսում են վաղել. Նրանց ետեւից գալիս էր հետեւակազօրը: Գարիբալդի, սոտի վրայ ուղղորդ կանգնած իր զօրքերի առաջ, վրան առած իր լայն, գորշ ու կարմրագոյն բանված վերարկուն, յաճախակի կրկնում էր հրամանը. “Կրակ մի՛ անէք”,: Եւ իր սպաներն իրանց կարգին հրամայում էին „Կրակ մի՛ անէք”:

Բայց հրացանաձութիւնը երթալով դառնում է աւելի հոծ: Գնդակները սուլում են Գարիբալդիի չորս կողմը, ծեծում են մացառները շառաւազումով կարծես մրտրակի հարուածների տակ, խրվում բռեռների նման մերձակայ ծառերի մէջ: Երիտասարդներից ոմանք, որոնց մէջ և Մէնօտի, չը կարողանալով համբերել, պատասխանում են: Վակայն անմիջապէս փչում են փողերը, որպէսզի գագարեցնեն կրակը. Գարիբալդեանները հնազանդում են. բէռուսայլիէռները շարունակում են արձակել:

Գարիբալդի, հանդիսաւոր ու արձանացած, կանգնած էր միշտ բլուզի վրայ, ի տես ամենքին: Կրակն

ուղիղ (յատուկ հրաման կար) նրա դէմ էր կատա-
ղում: Խտալցիներ էին դրանք, որոնք նշանի էին ըըռ-
նում նուիրական գլուխը:

Եթիու գնդակ հարուածում են նրան. մէկը թու-
լաց ած ձախ ազդրին, միւսը, բոլոր ջօրութեամբ, աջ
ոտքի կոճին: Հերոսը չընկաւ — ուղեղ մնաց ոտքի վը-
րայ, երեալով իր վեհապանն կերպարանքով: Երեան
ելաւ և ողջունեց իրան վիրաւորողներին, աղաղակելով.
— Ալեցէ Խտալիան . . . կրակ մի անէք:

Խրակը դադարում է: Գարիբալդիի մօտ են տանում
իր որդուն, Մէնօտափին, վիրաւորփած մի սրունքից: Եր-
կուսին էլ հանդասացնում են միւնոյն ծառի տակ:

Բարեկամները շրջապատում են նրանց, ամենքն էլ
անձկութեամբ ճնշված: Անպարտելի Գարիբալդին պարտ-
փած և վիրաւորփած էր, այն պատճառով, որ չէր ու-
ղած պատերազմել:

Բաժշկները քննում են վէրբերը: Կոճի վէրբը
յայտնվում է ծանր:

— Անդամահատելու պէտք կայ, հարցնում է Գա-
րիբալդի. Եթէ այն, մի վարանէք, կտրեցէք առանց եր-
կար մոտածելու:

Սոսկալի մի վայրկեան սահեցաւ բոլոր ներկաների
համար:

— Ո՞չ, պատասխանեցին բժիշկները, պէտք չը կայ:

Վինչ այս, մինչ այն, զինուոները և կարմիր շա-
պիկները քակեցին իրանց կարգերը և խառնվեցան մի-
մեանց: Նրանց մէջ, որ զէն ի ձեռին կանգնած էին մի-
մեանց դէմ, ճանաչվեցան բարեկամներ, զէնքի ընկե-
րակիցներ, եղբայրներ: Կատարվեց բարեւերի, համ-
րակիցների և յանդիմանութիւնների փոխանակութիւն:

Պահապետ Պալավիչինո, որ Գարիբալդիի դէմ կը-
րակ անելու հրամանն արձակելու դժբաղդութիւնն ու-

նեցաւ և նախապէս իր սուրը չը խորտակեց, ինչպէս
արաւ Պապօվ, — գնաց Գարիբալդիի մօտ: Դէմքն ար-
տայայտում էր ծայրագոյն տիրութիւն. վլրաւոր հերոսի
առաջ երեւում էր խոճահար: Կերկայացաւ գլխաբաց:

— Տօւինօ-ից գրական հրամաններ ստացայ, ասաց,
պարտաւոր էի յարձակել Գարիբալդիի՝ վրայ, ինչ կեր-
պով էլ որ լինէր, ինչ տեղում էլ որ լինէր:

— Եթի՛ք չուզեցի կուել խտալական բանակի հետ,
պատասխանեց Գարիբալդի: Խոճում եմ, որ ազատ
թողվեն իմ կամաւորները, և ինձ և իմ սպաներին —
որոնց ցուցակը պէտք է տամ — թոյլտութիւն մտնելու
մէկ անգլիական նաւ:

— Մինիստրութիւնից տեղեկութիւններ պէտք է
խնդրեմ, պատասխանեց գնդապետը:

Օդը մթագնում էր: Գարիբալդիի պաշտօնաւորնե-
րը մի քանի ծառերի ճիւղեր կտրելով, պատրաստեցին
մի պատգարակ. սրա վրայ դրին զօրապետին: Իր հա-
ւասարիմները, վշտակիր սրտով, վերցրին պատգարակը
և սկսան կսկսալի ընթացքը:

Ինչո՞ւ քրքրել աղատութեան քրիստոսի բոլոր տը-
խրազդեցիկ տառապանքները: Բաւական է միայն ակնար-
կել էական իրողութիւնները:

Վկիլսառում Գարիբալդիին յայտնեցին, որ թագա-
ւորի կառավարութիւնը նրան աղատ չէր թաղնելու և
պէտք էր ենել իւ Դուկա դի Ֆէնօվա անուն ֆուէ-
գատի վրայ: Նաւը մտնելը դժուարին եղաւ. Վէրբը
սաստիկ չարչարում էր և Գարիբալդի չէր կարողանում
շարժվել:

Լա Ստէլլա գ' Կտալիա շոգենաւի տախտա-
կամածից, Զիալդինի զօրապետը և Ալեխինի ծովապետը,
երկուսն էլ իրանց համազգեստներով և շքանշաններով
(Գարիբալդին պինձեղներ էր ասում դրանց համար,

երբ մերժում էր ընդունել), ներկայ էին նաւը մըտնելու տեսարանին: Այնտեղ կանգնած էին նրանք գրւխարկներն իրանց ձեռքին և նայում էին ակնապիշ մեծ յաղթվածին, առանց բարեկելու նրան:

Դրա փոխարէն, ծովեզում խոնված արտասուալից ու ըստա ամբոխի կողմից սպիտակ թաշկինակներ էին ծածանվում ի նշան բարեկի: Ժողովուրդն արդարութիւն էր հատուցանում ոչ անհրաժեշտ ողբերգութեան զոհին:

Այդ միջոցին կատարվում էր մեկ ուրիշ չարութիւն: Երբ Գարիբալդի կալաբրիա էր անցել, իր ետքեց թողած էր կամաւորների մի խումբ՝ Տրասէլլի-ի հրամաների ներքոյ: Անպատճերերի 2-ին այս յանդուգն թշուառների վրայ անակնկալ կերպով յարձակեցաւ 47-երորդ հետեւակների մի վաշտ. Դէ Վիլատա աւագ սպան տեղն ու տեղը հրացանի բռնել տվեց, առանց կանոնաւոր դաստիարութեան, բանակից դասալիք կարծված իր կամաւորներին, որոնցից երկուսի մասին միայն ապացոյցներ ունեին: Այդ սպանութիւնը գործ դնելուց յետոյ Դէ Վիլատա բարձրացաւ դնդապետի աստիճանին:

XXX

ԿԱՅԱՆԱԿՈՐ ԵՒ ՄԱՐԴԱՍԻՔ.

— Խտավիան սրտում ունեմ, որի միտքն ինձ այնպէս է տրորում, ինչպէս չէ փշում ռակորներն արձակված ուումը: Օ՛չ Հայրենիք:

Այսպէս էր աղաղակում, այսպէս էր գրում՝ Գարիբալդի Վառինեանօ-ի անկողնու վրայ, ուր տեղափոխել էին նրան սեպատմբերի 2-ին: Ով որ նրան տեսաւ այն օրերում, պահպում է նրա մասին անպատմելի տը-

խրութեան յաւիտենական մի տպաւորութիւն: Իր անկողինը գրված էր ամենաողորմելի մի սենեակում, որի յատակը ծածկված էր կեղտու ու պատառութիւն կապերտով: Ընկողմանած երկու բարձերի մէջ տեղ՝ միշտ ունէր կարմիր շապիկը: Կիշարած էր և դժուունած, սակայն պահում էր մի քաղցր ու համերատար արտայայտութիւն, նման այն արտայայտութեան, որ նկարիչները դրօշում են մարդկութեան համար տանջված քրիստոսի դէմքի վրայ:

Վ իրաւորված սրունգը հանգստանում էր լաթերի մի կոյտի վրայ, իսկ կոճի մէջ խրված գնդակը, որն այդ առաջին օրերում չէին կարողանում այնտեղից դուրս հանել, նրան պատճառում էր անընդհատ ու խիստ ցաւ: Եւ երբ ցաւն աւելի ևս սաստկացաւ, առաջին օրերում կառավարական բանտապահները շատ գծիկ գտնվեցան իրանց ինամատարութեան մէջ, իսկ բժիշկները և ոչ իսկ կարողացան ունենալ անհրաժեշտ բժշկական դարմանները:

Վ երջապէս, բանտարկվածին թոյլ տրվեց վայելելու իր սիրելիների տեսութիւնը, և Մէնօտտի՝ իր բժշկվելու վրայ եղող վերքով, և Տէրէզիտա իր անդրանիկի և ամուսնու՝ Կանցիօ-ի հետ, և Ռիչչիոտտի և ուրիշ քիչեր կարողացան ըջապատել նրան իրանց սիրով ու խնամքով: Այն ինչ հմացվեց, որ Գարիբիբալդի գտընդում էր կարօտութեան մէջ, գործաւորները, որոնց սրտերն ապականված չեն կառավարական կեղծաւորութիւններից և որոնք Գարիբիբալդիի անձնաւորութեան մէջ յարդում էին իրանց ընկերների նախադաշնին, ծանութիւններ ուղարկեցին ովիրաւոր ընկեր՝ Յովսէփ Գարիբիբալդի-ին:” Սա նրանց ընդունելիս՝ ասաց.

— Շնորհակալ եմ ձեզնից, զաւակներս, փողը կուղարկեմ այնտեղ, ուր տառապում են, որպէս զի թե-

թեանան իմ խեղճ զինակից եղբայրների նեղութիւնները:

Եւ առանց երկարացնելու՝ ուղարկեց փողը վերաւորված գարիբալդեաններին: Գործաւորներից յետոյ եկան ուրիշ քաղաքցիներ. և մինչդեռ եղբայրասպանները թողել փախել էին սոսկումով, երկրի ամեն-մի կետից հասնում էին զոհին խրախոյսի խօսքեր: Գուշուացցի ասում էր նրան.

Ո՞խիթարվիր, հերոս, քեզ հետ վերաւորված է հայրենիքը. միւսոյն անկողնի վրայ պառկում էք և միւսոյն անկողնի վրայ փոփոխակի կրում էք ցաւեր և խորհուրդներ վերջնական փրկութեան:

Գարիբալդի-ից նուազ մեծ և նուազ բարի մէկի հոգին լցված կը լինէր գառնութեամբ ու ատելութեամբ. ընդհակառակը, մեծահոգին, տողորված միշտ սիրով դէպի ձնշվածները, մոռանում էր սեփական տառապանքները՝ մտածելու համար ուրիշների ցաւերի մասին. թուիչք առնելով իդէալի ազատ դաշտերի միջով, մոռանում էր իր բանտարկութիւնը: Անդիւցիները Գարիբալդի-ին յայտնել էին համակրութեան կարելի եղած մեծագոյն ապացոյցները. իսկ սա պատասխանելով այդ ժողովսին, թելագրում էր նրան ստանձնելու միջազգային մի կօնգուէսի նախաձեռնութիւնը, որպէսզի արգելք դրվէ պատերազմի արիւնարբու հրէշին աւերելու մարդկութիւնը:

ԴՊատերազմներն այլ ևս հնարաւոր լինելուց կը դադարեն (գրում էր), երբ համաշխարհային մի կօնգուէս կարողանայ դատել ազգերի մէջ՝ ծագած տարածայնութիւնները: Ու ևս մշտական բանակներ, որոնց ներկայութիւնն անկարելի է դարձնում ազատութիւնները: Ի՞նչ ու բրիշներ և չնձելու մեքենաներ են հարկաւոր մեղ: Կործ անելու յատկացված գործիքների վրայ վատնված միլիարդները

թող գործածվեն ինդուստրիաներն առաջ մղելու և մարդկային թշուառութիւնները պակասացնելու: Թող սկսվէ, ով անգլիական ժողովուրդ, մարդկային դաշնակցութեան ներկայ սերունդներն անչափ պարզեալ: (28 սեպտեմբերի 1862):

Ո՞ինչ Գարիբալդի զքաղված էր գրի առնելու եր մաղթանքները տիեզերական խաղաղութեան և ազատութեան մասին, Տօռինօռում մինխարները վիճաբանում էին իր ճակատագրի վրայ: Ռատտաձի, Գէպուէտիս, Սէլլա, Պէտսանօ (անուններ, որոնք ամենքն էլ միացած են իտալական ամենածանր գժբաղդութիւնների պաշտօնական յիշատակներին) երկու ամիս առաջ ասած էին մի տիրահաջոչակ տեղեկագրի մէջ, թէ Գարիբալդի իր անձը զրել էր երօպական ռամկավարութեան ծառայութեան տակ և բորբոքել էր քաղաքացիական պատերազմը. գուցէ և կամենում էին այն ժամանակ ենթարկել նրան դատի. սակայն այդ մասին մտածել իսկ անկարելի էր:

Ռովանդակ երկիրն աղաղակում էր. „մենք յանցաւոր ենք, եթէ Գարիբալդի յանցաւոր է, ամենքս էլ հոգով ուղեցինք Հովոմը և իր ազատութիւնը: Մինչեւ իսկ թագաւորին ստորագրել տվին անյիշաչարութեան հրամանագիրը, 5 հոկտեմբեր 1862, որ ազատ էր կացնում Գարիբալդի-ին և իր լնկերներին որ և է պատասխանատութիւնից դէպի օրէնքները: Այնուամենայնիւ դրանից գուրս պահեցին այն զինւորներին, որոնք լըքանելով գնդերը, միացել էին զօրապետին:

Գարիբալդի, թէև տեղափոխած Վառինեանօից Պիզամի քաղցր և բարեհամբոյր երկնքի տակ, չըր ապաքինում: Ատկայն ի վերջոյ գօկտօր Նէլատօն, որ յատկապէս Պարիզից էր եկել, գտաւ որ գնդակը խրված էր ոլոքի ստորին ծայրում, և նոյեմբերի 23-ին

Չանէտտի պրօֆէսօրն աջողութեամբ դուրս է հանում այնտեղց: Տարօրինակ նմանութիւն: Գնդակը հերոսի մարմինի մէջ ստացել էր արծուի գլխի ձեր:

Այն ժամանակ վէրքը սկսաւ գոս կապել: Ապայն դեռ շատ օր անցած չէ, երբ արտասուալիր բարեկամները պատկառելի դիակը դնում էին դադաղի մէջ, տեսան մարմինը ծածկված մի քանի սպիներով, սակայն նրանցից մէկը միայն խորունկ էր և կարծես դեռ երէկւանը լինէր. այդ՝ Ասպոմօնտէ-ի սպին էր: Եղբայրական կապարը բացել էր նրա մարմին և սրտի մէջ ամենացաւալի վէրքը:

XXXI

ՅԱՂԹԱՆԱԿԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ.

Առութամպտօն քաղաքը տօնի մէջ էր: Ամեն փողոցներում երեւում էին դրօշակներ և ծաղկանց փունջեր ու պսակներ. այն դռան վրայ, ուր Անգլիայի դըրօշն իտալականի հետ միասին ծածանում էր ծովային քամու շնչի առաջ, երեւում էին տաղաւարներ, ամենաշքեղ կառեր իրանց կազմածներով, երևելի անձնաւորութիւններ և ժողովրդային հասարակութիւն: Այդ օրը, 3 ապրիլի 1864, պաշտ ամենածայրահեղ զգոյշ անգլիացիները կարծես փոխված էին տաք հարաւայնների:

Երեկոյեան դէմ մի փոքրիկ շոգենաւ մտնում է նաւահանդիսար. հնչում է երաժշտութիւնը, պայթում են կեցցէ-ները, գարբիբալդիի անունը սահում է ամենի շրթունքների վրայ:

Ե՛ւ յիրաւի, երեւում է նա ինքն ուղիղ կանգնած կամուրջի վրայ, հագած իր կարմիր շապիկը. քիչ ա-

ռաջ Վառինեանօ-ի անկողնի վրայ տարածված վիրաւոր և կալանաւորն այսօր ընդունվում է իբրև յաղթական մի յափշտակված ժողովրդի կողմից: Ո՛չ մի վիպասան կարող չէր երեւակայել աւելի արագ փոփոխումն տեսարանի: Անգլիացիները խնդրել էին նրանից այցելել իրանց կղզին. զօրապետը յանկարծական որոշումով ճանապարհ ընկաւ գէպի այնտեղ:

Պառմէռլանդի դուքսը հետն ունենալով ծաղիկ աղնւականութիւնը, թագաւորութեան բոլոր քաղաքների և ընկերութիւնների ներկայացուցիչներն, ընդունեցին նրան այն ժամանակ, երբ ոտքը դնում էր ցամաքի վրայ: Գարբիբալդի շոգենաւից իջած ժամանակ բարեւեց բոլոր նաւաստիներին, որոնց հետ կատարել էր իր Ճանապարհորդութիւնը. յետոյ, մինչ պատգամաւորները պատրաստվում էին արտասանելու իրանց Ճառերը, դարձաւ կրկին գէպի նաւաստիները և ամեն-մէկի ձեռքը սեղմեց յաջորդաբար: Ժողովուրդն ուժգին ծափահարեց:

Ուաջնորդեցին նրան Steely պատգամաւորի տունը, Wight կղզու վրայ, յետոյ՝ 11-րդ օրը մտաւ Լոնդոն: Ընդունելութիւնը գերիվերոյ եղաւ ամեն ակնկալութիւնից: Ժողովրդի մի ծով — 800 հազար մարդ — ալիքի նման տատանվում էր փողոցներում, պատշկամբներում, պատուհաններում, կտուրների վրայ տեսնվում էին հազարաւոր հանդիսականներ. կայարանում խռնվում էին անգլիական պառլամենտի անդամները և ներկայացուցիչները, և կտոքը, հէնց որ կայարանից դուրս եկաւ, ձեռքերի վրայ վերցվեց ժողովրդից, որ կամենում էր յաղթական հանդիսաւորութեամբ թափորով տանել գարբիբալդիին:

— Wellcome! (բարի եկար), աղաղակում էին: Ե՞ւ՝ որը բարձրանում էր անիւների վրայ, որը սեղ-

մում էր ձեռքերը, որը համբուրում էր գորշագոյն վերարկուի քղանցքները... Մինչև Սառմելէոլանդի դուքսի պալատը հասնելու համար, ուր նա բնակութիւն հաստատեց, հարկ եղաւ դործ դնել վեց ու կէս ժամ:

Լօնդօնը նրան իր քաղաքացի արաւ. Լօրդ Պալմեռստոն, Գլադստոն, Ալմելուսնի դուքսը նրան այցելութիւն տվին, տօների, ցուցայնդէսների հրաւիրեցին. Գալէսի իշխանը կամեցաւ ծանօթանալ նրա հետ. քաղաքապետը, մինհստրները ինչոյքի են կանչում նրան. ուղերձներ ու պարգևներ են ներկայացվում: Մի պատգամաւորութիւն նուիրում է նրան պատի սուր:

— Ես իսկապէս զինւոր չեմ, պատասխանում է գարեթալի: Ես չեմ սիրում զինւորի արհեստը. բայց տեսնելով իմ տունն, իմ հայրենիքն ասպատակված աւազաներից՝ զինվեցայ, որպէսզի հալածեմ նրանց: Ես մի գործաւոր եմ, սերում եմ աշխատաւորների ցեղց և հպարտ եմ դրա համար:

Անդիւցի չափաւորականները սարսափի մէջ ընկան, երբ Գարեթալի ընդունեց հոչակաւոր ռուս յեղափառական չէոցէնի տան մէջ տրվելիք ճաշի հրաւերը: Այնտեղ գտնվեցան նաև Մաձձինի, Սաֆֆի, Օդարիով, Stansfeld և մի քանի հանրապետականներ: — Մաձձինի բարձրացնելով բաժակը, բացականչեց.

— Իմ կենացն այն բոլորի համար է, որոնց մենք սիրում ենք և որոնց համար մենք կուտում ենք. խմում եմ ժողովրդների աղատութեանը և միութեանը. այն մարդու կենացը, որ իր գործերով կենդանի մարմնացումն է այդ գաղափարների... պարտականութեան կրօնին, որ մեզ դէպի մարտ պէտք է մղէ մինչեւ մահ, որպէսզի փըրկութիւնը կատարվէ:

Գարեթալի նրան պատասխանեց խանդաղատանքով, յիշելով, որ Մաձձինին տվել էր իր կեանքին նպատակ

և որ մինչեւ այժմն էլ սքանչացած էր նրա զոհաբերութեան առաքինութեան վրայ, և եզրակացրեց. «Իմ բարեկամին, իմ ուսուցչին»:

— Չափազանց է, չափազանց է, բացականչեց Մաձձինի, սեղմելով Գարեթալիի ձեռքերը:

Երկուսն էլ յուզգած էին: Եւ որովհետեւ խօսվում էր Երիտասարդ Ռուսաստանի մասին, մաղթելով, որ նա ձեռք բերէ իր իրաւոնքն՝ ամփոփված Երկիր և Ազատութիւն բառերի մէջ, այսպէս պատասխանեց Հէռցէն:

— Ես մաղթանքը պէտք է հասնէ մինչեւ Սիբիրի վշտալից հաների խորքերը և մինչեւ խաւարչտին նըկուղները, ուր հեծում են ամուր պահպահմար ընկերները:

— Կապօլէօն բարկութիւնից մաղթ է թափում. Իր խորամանկութիւնները ոչնչանում էին Գարեթալիի վեհանձնութեան առաջ: Գրեց անդլիական նախարարներին.

Իր գեսպանն աշխարհ իրարանցման մէջ դրաւ. պահպանողականներն ուղում էին Գարեթալիին հեռացնել, որովհետեւ չէին կարողանում կաշկանդել նրան իրանց կարձ շրջանների մէջ. Վերջի վերջոց մտածեցին... նրան հիւանդ հրատարակել տալ: Գոկտօր Գրոգիւսըն յանձն առաւ ներկայացալու ստոր կատակերգութեան. սակայն զտեց գտաւ ճշմարտութիւնը. պառլամէնտի ազատական անդամները հարցապնդման ենթարկեցին մինհստրներին: Եւ այն լուրջ, պատկառելի խորհրդում ամբողջ մի նիստ նուիրվեց խօսելու միմիայն նրա հիւանդութեան, իր ձեւերի և առաջարկված գարմանների մասին, այնպէս որ, ստում էր հանդիսականներից մին, «թւում էր իրան, թէ բժիշկների մի կօնդուեսի էր գտնվում»:

Գարեթալի — չափազանց խոհեմ՝ մնալու համար Անգլիայում — հակառակեց ազատականների և իրան ուղող բրիտանական քաղաքների ինդիրքներին և ու-

բոշեց մեկնել, մերժելով նաև մի հանդանակութիւն, որ մի քանի ժամւայ մէջ հաւաքեցին յիսուն հազար սովոր ստէրլինս:

Լօնդօն թողնելուց առաջ՝ գնաց գերեզլանատունը, ուր հանդստանում էին ֆօսկօլօ-ի ոսկրները, և այն տեղ դրաւ մի դափնեայ պսակ այս գրութեամբ.

Քաջերին

Մանէ ծշմարիտ բաշխիչ փառքի:

Անգլիայից հեռանալիս, ապրիլի 22-ին, ասում էր մի բարեկամի:

— Տարօրինակ մի զգացում է տիրապետում ինձ երբեմն-երբեմն: Անգլիական ժողովրդի կողմից գէպի ինձ եղած լնդունելութիւնը խոր կերպով յուղեց ինձ: Ո՛չ, ինչպէս այդ ինձ յիշեցնում է Ամերիկայից վերադառնուց յետոյ սահած օրերը, 1848-ին, երբ ոտք կոխեցի նիցայում և վերստին տեսայ մօրս, Անիտային, զաւակներիս և բարեկամներիս... Այնքա՞ն, այնքա՞ն երշանիկ էի: Դուք գիտէք այն դժբաղդութիւնը, որ ունեցայ անմիջապէս յետոյ: Այժմ էլ մի քայի օր երշանիկ եղայ... Որպիսի՞ դժբաղդութիւն է սպասում ինձ:

Ո՞ի բաղդագուշակ ձայն կարծես պատասխան տըշք. „Մէնտանս“:

XXXII

ՏՐԵՆՏԻՆԵԱՆ ԴԱՐԱՒԱՆԴԻՆԵՐԻ ՎՐԱՅ.

— Պէտք չեն այլ ևս ոչ աղաղակներ, ոչ խօսքեր, ոչ երիտասարդներ, այլ միմիայն գործեր: Եւ երբ կը վերջանան փայլուն գործերը, որոնց պահում է բաղդը ձեր սուխներին, երբ մեր գեղեցիկ բնագաւառը կը վերջին ստոր զինորից. — բարձր ձակառով,

զօրացած ժիր կանանց համբոյրով, ժողովրդների տօնական ծափերով պէտք է վերադառնաք գէպի վերանորոգված հնացի շնորհը շնորհը, գէպի յաղթական երգերի ձայները:

Այսպէս էր խօսում Գարիբալդի, 1866-ի յունիսի 24-ին, իր կամաւորների վաշտերին: Միւս անգամ էլ իջած էր դաշտ, և այդ իտալական կառավարութեան խնդիրների վըայ: Այն ինչ գնովեցաւ պատերազմն Աւատրիայի գէմ, ուղարկեց կանչեց Ասպօմօնտէի վիրաւորին: Գարիբալդի մի վայրկեան իսկ չը տատանվեց, և մոռանալով արդար զայրոյթի ամեն պատճառ մինիստրների նկատմամբ, բարձրացրեց Սիկիլիայի հին և յաղթական դրոշը և կանչեց իր հաւատարիններին իրաշուրջը: Եւ ահա վաղեցին ժողովվեցան Գարիբալդիի հրամանների տակ Խտալիայի թշնամուն զարնելու ցանկութեամբ լրցված հաղարաւոր կամաւորներ, որոնց թիւը մինչեւ իսկ չափազանց նկատվեց մինիստրութեան կողմից, ուստի և նրանցից շատերին չանգործ պահեց պահեստներում: Զօրապետը տածում էր մի յօս. այն էր ո և է կերպով անկախ լինել կանոնաւոր բանակի հրամանատարութիւնից և իր կողմից կատարել կայծակի նման արագ և կրկնված շարժումներ, որոնք ուրիշ անգամներ շփոլութեան մէջ էին ձգել թշնամիններին: — Դժբաղդաբար, Խաբվում էր: Կառավարութիւնն ուղարմ էր ունենալ կամաւորների օգնութիւնը, որովհետեւ այդ պէտք էր գալիս իրան, սակայն միենայն ժամանակ նրանց նկատմամբ միշտ մի տեսակ զգուշաւորութիւն էր պահպանում և չէր ուղարմ, որ Գարիբալդի շարժվեր գէպի Արքիականներ և մղմէր, ինչպէս որ նա ցանկանում էր, ապստամբեցնելու Հունդարիան՝ աւելացնելու համար Աւատրիայի գէմ մէկ այլ թշնամի նոյն իսկ իր տան մէջ: Աւաղ, երբ 1869-ի պատերազմը սկսաւ, մինիստ-

տրներին յայտնի էր արդէն, թէ ինչպէս էր վերջաւնալու այն. Նապօլէօն III-ի հրամանն էր չը յարձակվել Աւստրիայի վրայ շատ մեծ սաստկութեամբ:

Գրարիբալդի հրաման ընդունեց մէկ արշաւանք փորձ ելու Տրէնտինյ-ի վրայ: Նա առաջնորդեց իր կամաւորներին գառձա-ի լճի գծով և իր ընդհանուր բանակը զետեղեց Սալօ-ում: Զէլլս տեղակալի հրամանաւարութեան ներքոյ դրված իր մի խմբակը յարձակումով գրաւեց կաֆֆառօ-ի կամուրջը, վանեց աւստրիացներին մինչև Ստոու և բարձրութիւնների վրայ ամենայրամար դիրք ընտրելով, բանակեց:

Աւստրիացիներն աջողեցան ձեռք անցնել կամաւորների հրացաններից մի քանի հատ, և նկատելով նրանց հնութիւնը և անպիտանութիւնը, գամեցին նրանց տների պատերի և ծառերի բուների վրայ իբրև անարդանք՝ կամ զէնքերի ճղճիմութեան համար կամ որպէսզի իտալական քաջութեան այդ ապացոյցը Պիենա տանելով, ամծերից չը կարմիրն, որ այդպիսի հրացաններով յաղթված էին իրանք:

Եղն օրը Գարիբալդի խօսում էր իր կամաւորներին յուսալի յաղթանակների մասին, կանոնաւոր բանակին մղում էր կուստօձա-ի պատերազմը: Գիշերը կուել էր: Գարիբալդի պէտք եղած կարգադրութիւնները հաղորդել էր կամաւորներին, որպէսզի յաջորդ առաւոտը շարունակեին երթալ դէպի առաջ: Նա մտածում էր Տրէնտինօ-ին տիրելու և ստրկութեան մէջ մոռացված եղբայրներին աղատութիւն տալու մասին, երբ նրան հասաւ կամաւորա-ի հեռագիրը.

— Անդարմանելի պարտութիւն. յետս նահանջումն օլիո-ի միւս կողմը. աղատեցէք՝ հերոս Բուշիան և վերին Լոմբարդիան:

Զօրապետն անկողնից վեր թռաւ: Կրա դէմքի վր-

րայ կարդացլում էին բարկութիւն ու վիշտ: “Յաղթութեան վերադարձը, ասում էր. կամենում ենք վերստին յաղթութիւն տանել ո:

Եւ նա կը տանէր այդ յաղթութիւնը, առաջ ընթանալով Տրէնտինօ-ի միջով, սակայն հրամանը վը ձուական էր և ոչ մէկ առարկութիւն ընդունելի չէր: Խսկյն յետ է քաշում առաջապահ գնդերին Ստոու-ից, շտապում է գէպի գառդնէ և խրախուսում է բռէշիաններին իր հաւատով, որն ունէր արդար դատի նկատմամբ: Ունիւնի արքիթուքով հասել էր մինչև Վօլտա, Մանտովանօ-ում: Իսկ Գարիբալդի իր շարժումներով արգելեց նրան աւելի առաջ գնալ:

Յուլիսի Յ-ին Գարիբալդեանները գտնվում էին Մօնտէ Սուէլլո-ում, Բագոլինօ-ի մօտ: Գարիբալդի, Կուստօձա-ի հետեանքների մասին ապահոված լինելով, վերադարձաւ նորից գրաւելու նախկին դիրքերը, որ կորցրած էր կամաւորա-ի յետ նահանջելու հրաւերի պատճառով: Կուտէ գնդապետն ուղարկվեց աւստրիացների դէմ: Մրանք առաւելակիր էին հանդիսանում թէ՛ բոնած դիրքերով, քան մերին-ները: Յանդենութիւնը ոչնչացրեց անհաւասարութիւնը: Առաւոտեան դէմ իջել էր հեղեղի նման տեղատարափ աւելի ուշ երկինքը պարզվելով՝ շողեր էր թափում կիզիչ արեւ: Կամաւորներն ամենենին ըլ վհատվելով աւստրիական կառաքինների հարուածներով իրանց շարքերի մէջ առաջ եկած պարապութիւններից, արիստուքար առաջ էին գնում, մինչև որ կուր սկսեց թշնամու հետ մարմին առ մարմին, որի միջոցին քաջութեան բազմաթիւ միջադէպեր տեղի ունեցան: Աւստրիացիններն ու իտալացինները միաժամանակ խուժեցին մի գերեզմանատուն, որին ուղղում էին տիրանալ, որովհետեւ կարեսը մի կէտ էր այն. երկու կողմերի զօրքերը գլու-

Նըմեցան միասին միւնոյն կէտի վրայ, ուր պայթեց սարսափելի կոխւ, որի մէջ թշնամիներն իրանց մահը դառն: Գարիբալդի անձամբ մտաւ այդ կուռում և իր ներկայութիւնը կրկնապատկեց կամաւորների աւելինը: Գնտակները սուլում էին զօրապետի շուրջը. բայց ամենըն անկասկած էին նրա վերաբերութեամբ: Սիկիլիայումն էլ նրա շուրջը սստոստում էին գնտակներն առանց սակայն նրան դպչելու: Յանկարծ զօրքերի շարքերում մի շըուկ տարածվեց, որ ամեն ցաւ ու երկիւղ առաջ բերաւ: Գարիբալդի վերաւորված էր:

Ճակատագրական մի վայրկեան սահեց: Մերոնքը տատանվեցան և ստիպվեցան հաւաքվել. որպէս զի ապահովութեան մէջ դնեն իրանք իրանց. կտրիճ գնդապետ բոռուձի իր քաջութեամբ աջողեց կարգի բերել այն ամբոխին: Աերջ ի վերջոյ, կամաւորները հաւաքվելով բարձրութիւնների վրայ, գէպի Անտոնիօ, չորս թնդանօթներով յարձակվեցան թշնամիների վրայ, որոնք շտապով փախան, հերւացան մօնտէ Սուելո-ից, գանտէ կաֆֆառո-ից և Բագոլինո-ից:

Մինչդեռ պատերազմը կատարվում էր, մերոնք ասում էին իրանք իրանց մէջ. „իսկ Գարիբալդի ինչ պէտք է անի. արդեօք վէրը ծանր է, ո՞վ պէտք է հսկէ նրա մօտ:“

Հորս կամաւորներ տարածելով Գարիբալդիին պատգարակի վրայ, տարին Ռոկիա գէ Անֆօ: Ճանապարհին պատահեցաւ մի զինւոր 23-րդ հետեւակազօրից, Տառկուինիո Կուլի, որ առաջին անգամ տվեց նրան իր ծառայութիւնները հենց որ հասան ումբաձիգ զօրքի պահապան գումարտակի մօտերն, ուր գտնվում էր կանոնաւոր զօրքի բանակը և զրաքանակը մերկ սեղանի վրայ, ասաց չորս կամաւորներին.

— Ընտառ, գէպի պատերազմի դաշտը. ինձ չետ ժաւ

մանակ մի' կորցնէք, շուտ, տեսնեմ ձեզ այնտեղ, անմիջապէս պատերազմի սկսած...

Նրա հետ մնացին նույլի և իր նիցցացի ծառան: Դառնալով առաջինին.

— Կարո՞ղ էք բժշկութիւն անել, հարցրեց նրանից:

— Ո՞չ:

— Լա՞ւ, ի՞նքս կը սովորեցնեմ ձեզ: Շուտով մի ոմբաձիգ զինւոր ուղարկեցէք այնտեղ, սափորով, իդուոսի լիճը, և թող մի սափոր լիքը ջուր բերէ: Տեսնո՞ւմ էք այս ծակը ազգրիս մէջ. մի բաժակով ջուր նետեցէք միշտ այն կողմից, որտեղից գնտակը ելաւ... եթէ քունս տանի, ցնցեցէք ինձ. նայեցէք, որ արթուն պահէք ինձ:

Մինչ նույլին տալիս էր այդ հասարակ խնամքը, հասնում է Մէնօտտի անձկալից: „Ինչպէս ես“, հարցրեց հօրը: „Ծանր է...“

— Ինչո՞ւ թողիր պատերազմը և եկար, բացականչեց Գարիբալդի առանց նրա հարցերին պատասխանելու: Այստեղ է քո տեղը: Ճանապարհ ընկիր և վազիր գէպի պարտականութիւնդ:

— Ասնում են գօրտօր բէռտանի, մի քանի բըժիշկներ ու սպաներ: Գարիբալդի գդրգոված էր: Հրացանաձութեան ձայնն աւելի շուտ-շուտ էր լսվում:

— Եյս հրարանաձգութիւններն, ասում էր, ինձ աւելի ծանր վէրքեր են տալիս: Գնացէք, օգնեցէք նրանց, ովք բժիշկներ: Իսկ գուը (սպաներին) ձեր օրինակով և խօսքով պէտք է քաջալերէք զինւորներին...

Կյանուամենայնիւ, բէռտանի բժշկեց նրան արհետի կանոնների համեմատ:

— Մեծ ցաւ չեմ զգում, ասում էր սակայն զօրքապետը. ինձ աւելի ցաւ է տալիս հին վէրքը... Ասպօմօնտէի վէրքը:

Արեկոյեան տեղափոխվեց ստորին բերդը և դըրվեց հրամանատարի սենեակը: Իբր նշան երախտագիտութեան ուղարկեց նուլի զնուորին մի փոքր ծրար: Զիւտորը բանալով այդ ծրարը, տրտմախառն զարմանքով գտաւ մէջն ուժը ոսկեդրամ: Վազում է գարիբալդիի մօտ, վերագրածում է նրան գրամը և ինդրում է տալ իրան ի փոխարէն մի որ և է անարժէք յիշատակ: „Ամեն, բան, ինչ անցնում է ձեր ձեռքերից, ասաց պատւաւոր գունչիկը, արժէք է ստանում:“ Գարիբալդի, յուղված, պարգևեց նրան զմելի (գրչահատ), որը ստացել էր մէկ անգլիացի տիկինից. և բժշկվելուց յետոյ երր կառքով պատերազմ էր գնուում, պատահելով նուլի-ին, ժպտում էր նրան անկեղծ զըւարթութեամբ, չը մոռանալով ասել նրան, „Addio dottore!“

Գարիբալդի իր անկողնից կառավարում էր իր կամաւորների շարժումները: Յուլիս 8-ին տեղի ունեցաւ մէկ ուրիշ կոխ Վալ Կամօնիկա-ում, Էդօլո-ի և Տէցցա-ի մէջտեղ, փայտեայ կամուրջի կամ Մօնտէ Պօնալէի անցքի ճանապարհի վրայ: Թէ այս և թէ կաֆֆառօ-ի և Ստէլվիօ-ի կէտերը միակ անցանելի ճանապարհներն են զօրագնդերի համար, որոնք կամենում են մտնել Տրէնտինո: Մերոնք արիարար առաջ մզվեցան միուշւ Վէցցաւ-ի այն կողմը, զեկավարված կաստէլինի հաղարապետի հրամանի տակ: Իտալիացիները, որոնք սիրոված էին մի ձորում, ընդամենը 800-հոգի էին. 4000-ից աւելի աւստրիացիներ՝ թնթանօթներով հանդերձ բռնած էին բարձրութիւնները:

Դացի կաստէլինի-ից, այնտեղ էր և կալդէզի հաղարապետը և Մալակոիդա տեղակալը: Գարիբալդիանները շատ անգամ փորձեցին ահարեկել աւս-

տրիացիներին սուբինի յարձակումներով, սակայն հողի տատանումներն անկարելի էին գարձնում այդ: Կաստէլլինի, որ անպատւութիւն համարեց յետ քաշվել, քաջութեան հրաշալիքներ էր գործում: Գեռ պատերազմի սկզբից վերը ընդունեց երեսից: Արիւնաշաղաղ առաջ էր վարում յարձակումը. մի ժամ յետոյ երկրորդ գնդակը հարուածում է նրան բազուկից, գրեթէ անմիջապէս յետոյ մի երրորդը ծակում, անցնում է նրա թոքերը: Հուժկու զնուորը գլորվում է գետնի վրայ, իբրև մի մեծ գունտ, ողջունում է իտալիան մի կէցցէով, վերջին հրաժեշտի ողջոյնն է տալիս զինուորներին և արձակում շունչը.

Գարիբալդեանները ստիպվեցան քաշվել Էդօլո-ի միւս կողմը. սակայն 6-ի արշալոյսին նորից խրամի մօտ էին, առաջին գծի վրայ. 6-ին և 10-ին պատահեցան նոր կոհիներ Կաֆֆառօ-ի գծի վրայ, որոնք նըսպաստաւոր արդիւնքներ ունեցան կամաւորների համար:

Գարիբալդի՝ անկողնու վրայ բարձրացած և կառքի միջից տալիս էր իր հրամանները և խրախուսում զինուորներին գէպիյարձակում, մտնելով մինչև նրանց շարքերի մէջ:

Վւելի էլ աջող եղաւ մեզ համար յուլիսի 1-ի կոիւը Գարիբալդիի գործողութիւնների վայր եղող գծի ծայրագոյն ձախակողմի վրայ, այսինքն Վալտէլլինառում. Ստէլվիօ-ի բերանի մօտ պատերազմը կառավարեց Գուիչիարդի դնդապետը:

Տասնուշորսին Գարիբալդի գնում էր իր ընդհանուր բանակը Ստուօռում: Գա սկիզբն էր Տրէնտինօ-ի դրաւման:

XXXIII

ՅԱՎԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԻՍՍԹԱՓՈՒԹԻՒՆԸ.

Երկու բարերեր ու ապառաժուտ լեռների մէջ-
տեղում, որոնցից գահավէժ իջում են դէպի ձո-
րըն աղմկալեց հեղեղներ և ուր հազիւ նշարփում
են ոլորապտոյտ նուրբ շաւիղները և ժայռերի մէջ-
տեղերով անցնող այծեման արահետները, բարձր-
րանում է Ամպօլա-ի բերդը: Աւստրիացիները շինե-
ցին նրան 1859-ին, որպէսզի բնութիւնից արդէն դրժ-
ւարամատոյց եղող այդ գիրքն անառիկ դարձնեն:
Գարիբալդի իր մօտ կանչեց Հօդ զօրապետին, աղատու-
թեան մի ծեր մարտիկ, որ 1848-ին մասնակից եղաւ
Վիէննայի յեղափոխութեան և 1849-ին Հռոմի պաշ-
պանութեան, և ասաց նրան.

Ամպօլա-ն ունենալ ինձ անհրաժեշտ է, որպէս-
զի Տրէնտինո-ի գործողութիւնները շարունակեմ ա-
ռաջ տանել. պէտք է որ քո Կտրիճներով տիրես
նրան: Քեզ անում եմ միայն մի յանձնարարութիւն.
ուզում եմ, որ բերդի պահապան զօրքը գերի բըռ-
նըվէ:

Հօդ անմիջապէս սկսում է շարժվել. յուշիս 15-ն էր:
Միւնոյն ժամանակ Գարիբալդի ուղարկում՝ կան-
չել է տալիս իր հարիւրապետներից ուրիշների էլ և
նրանց մատնացոյց է անում կօնդինուն, որի առաջ ա-
ւստրիացիները շինել էին տված լառդառո-ի բերդը:
Խոյն առաջ է մղում կամաւորների խմբին. ա-
ւստրիացիները 16-ի առաւօտայ ժամը 8-ին գուրս
են գալիս սրանց դէմ, սակայն մերոնք կեցց է ի-
տաւիս աղաղակելով, անցնում են Աիէղէ-ի հունով

Թշնամի որսորդների կրակի տակով հասնելու համար
բարձրութիւնների վրայ, ուր նրանք դարանի էին կանգ-
նած:

Աւստրիացիները փորձեցին ևլել Գարիբալդեանե-
րի գիծը Ստոու-ի և կոնդինո-ի մէջտեղ. բայց չա-
ջողեցան այդ անել: Այդ միջոցին մեր ումբաձիգը
հեռացրեց նրանց Սան Լուինցօ-ից և փախցրեց բար-
ձրութիւններից դէպի կոլոնեայ: Այսպէս, Գարիբալ-
դի թէ աջ և թէ ձախ կողմերից յաղթութիւն տա-
նելով, վերջնականապէս ապահովացրեց իր դիրքը:

Ակայն չարաղէտ մէկ օր եղաւ այդ, մեր այն-
քան Կտրիճների արիւնը հոսեցաւ: Մօտ 200 հոգի ե-
ղան մերոնցից թէ վիրաւորված և թէ սպանվող. այս
վերջինների մէջ էր Բուշիա Ագոստինո Լոմբարդի
հազարապետը, որ 1848-ից սկսած մինչև այդ օրն ի-
տալական անկախութեան համար մղված բոլոր պատե-
րազմներում կուած էր:

Մինչ այս, մինչ այն, հրաշալի կորովով ա-
ջողեցան, մարդկանց ուսերի վրայ կրելով, Ամպօլան
շրջապատող բարձրութիւնների վրայ հանել ումբաձիգ
հրանոթներն իրանց բազմամթերքների և պաշրի սայ-
լակներով միասին. թնդանոթները քիչ էին, բայց
հազարապետ Գոյլիուտափի, շնորհով իր պատրաստ հան-
ձարին, իմացաւ կրկնապատկել նրանց ոյժը: Ամեն-մի
հարուած խրամատում էր բերդի պարիսպը, սակայն
աւստրիացիներն էլ մեծ սաստկութեամբ էին պատաս-
խանում:

Գրաւէք Մօնտէ Զիօյէլօ-ն, հրամայեց Գարի-
բալդի: Եւ խկոյն մի խումբ, առաջնորդութեամբ էն-
ոիկո կայուղի-ի, գահավիժելով ժայռերից դէպի վայր,
յարձակում գործեց. աւստրիացիները հարկադրվեցան
թողնել Մօնտէ Զիօյէլօ-ն, իսկ մերոնք գրաւեցին այն:

Ումբաձիդ զօրբերի տեղակալը, Աւազիս, թնդա-
նօթներից մին քաշեց տարաւ բերդի պատերի դիմաց
և թշնամու ռումբերի տակ կրակ արաւ։ Աւստրիացինե-
րը, զարմացած այդքան համարձակութեան վրայ, մի
քանի ժամանակ գաղարեցան պատասխանելուց։ Ա-
լազիան էլ հարուածները կրկնապատկեց։ Յանկարծ
դառնալով մօտը եղողներին, բացականչում է.

— Ո՞ի տուփ սիդար գրաւ եմ դնում, որ երեք
հարուածից կը խորտակեմ աւստրիական գրօշակի ձողը։

Եշ մի երկվարյեանում ւեղին ու սև գրօշակը
գլորվում է գետին փոշու անձրեւում։ Սակայն ձիշդ
այդ միջոցին համսում է միտրայլը ձախ կողմից և
թշուառն Ալազիան ընկնում է մահացած։ Յօ-ժամ
ոմբակոծելուց յետոյ բերդի պարիսպները կործանվե-
ցան։ Կամաւորներն ամեն կողմերից առաջանում էին
բարձրութիւնների վրայ։ 16-ին գիշերը 6-րդ հետեա-
կազօրների վաշտի մի գունդ յանկարծակիի բռնվելով
Մօնտէ Բուռելի-ի և Մօնտէ Զիօվիո-ն, ամբողջացնում
էր Ամպօլա-ն պատող զօրբերի շօջանակը։ Աերջա-
պէս պատի վրայ երկեցաւ անձնատւութեան սպիտակ
գրօշակը։ Անձնատւութիւնը կատարվեց առանց որ և է
պայմանի. աւստրիական զօրբերը գուրս եկան 9-ի երե-
կոյեան, որպէս գերիներ, իսկ մերոնք 20-ին մատն բեր-
դը, ուր գտան առատութեամբ ուազմամթելք և ուտեստ։
Փոքր կարևորութիւն ունեցաւ գարդա-ի լճի մօտ ե-
ղած կոխւը, թէե ոչ նուազ կորստաբեր գառնեանօ-ի
համար։

Գարիբալդի կամենում էր օգտակար անել ան-
միջապէս Ամպօլա-ի առումը. գնդապահ կիասի ա-
ռաջ էր մղել իր առաջապահներին մինչև Էնդիզո և
Լօկա։ 21-ի արշլոյսին գարիբալդի իր ընդհանուր
բանակը գետեղեց Տիառնօ-ի տակը, Բէցցէկա-ից երկու

և կէս կիլօմէտր հեռաւորութեամբ։ Այս անունը մեզ
յիշեցնում է կատաղի կոխւը և ծանրագնով ձեռք
բերկած յաղթանակը։ Աւստրիացիները հաստափած
էին ամուր գիրբերում. մերոնք առաջանում էն մինչև
Բէցցէկա, բայց չեն աջողում հալածել նրանց այն
բարձրութիւններից։ Այդ տեղ անցաւ մի սարսափելի
վարկեան։ Զարհուրանքի մի տագնապ սահեց կամա-
ւորների շարբերի միջով, որոնք սկսան փախչել։ Վի-
ասի, յուսահատ, մի շարքից դէպի միւսն էր վագում,
աշխատելով կանգնեցնել նրանց։ Հօդ զօրապետը և Պի-
անչիանի նրա օրինակին էին հետեւում. մի կողմից լըս-
վում էին յորդոր, աղաչանք ու սպառնալիք, միւս կող-
մից կոյր երկիւզը, որ հալածում էր Գարիբալդի նոյն
իրան տանել տվեց իրա կառքի մէջ ամենավտանգա-
ւոր տեղը և անյողդողդ ու բարութեան հեղձամղձուկ
ձայնով աշխատում էր սանձել փախստականներին։ Այդ
միջոցին Վիասի, 38 տարեկան երիտասարդ սպիտակ
մի փունջով և վարդագոյն երեսով (չումի պաշտպան-
ներից և Մուռասվայր Հազարից մինը), պաշտպանվում
էր գերեզմանատնում հերոսի արժանի քաջութեամբ։
Սկսվեց մի սոսկալի կոխւ, համարեա մարմին առ մար-
մին. Վիասի ընկնում է և գիտակը մնում է որս թըշ-
նամիների ձեռքում, բայց մերոնք ուժով յետ են Խը-
լում նրանց ձեռքից։ Առաջ են գալիս թշնամի զօրա-
բաժինները. օրը կորած էր թւում։

Ամենաստիպողական կարգադրութիւններ տալուց
յետոյ Գարիբալդի հրամայում է կառքից գուրս հանել
իրան, նստեցնել գետնի վրայ, թնդանօմի մօտ։

— Օօրապետ, ասում է նրան հազարապետ Դոյ-
լիօտի. գիտեմ, որ հազարներութեան դէմ եմ գործում.
սակայն պարտք եմ համարում նկատել իրան, որ ինքը
այստեղ իր տեղումը չէ։

— Եւ ինչո՞ւ, հարցրեց Գարիբալդի բռնի ժպիտով :
Ուսովէտեւ այստեղ պէտք է գիտենայ մեռնել մի-
այն նա, որին յաձնված է պաշտպանել մի թնդա-
նօթ, և ինքը (այսինքն Գարիբալդի) ¹⁾ պէտք է ապրէ
պաշտպանելու Համար մէկ ամբողջ զօրաբանակ :

Գարիբալդի գէմքի վրայ ցոլանում էր սրտաճմիկ
արտայայտութիւն և մեռնելու փափագը զգացող ե-
րեսոյթ :

— Անգիտ թողէք ինձ, պատասխանեց չոր ու
հպարտ կերպով . բայց Դոլիօտտի թախանձում էր :
„Զօրապետը կարող է ինձ պատժել, սակայն այստեղ
չէ կարող մնալ այլ ևս մի վայկեան իսկ :

— Արէք ինչ որ ուզում էք, մրմթեց Գարի-
բալդի ատամների միջից : Խսկոյն մի քանի սպաներ,
վերցնելով նրան գետնից, տանում են կառքը . ուում-
բերն ընկնում էին նրանց շուրջը :

Բէցցէկկան կրին ընկաւ աւստրիացիների ձեռքը .
Հազարապետ կանցիօն Հաւաքելով ցրվածներին, ա-
ռաջնորդում է վերստին գէպի յուսահատական կոիւր .
յաղթել կամ մեռնել : Վրայ է հասնում Մէնօտտի, հետն
ունենալով մի գումարտակ, և հրամայում է յարձակ-
վել սուին ի ձեռին : Արագ, որպէս կայծակ, ընկնում
են թշնամիների ետևից . աւստրիացիները չեն կա-
րողանում դիմադրել այդ խորտակիչ սաստիութեան :
Ռումբերից մին ընկնելով Բէցցէկկանի տներից մէկի վր-
քայ, հրդեհում է նրան . կամաւորները „կեցցէ Գարի-
բալդի“ աղաղակելով, մի երկրորդ յարձակում են գոր-
ծում սուին ի ձեռին՝ երկրի միջով՝ տների մէջ ա-
պատանած աւստրիացիների կրակի տակ : Եւ ապա փոխ-

1) Խոտակացիները քաղաքավարութիւն եւ յարգանք Ան-
համարում երթորդ գէմքով դիմել խօսակցին .

վեց պատերազմի բաղդն . այժմ աւստրիացիներն են որ
ի փախուստ են դառնում : Յաղթութիւնը կատարեալ էր :
Գարիբալդի, իր զաւակների ընթացքի և կըկին ան-
դամ տարած փայլուն յաղթանակի վրայ ուրախացած
բացակաչում է :

— Եյլ ևս Տրէնտինոն մե՞րն է :

Իսկ աւստրիական զօրապետ կիւն գրում էր իր
կողմից 22-ին . „Անհնար է այլ ևս պաշտպանել
իտալ ան Տիրոլու“ (այսպէս են անուանում
Վիէննայում Տրէնտիոն) :

Խնդութիւնն ու յոյսը բոլոր կամաւորների սրտերի
մէջ վերստին արծարծված էին, և ինչպէս լինում է նը-
ման պարագաներում, հսկաների թիւն աւելացնում էր,
նրանցից իւրաքանչիւրը կամենում էր ապագայ քաջու-
թեամբ քաւել զգացած զարհուրանքը : Գիտէին, որ
Մէգիչ զօրապետն ինքն էլ գնում էր ուղիղ Տրէնտի-
նուի վրայ, օն, ուրեմն, քաջութիւն . արդեօր ով ա-
ռաջինը կը հասնէ Տրէնտինում կամաւորներ և
զինուրներ միմեանց ձեռք սեղմելու . . . Աւազ, յուլի-
սի 22-ին Գարիբալդի այս հեռագիրն է ստանում Լա-
մառմօռա զօրապետից :

— „Օխնագագարը ստորագրված է . Տրէնտինուից
քաշվեցէք . . . Տրէնտինուն թողնել, և այն բանից յե-
տոյ, երբ այն ժողովուրդներն ընդունել էին մեզ
փրկութեան տօնական երգերով, այն բանից յետոյ,
երբ 2382 կտրիճ իտալացիների արիւնը նուիրագոր-
ծել էր այն ապաւամեները : Լուրն իմանալուն պէս մի
քանի վիւսաւոր քաշեցին Հանեցին վերքերի պատաննե-
րը, որովհետեւ նախադասում էին մեռնել, սպաները
կոտրում էին իրանց սրերը, կամաւորները խփում էին
իրանց սուիները ժայռերին և ջարդութշուր անում
նրանց, ուրիշները գալարվում էին գետնի վրայ կա-

տաղի, յուսահատ, լալով ու անիծելով:

Գարիբալդի ոչ մի բառ չարտասանեց. Լակօնական պատասխանը հեռագրեց թագաւորին.

— Հաղանդվում եմ:

Որքան դառնութիւն մեծ հոգու այդ մի խօսքում:

XXXIV

ԽԱՂԱՂԱԲԵՐ ՄԱՌՍԼ.

Խամաւորների բանակը ցրւում էր, գարիբալդի բռէշայում էր: Օգոստոսի 29-ի առաւօտ ներկայացաւ մի պատգամաւորութիւն, որ նրան մատուցանում էր հազարաւոր ստորագրութիւններով ծածկված մէկ ուղերձ: Աւղերձն արտայալտում էր փիշտ և յոյս, ուրովիչետև լիշեցնում էր, որ օգոստոսի 29-ին Ասպօմնութիւն տարեդարձն էր: Գարիբալդի ականջ դրեց անակնթարթ և յետոյ ասաց.

— Ընորհակալ եմ ձեզից ձեր սիրոյ համար: Այդ օրը ես մոռացել էի:

Պատասխանը վսեմ եղաւ, որ բարձրացնում է գարիբալդին աւելի վեր, Պլուտորի որ և է հեռոսին:

Ո՞ի տարի յետոյ, անցնելով Ալպեանները, ժամանում էր կապյտ Ամանի ափերը Խաղաղութեան առաջին կօնդուեսին նախագահելու համար: Ժընէվում, ազատ մտածման այդ համակելի քաղաքում, միատեղ էին հաւաքված եւրօպական ռամկավարական (democrate) ներկայացուցիչները, Կիոէ, Բիւխներ, Լումնիէ, Առագո, Բակունին և ուրիշ հազարաւոր գործունեայ մտածողներ: Շվեյցարական հանրապետութեան դրօշակի շուրջը ծածանվում էին բոլոր հայրենիքների դը-

բօշակները, խորհրդաւոր նշան ժողովրդների միութեան: Այն տատանվող դրօշները քաղաքի ամենահին փողոցներին խսկ տալիս էին ուրախ ու ծիծաղկոտ կերպարանք, այն փողոցներին, որոնք պահպանում են միջնադարեան խիստ ժընէվի բնաւորութիւնը, որ իրան համար պատրաստեց այժման ազատութիւնը, յաղթաշարելով Սավոյայի գուբանին, որ հռչակաւոր escalade թե-ի դաւաճանութեամբ փորձել էր վերահաստատել այնտեղ եղութիւններին: ¹⁾ Գարիբալդի ընդունվեցաւ ծաղիկների ամպի մէջ:

Ընտրական պալատը, որ իր ընդարձակութեամբ արժանի էր հանդիսանում ինքնավար մի ժողովրդի, պարունակում էր վեց հազար ամենազգի քաղաքացիներ: Երբ մտաւ գարիբալդի, որի կարմիր շապիկը կրում էր իր վրայ հարիւր պատերազմների մէջ տարած յաղթութիւնների դրօշը, և որ այժմս ներկայանում էր

¹⁾ Escalade -ի տօնը, որը ժընէվցիները ամեն տարի ամենամեծ համբարով ու ոգեւորութիւնը են կատարում, պատմական նշանակութիւն ունի: Այդ տօնն առ ժամանակ փոխազըրում է ժընէվցիներին կաթոլիկութեան ու բողոքականութեան տար կուի ժամանակները, երբ ժընէվը, լինելով նոր ծագած աղջնողի եւ ազատ մորի վարպատութեան կարենու վասարանից համար ամբողջ ուղղափառ կաթոլիկ աշխարհի համար աչքի փուլ էր զարձել: Հարկանոր ըստ կարձի բերել: Ծանոթ ժընէվնոր համաձայնութեամբ, Սավանիայի Փիլիպպոս թագավորի քեռարը, ժընէվին ոցացի Սավոյայի ուրու Շարլ Էմանուէլ, 1602 թ. կեկտներին 12-ին, առնենով իր օքքը, որ մէջ մասաւր բաղկացած էր քանատիկուս սպանիացիներից եւ նապուէտանցիներից, զնում է ժընէվի վրայ: Նա չուզենալով բաղար յանկարծակի բերել, զիշերով զաղոտաղող մօնենում է պարիսպներին եւ հրամայում է զօրքին լոկի մողիկ սպանութեանորով վեր բարձրանալ եւ բաղարը մոնեն: Սակայն պահապանների արթուրինն ի դերեւ է հանում փորձը. բաղարացիները համանալով բանի Հոլֆինը, ուրս են թափառում տներին քանաթաթախ եւ վերցնելով ամեն բան, ինչ որ ծերերն է ընկնում, մի լաւ ջարդ են տալիս առաջին համարձակներին, վայր են զարում բարձրացողներին, եւսացած չուր են ածում զրունակութիւնների ի խայտառակարար նուացում: Սրանից է մացած escalade անունը, որ սանդուխներով վեր բարձրանա է նշանակում:

արտասանելու խաղաղութեան խօսքը, դահլիճը թըն-
դաց կատաղի ծափահարութիւններից: Կա Մառսն էր,
որ բերում էր ձիթենիի ձիւղը: Ի՞նչ ասաց այն օրը
Գարիբալդի: Թարգման հանդիսացաւ մարդկութեան
խղճի: Ամփոփումն արաւ իր բոլոր այն քարոզների,
որոնք արտասանում էր նա ամեն-մի պատերազմից
առաջ, իր բոլոր այն գրութիւնների, որոնք ուղղում
էր Անդիացիներին Ասպումօնտէից յետոյ:

— Ի՞ոլոր ազգերը (այսպէս խօսեց նա) քոյր են.
պատերազմը, ուրեմն, նրանց մէջ անկարելի է. միմի-
այն ստրուկներն իրաւոնք ունեն պատերազմ բանա-
լու իրանց Ճնշողների դէմ: — Ամեն խնդիրներ, որոնք
կարող են ծագել ազգերի մէջ, պէտք է որ ենթարկ-
վեն մի կօնդուէսի իրաւախոչութեան:

”Պապութիւնը, իբրև ազանդների մէջ ամենավը-
տանդաւորը, ընկած է յայտարարվում մարդկային հաս-
տատութիւնների մէջ:

”Ներկայ կօնդուէսը կարապետն է Ազգերի մէծ
կօնդուէսի: Սա չէ տապալում միայն մէկ օրւայ մէջ
բռնակալութիւններն ու խաբերայութիւնները, բայց
այս օրւանից ծանուցանում է նրանց անկումը և նը-
րանց բեկարների վրայ արդարութեան կանգնումը:“

1867-ի սեպտեմբերի 8-ին Գարիբալդի ներկայա-
ցնում էր այն բանաձելը (firmule), որ այսօր դարձել
է բոլոր ազատականների բանաձել: Կա նախատեսնում
էր նրան, և Լըմօնիէի հետ ունեցած՝ խօսակցութեան
մէջ ասում էր վերջինիս.

— Անը ցանում ենք միաբանութեան (concorde)
սերմերը մարդկանց մէջ: Եւ մէկ ուրիշ բարեկամի.

— Երկու ճշմարտութեան աջակից ենք մէնք. պա-
պութեան անկումը և ստրուկների պատերազմը ճըն-
շվողների դէմ: Խօսքը պահպանելու համար պէտք է պա-

տերազմ տանք չուօմին: Աշխարհը չէ կարող խա-
ղողութիւն ունենալ, եթէ ազատ չէ յաւիտենական
քաղաքը:

Վազում գնում է խտալիա. ամեն տեղ, ուր ոտք
է գնում, հրահրում է կուկի լուսաւոր կայծը. ամեն
տեղ կրկնում է Ասպօմօնտէի հին աղղաղակը. կամ
չաօմ կամ մա՞չ:

Վախսարութեան գլուխն էր տակաւին Ռատտացցի:
Սա չէր հակառակում Գարիբալդիին բացէ ի բաց, սա-
կայն ուզում էր նրան համբերութեան բերել: Մինչ
այս, մինչ այն, կամաւորների խմբերը սկսում էին կազ-
մըմբել, Գարիբալդիի հետ յարաբերութիւն էին հաս-
տատում և խնդրում էին նրանից վերջ դնել ամեն
գանդաղկութեան: Հաստատվում էին գալտնի յա-
րաբերութիւններ հումարեցիների հետ. և մէկ օրից միւ-
սը սպասվում էր ապստամբութիւնը:

Գարիբալդի, որպէսզի պատրաստ լինի վազելու
հրաւերին (նա յոյս ունէր, որ կարող կը լինէր կըրկ-
նել չազարի փառաւոր ձեռնարկութիւնը), բաժանում
է կամաւորներին երեք խմբերի, մէկը յանձնում է Ա-
չէռբի-ին, որ պէտք է գրաւէր Վիտէռբօ-ն, մէկը՝ Նի-
կոտէրա-ին Վէլէտրի-ի համար, երրորդը Մէնօտտի-ին
Մօնտէրոտոնդօ-ի համար. ամենի էլ միացման կենտրօ-
նը չուօմը պէտք է լինէր:

Եեպտեմբերի 23-ին արշալոյսին կառաբէնիկոնե-
րը մտնում են այն սենեակը, ուր քնած էր Գարի-
բալդի, ներկայացնում են նրան ձերբակալութեան մի
հրաման, և յատուկ գնացքով տանում նրան Գիօ-
ռէնցա, այդտեղից Ալէքսանդրիայի բերդը: Գարի-
բալդի մոլեգնած էր:

— Ինձ դէմ բռնաբարվում է ամեն օրէնք, բա-
ցականչում էր: Երեսփոխան եմ և օրէնքը պէտք էր

որ աղատէր ինձ կամայականութիւնից. ընդհակառակը, ձերբակալված եմ որպէս չարագործների յետնագոյնը: Ոչ, չեմ կամենում այլ ևս լինել քաղաքացի մի երկրի, ուր այսպէս անամօթաբար ոտնակուս է լինում օրէնքը, ուր գոյութիւն չունի ոչ արդարութիւն և ոչ աղատութիւն:

“Ես յայտարարված էր Բուենոս-Այրէսի, Կիւ-Եօրշի և Լոնդոնի քաղաքացի, եւ առանց դանդաղելու, նամակներ գրեց այդ երեք երկիրների գեսպաններին կանչելով նրանց պաշտպանութիւնը և յայտարարելով, որ հրաժարվում էր լինել աղաքացի մի երկրի, ու ուր մինստրներն առաջին են լինում բռնաբարող օրէնքների:” Եւ աւաղ. այն երկրում մինիստրներն փոխվեցան, բայց ոչ սովորական չարիքը:

Խոտիխոյում յուզումը շատ մեծ էր. փորձանքներից և նոյս տալու համար, մինստրութիւնն աղատ արձակեց Գարիբալդիին, բայց այն պայմանով, որ սա վերադառնայ կապուէռա:

XXXV

ԿԱՊԻՒԵՌԱ-ԻՅ ՄՕՆՏԵՊՈՏՈՆԴՈ.

Իր կղզիում Գարիբալդի կալանառը էր:

Կառավարութիւնն իւր նաւերից բաղկացած մի տորմիդ ուղարկեց շրջապատելու համար կապուէռան, և իզօլա հրամանատարին հրամայված էր գործակի բռնել կասկածելի անձերին: Գարիբալդի փակված էր հօրդ շղթայի շրջանակում և ոչ մի նաւակ կարող չէր մատենալ կապուէռա-ին առանց մանրակրկիտ քննութեան ենթարկվելու. յետոյ մինչև իսկ արգելվեցաւ ամեն հաղորդական չցուցութիւն:

Վաէկ օր Տէրէզիտա դուրս եկաւ կղզիից, հօրը մի յանձնարարութիւնը կատարելու իր ամուսնու, կանցիօ-ի, մօտ. Պուինչիպէ Ու մը է ու տօ նաւից կրակ արին մակոյկի վրայ, որ տանում էր Գարիբալդիի աղջկան: Սա՝ վիրաւորված մատակ առիւծի քաջութեամբ՝ աղաղակեց նաւի հրամանատարին.

— Յօւերևս կամենում էր Լիսսա-ի կորած պատերազմի վրէմբ կանանցից առնել:

Վրակը գաղարեց և Տէրէզիտայի մակոյկը կարողացաւ անցնել առաջ:

Եւ սակայն, հակառակ այնքան հսկողութեան և այնքան զգուշութիւնների, մէկ օր լուր տարածվեց — Գարիբալդի փախած է կապուէռա-ից:

Մինիստրութիւնը հեռագրում է Իզօլա հրամանատարին, և սա պատասխանում է.

— Գարիբալդի կապուէռայումն է. Հէնց այս վայրկեանիս տեսայ նրան: Բայց քիչ յետոյ ստանում է այս միւս հեռագիրը.

“Գարիբալդի Ֆիուէնցայումն է և ճառեր է արտասանում ժողովրդի առաջ Սանտա Մարիա Կօվէլլա-ի հրապարակի վրայ:”

Հրամանատարը ցամաք է դուրս գալիս կապուէռա. վազում է զօրապետի սպիտակ տնակը և այնտեղ գրտնում է.... Գարիբալդիի մի բարեկամին, Ճարտարապետ Բառէւինի-ին, որ ամեն առաւօտ զօրապետի վերաբկուն ուսերն առած՝ զնում էր զբօննելու կղզիի ծայրը, որպէսզի նաւաստինները տեսնեն իրան. բայց ինչպէս էր փախել Գարիբալդի: Ի՞ սովորական հրաշքներից մէկի գործադրութեամբ:

“Ես ուներ փոքրիկ, թեթև և գիւրաբեկ մակոյկ, որ հազիւ կառող էր պարունակել մի մարդ ու մի թի, յար և նման չայն մակոյիներին, որոնք գործածում են

պիզագիները մօրերի վրայ կտցարներ որսալու համար։ Ռումի վրայ և ոչ իսկ կարելի է որոշել նրան, չփոթվում է աւելքների հետ, խառնվելով նրանց փրփուրների հետ։ մի սեղանից աւելի մեծ չէ։ Մառախլապատ մի գիշեր նստում է նրա մէջ և շարժելով թին, որ մի կարծ բահակի նմանութիւն ունէր և որ զարնվում էր ջրերին առանց ո և է աղմուկի, ձօճելով, երերալով ծովային անդունդների վրայ, հարիւր անդամ արհամարհելով իր վրայից անցնող և երբեմն երբեմն նրան աչքից անհետ անող ալիքների տակ ընդ միշտ թաղվելու վտանգը, — Գարիբալդի հասնում է Մադրալէնա կղզին։ Զինորսի կերպարանք մտած՝ փոխադրբել է տալիս իրան բուանդինի, Սառդինիա-ում, ուր նրան սպասում է իր փեսան, Ստեֆանօ Կանցիօ։ այս- տեղից Լիվոնի և ապա Գիօրէնցա, երբ գեռ ոչ ոք Նկատած չէր իր փախուստը։

Գիօրէնցայում խնդրում է մինիստրներին, որ օգ- նեն իրան Խտալիան ամբողջացնելու գործի մէջ, բայց նրան պատասխանում են։ „Քաղաքականութիւնը մեղ- արգելում է այդ։“

Քաղաքականութիւնը, ընդհանում է Գարիբալդին։ Ասացէք, աւելի շուտ գեկտեմբերի 2-ի մարդը, ¹⁾ նաև, որ պահպանում է Հռոմի գրաւումը և աւաղակու- թիւնը։

1) Գարիբալդի ակնարկած „Պետոնմբերի 2-ի մարդը“ Փը- րանսիայի կայսր Նապոլէն երրորդն է։ Այդպէս է անուանվում այն պատճառվ, որ աջողնորդ ընտրվել ֆրանսիաին չան- ուակնութեան նախագահ, 1852-ի դեկտեմբերի 2-ին պետական նարուածով դադարեցրեց նախապետութիւնը և իրան հոչակել տվեց կայսր Փրանսիայի։

Չը նայելով այն բանին, որ նապօլէն Գ. իտալական դա- տին կարենոր ծառայութիւն մատուցմաններից մինը եղած էր, վիկոր էմանուէլի հնու միացավ կուելով աւատրիացիների դէմ նի քանի փայտուն յաղթութիւններ տանելով, սակայն և այնպէս Գարիբալդի անմիններն չէր համակռում նրան,

Եւ բարկացած փախչում է գուրս։

Կամաւորները միայն նրան էին սպասում։ Դեռ հոկտեմբերի 4-ից Սաբինա-ի գարաւանդներից, ուր նստում էր զօջիօ Կատինօ անուն փոքրիկ երկիրը, իջ- նում էին հինգ երիտասարդներ և լուս ու մեծաքայլ ուղղվում ձիգ գէպի զօջիօ Միուտէտօ։ Ըստամ- բութեան կենտրօնական բանակի առաջին կորին էր այդ, որը Մէնօտտի-ի հրամանների առակ (այդ հինգի մէջն էր Մէնօտտի), նոյն իսկ Գարիբալդիի առաջ- նորդութեամբ, պէտք է կրէր Մէնտանա-ի գժբազդ ար- կածը։ Մութ էր գիշերն ու փաթորիկալից, իսկ ան- ձրւն էր հեղեղի նման։ Արշալոյսին, խումբը ստու- բանալով մինչև քսան, անցաւ սահմանը զնտէ դի Ռիէտի։

Լըրեկոյեան գէմ գուցէ մինչև 300 եղան Մօնտէ Պաջիուում։ 6-ի առաւոտեան ձանապարհ ընկան գէպի Կէուոլա։ Իրանց ձանապարհի վրայ եղող մի ծա- ռախիտ ձորում անակնկալ կերպով հանդիպեցան պա- պական ասպատակներին օտար կառապինիէռների ընկե- կան նիցցան։

Հետեւ, բացի նրանից, որ նապօլէն նրա համար մի քնա- պետ էր, որ ոտքի տակ էր առած իրան, Գարիբալդին, պաշ- տելի հանրապետական սկզբունքները, այլ եւ փոխարէն իջը- յանոն մարդկութեան մաստցած ծառայութիւններն, նվել ա- ռել էր իրավացի դիւտանագէտներից Սավոյան եւ իր սիրա- կան նիցցան։

Այս բոլորի վրայ եթէ աւելացնենք եւ այն, որ ինըն նա- պօլէն էր, որ այն ժամանակ, երբ բոլոր զարիբալդները ծգնում էին անյապահ չոսմը միացնել նոր ավատված եւ կազ- մված տէրութեան եւ հասպան վերջ զնել պապի աշխարհական իշխանութեան, — ամենամեծ արգելք էր հանդիսանում իրերի գրութեան փոփոխման եւ շարունակում էր հաստատ պահել Փը- րանսիական պահեստի բանակի ներկայութիւնը պապական նո- կրիներում՝ պապի պաշտպանութեան համար, բոլորին հա- կանալի կր մնի Գարիբալդիի գրաւումը դիւտանագէտ նախա- րարների գէմ, որոնք իրանց կողմից խոշնոր էին լինում Գա- րիբալդին զնալ եւ զէսիք գործութեամբ անել այն, ինչ կա- ռնել չէր մնում դիւտանագէտները լրացնեի։

Ժ. Թ.

րակցութեան հետ, և նրանց ի փախուստ դարձրին:
ոյժեր ևս իրանց հետ միացնելով, գրաւեցին
նէոյշան:

Գարիբալդիի անունով ժողովված կամաւորներն
ամենքն էլ հաստատուն առաջադրութեամբ ուխտել
էին մեռնել, եթէ յաղթութիւնը չը ժպտար իրանց:
Սրանով են բացատրվում, առանց թերթերի թմբկա-
հարութեան պէտք լինելու, մի քանի հերոսական ի-
րողութիւններ, որովհետև նրանք կատարվեցան պար-
տականութեան կրօնով: Այսպէս, հոկտեմբեր 20-ին
Վալէնտինի կազինօյում, Մօնտօ Սան Ֆիօվաննի-ի մօտ,
կամաւորների մի խումբ ընդդիմադրեց պապականներին,
որոնք այլ ևս յուսահատվելով, որ նրանց չեն յաղթիլ
կրակ տվին տունը, ուր գտնվում էին նրանք, իսկ յան-
դուգն կտրիձները պապականներից դուրս ցատկելով ճա-
նապարհ բացին թշնամիների շարքում, դիակներ սըփ-
ուելով իրանց ընթացքի առջև:

Ենոհիկօ ֆիօվաննի կախովի եղբայրները Հոօմի քա-
ղաքացիների հետ յարաբերութիւն էին հաստատել, ո-
րոնք պէտք է ապստամբէին իրանց խումբը մօտենալուն
պէս: Սակայն տածած յոյսերը ի գերեւ ելան, և մեծ-
անձն երիտասարդները (մեծ մասամբ պավիտրացիներ):
Մօնտէ Պատիօլի-ի մօտ յարձակում կրելով, հօմերա-
կան հերոսութեամբ պատերազմելուց յետոյ փախցրին
պապականներին: Ընկան Մօռուցի, կաստայնինի, երկու
կախովիները և ուրիշ քաջեր: Ենոհիկօ կախովի,
մահացու կերպով վիրաւորված գլխից, փախչող թշ-
նամիների ետևեց արձակեց քէռուռչչօ-ի խօսքը — ովա-
տեր, յետոյ գառնալով եղբօրը, որ նոյնպէս վե-
րաւորված էր, մրմիջեց. „մաս բարով. բարեիր մայ-
րիկներ և բարեկամներին: Ես մեռնում եմ. խնդի-
րը լուծված է:“

Գարիբալդիի հոկտեմբեր 22-ին անցել էր սահմա-
նը. լսում է Մօնտի Պուփոլիտի սպանութիւնը:
— Երանց վրէժը պէտք է լուծենիք, բացականչեց,
և շուտոնի:

Օօրքերի հանդէս է կատարում, իր յարձակման
յատակագիծն է կազմում և իրայիններին Մօնտէ-
ուոտոնդօ առաջնորդում: Սա մի պարսպապատ քաղաք
է. կամաւորների բոլոր ունեցածները միմիայն սակաւ
և հին զէյքեր էին. սուբինի կոթեր “ ասում էր մէկը նը-
րանցից . պէտք էր քաղաքը յանդգնութեամբ առնել:
Գարիբալդի գտնվում էր առաջին շարքում. նրա շուրջն
ընկնում էին խիտ խիտ գնդակները. դէմքի վրայ ու-
նէր մի հանդիսաւոր տիպութիւն:

— Օօրապետ, յետ քաշվեցէք, աղաղակում են նը-
րան իր հաւատարիմները: Չափազանց վտանգում էք
ձեզ:

Եւ մէկ ուրիշն աւելցնում էր. ոդուք սպասե-
ցէք Հոօմի մէջ մեռնելու:“

Եւ այլ լսում նրանց: Սակայն երբ տեսաւ, որ 13
ժամ կուելուց յետոյ Ս. Ռոկիկօ գուռը գեռ ևս գի-
մադրում էր,

— Օ՛հ, վերջապէս, պէտք է յաղթել, բաց-
կանցեց:

Պատարկ տակառների տախտակներից և ծծում-
բից մի քանի շարժական պատնէներ պատրաստել տը-
վեց և կրակ տալով, հրել տվեց նրանց միուշե գրան
տակ: Միկանոյն ժամանակ որ սա այրվում էր, հրա-
ման արձակեց փորձելու պարիսպը վեր ելնել: Գիշերը
հասել էր արդէն. մի քանի ժամից ի վեր տեսարանն
ահարկու էր: Գուռը վայր էր ընկնում կտոր-կտոր,
և այրվող պատնէների վրայ գարիբալդի-ի առաջնոր-
դութեամբ անցնում էին կամաւորները որպէս սալա-

մանդիներ կրակի մէջ սողալով։ Փողոցներում շարունակվում էր կատաղի կրիւր. սակայն մերոնք տարին յաղթութիւնը։ Մեծ կտուրի վրայից արձակում էին մահացու կշռված գնդակներ. գարիբալդեանները նեղվում են սաստիկ։ Բարձրանալով տանիքի վրայ, գտնում են մի ծեր քահանայ, որ իր հրացանով նշան էր բըռնում նրանց։

— Ապանեցէք դրան, աղաղակում են մի քանիսները. վար գլորէցէք փողոցը. վուժինդիր լինենք մեր եղայլների համար։

Քահանան պաղատագին աղերսում էր, ոչ նրա համար, որ ազատեն իր կեանքը, այլ որպէս զի կարող լինէր գոնէ մի վայրկեան տեսնել իր մեծ թշնամուն, գարիբալդիին։ Նրան բաւականութիւն տրվեցաւ։ Լուիջի կապօռալի դի ֆոռլի և մի քանի ուրիշ գարիբալդեաններ առաջնորդեցին նրան այն տունը, ուր մըտել էր գարիբալդի։ Արշալյու ծագելու վրայ էր և հրացանաձգութիւնն այլ ևս ոչ այնքան յաձախ։ Յայտնեցին այդ գէպքի մասին գարիբալդիին և նա պատուհանին մօտենալով, աղաղակեց։

— Դուք, ով բարեկամներ, որ այս գիշեր կը տրիմների պէս վարվեցաք, կը կամենայիք արդեք ապականել ձեր ձեռքերը դրա արեան մէջ . . . թողէք դրան իր խղճի խայմին։

— Աեցցէ գարիբալդի, որոտացին կամաւորները։

Քահանան ծունկի ընկաւ լալագին։ Գուցէ գարիբալդի-ի գուշակած խղճի խայմը սկսում էր։ Մերոնք նրան մտցրին մի փոքրիկ խանութիւն մէջ և պահպանութիւն նշանակեցին այնտեղ որ և է վտանգից զերծ պահելու համար։

Այն ժամանակ գարիբալդի ձի հեծնելով, անցնում է քաղաքի միջով. գուանդէ փողոցի վրայ ցրված

պապականների մի խմբակ էր երեսում. մերոնք ուղղում էին յարձակում գործել նրանց վրայ. նա աղատում է նրանց կեանքը և կալանաւորում նրանց։ Մի ժամ յետոյ պապական պահպան զօրքը, 500 մարդերից բաղկացած, զինաթափ եղաւ, իսկ մերոնք գրաւեցին նրանց զէնքերը։

XXXVI

ՄԷՆՏԱՆԱ.

Մէնտանան փոքրիկ մի աւան է խոշոր տներով, որոնցից մի քանիսը երկյարկ կամ եռայարկ։ Նրա միջով անցնում է միայն մի փողոց։ Սկսում է մի եկեղեցիով և վերջանում մի քանդված բերդով։ Գիրքը նման է մի կոնքի, որի մէջ նստած է աւանը, իսկ ետևի կողմից բարձրանում է մի փոքրիկ բլուր։

Այստեղ միեւնաց բաղկացեցան, ծայրագոյն ճիգեր սպասելով, ազատութեան և բռնապետութեան զինւորները։ Գարիբալդեան բանակի թիւը հասնում էր 6,429-ի. ըստամենը 26 գունդ։ Վեց հազար ֆըրանսացիներ և հինգ հազար քահանայապետականներ շարժվեցան նրանց գէմ Մօնտէուսոնդօ-ից։

Կոյեմբերի Յ-ի առաւտեան սկսաւ պատերազմը։

Գարիբալդի, հէնց առաջին հարսւածները փոխանակվելուն՝ ձիարձակ առաջ վազեց իր սպայակոյտի հետ և շրջակայ բլուրները գրաւել տալուց և անմիջական պարագային պահանջած ու իր բազմամեայ եփված փորձառութեան թելադրած կարգադրութիւններն անելուց յետոյ մի քանի ժամեայ մէջ կենտրօնի բոլոր գնդերին պատերազմական գործունէութեան մէջ դըրեց։ Թէւ մերոնք, երբ հետզետէ բազմութիւնը

ստուարացաւ մինչև երկու անգամից աւելի, ստիպվեցան քաշվել Մէնտանայի ետևի կողմը, սակայն իրանց ձեռքը գտնված երկու միակ թնդանօթները (Մօնտէռոտնդօյի յաղթանակի արդիւնքը) զետեղված այն բարձրութեան վրայ, որի ներեւն էր Մէնտանան, և արիւնահեղ կոխուը, ուղղված նոյն իսկ Գարիբալդիի ձեռքով հրաշալի ճշգութեամբ, շանթահար և սարսափահար արին մանաւանդ պապականներին, որոնք ըստիպվեցան գագարեցնել իրանց առաջիսաղութիւնը: Ահա այն ժամանակ Գարիբալդի հրամայեց. „Սուհններն լ:

Այդ հրամանը ելեկտրական մի կայծ էր, որ վառեց ամենքին, և ոչ մի ժամանակ բազմավաստակ զինորները ցոյց չը տվին այնքան ոյժ ու արիութեն, որքան այդ միջոցին մեր երիտասարդ կամաւորներն աշաբէկ թշնամութեան հանդէպ:

Ո՞ի քանի վայրկեան բաւական եղաւ, որպէս զի որոշէր պատերազմի կերպարանքը. պապականները կործանված, շարքերը քակված, ցիրուցան ի փախուստ գարձան. մերոնք վերստին գրաւելով Մէնտանան, տէր եղան կռւի գաշտին: Ամեն կրծից դուրս էր պըրծնում այս խօսքը. „Կէցցէ Գարիբալդի!“ իսկ Գարիբալդի պատասխանում էր.

— Կէցցէք դուք, տղերք, դուք, որ յաղթողներն էք: Միշտ առաջ:

— Այս երեկոյ չո՞մ, կրկնում էին մերոնք: Բայց ահա յանկարծ եքեռում են երկու գծեր, սկսել, խիտ-խիտ, որոնք արագաբար առաջանում են, յանկարծ կանգ են առնում մեր հրացաների արձակման սահմանից դուրս և սկսում են մէկ այնպիսի յաճախ ու առատ կրակ, որ կարծես հարիւր հաղար լինէին արձակողները, և մահ են սփռում, մեր շարքերում: Դրանք, ինչպէս յետոյ իմացվեց

chassepot ներն էին, որոնք սկսում էին կատարել իրանց հրաշալիքները... Կամաւորները դողդողում էին իրանց զէնքերի անբաւականութիւնից, անկարելի անեւապէ պատասխաննել թշնամուն:

Շառուիլին նկարագրում է Գարիբալդիին սոյն կերպով:

„... Դեռ ևս տեսնում եմ նրան, բոցավառ մի շեճեալ, վերջալոյսի արիւնաթոյր լոյսում: Թումբի վըրայ ուղղորդ կանգնած, արագ արագ մտրակի հարուածներ տեղալով ձիու գաւակին, դէպի յարձակումն էր առաջնորդում այն բանակի մնացորդին: Նա չէր տեսնում երկիւղի տագնապը. պատերազմ էր կամենում. բազդի շնորհով յանդանացած մի թշնամու որ և է գնով խափանումն էր կամենում: Ծակոտում էր երկիւղի կողերը և աղաղակում էր երերուն ձայնով, որի հաջիւնը մինչև այժմ էլ դու է պատճառում ինձ.

— Եկէք ինձ հետ մեռնելու. եկէք ինձ հետ մեռնելու: Վախենում էք գալ ինձ հետ մեռնելու:

„ Տեսնել Գարիբալդիին դէպի մահ գնալին: Տեսնել չուօմը կորացած, կորացած նաև ինքը թշնամու շարքերում: Այլ ևս կեանք չը կար ինձ համար. այն պատերազմի մէջ գաշոյնն էր իմ հաւատարիմ ընկերը: Այդ գիտէնք ամենքս էլ:

— Ջը լինել գերի վարձկաններին (առած էր) կամ մի գնդակ ձակատի մէջ աեղ, կամ մի դաշոյն սրտի մէջ:

„ Ոչչ մնացածները սպառած, ընկածները հանդիսատես այն հանդիսաւոր տեսարանին, ամենքն էլ ոյժերը հաւաքում են և ամենքն էլ յուսահատ աղաղակով. — Չեղ հետ, ջօրապետ, ձեղ հետ. կէցցէ իտալիա... “

Եւ կրկնեցին փորձը: Ասկայն այն օրն արդարութիւնն ու քաջութիւնը գտառապարտված էին: Առաւտեան տեղի ունեցաւ անձնատուր լինելու դաշնքն այն պայմանով, որ գարիբաղդեանները պապի կալանաւորները չը պիտի լինեին, և էլ պէտք է տարվէին չոօմ, այլ պէտք է առաջնորդվէին մինչև սահմանադրուխը. իսկ զէնքերը վերստին պէտք է յետ արրվէին սպաներին:

Գարիբաղդին զօռով հեռացրին աղետալի պատերազմից: Կահանջութից յետոյ իրայինների թափօրի գլուխն անցած՝ ձիավարում էր լոիկ ու մենակ: Ու ոք չէր ընդհատում իր այդ լուռթիւնը: Բացի դանդաղ քայլերի գաշնառութիւնից ուրիշ ոչինչ չէր լսվում, իսկ կապարագոյն երկինքը լրացնում էր այդ տիսուր պատկերը:

Մի տեղ միայն դառնալով դէպի նա, որն ամենից աւելի մօտիկ էր ձիավարում, իր գլխարկը քաշեց ձակատի վրայ և բացակաչեց.

— Առաջին անգամն է, որ ինձ յետ են դարձը նում այսպէս, և աւելի լւեղած կը լիրէր...

Հառաջեց ու լոեց: Պասսօ կոռէզէ-ում ցրվեց իր կամաւորներին:

XXXVII

ՎԵՐԱԴԱՐՁ ԿԱՊՈՒԷՌԱ.

— Օքրապետ, ցաւալի մի պարտք ունեմ կատարելու: Ինձ հրամայված է ձերբակալել նրան (ձեզ):

Այս եղաւ ողջոնը, որով ընդունվեց գարիբաղդի ֆիլինէ-ում, իտալիայի թագաւորութեան հողի վըրայ: Գիմում էր նրան այդ խօսքերով Կամօսօ գըն-

գապետը յարդանքով ու վշտակիր դէմքով:

— Ես մերժում եմ, պատասխանեց գարիբալդի, անձնատուր լինել հէնց այդ հրամանին: Ես չը գործածեցի զէնքը թագաւորութեան մէջ, այլ չոօմեական Տէրութեան մէջ, և ես այդ բան անելու իւրաւունք ունեի, լինելով Հանրապետութեան զօրապետ և սահմանադիր ժողովում երեսիուսան: Անարդարութեան անձնատուր չեմ լինել:

Գարիբաղդի զաւակները, Կանցիօ, Մառիօ և ուրիշներ ու կոլվէրներն իրանց ձեռքին՝ զօջանակ կազմեցին պետի շուրջը:

Հեռագիր է ուղարկվում գուալտիէոս մինիստրին և սա պատասխանում է. „ Ձերբակալեցէք նըրան ինչ կերպով էլ որ լինի “: Գարիբաղդի հաւատարիմները կամենում էին ոյժով դիմադրել. բայց նու պատասխանեց.

— Չեմ ուզում, որ ինձ համար թափվէ հտալական արեան մի կաթիլը: Յետոյ գառնալով Կամօսօ-ին, ասաց նրան՝ բանի ձերբակալեն իրան, որովհետեւ ինքը ոչէր կամենում գործակից լինել մէկ ապօրինութեան “: Որոս կառաբինէոներ վերցնելով նրան որպէս մեռած մարմին, տարին դրին մի կառքի մէջ. այնտեղից վեր ստին վառինեանո:

Կամենում էին նրան գատաստանի ենթարկել: Մի գատաւոր մօտեցաւ գարիբաղդին հարցնելու համար, որպէս օրինական կանոն, անոնը, ազգանունը, հայրենիքը ...

— Պահանջեք Նիցցա, պատասխանեց հերոսը: Այն քաղաքում, որը Բօնապատիին ծախեցիք, այնտեղ գաղաքում էք այն բոլոր վկայաթղթերը, որ հարցընում էք ինձնից:

Բնականաբար, աւելի առաջ չը գնացին: Նրան

առաջարկվեց մի ճանապարհորդութիւն անել գէպի բուրգերը (Պիրամիդները), և կամ Տէրութեան պատկանող մի նաւի վրայ շրջադարձիւն անել մի տարի...

—Ուզում եմ կապուաս գնալ, պատասխանեց Գարիբալդի, ազատ ըստ իմ իրաւունքի:

Ա երջապէս նոյեմբեր 27-ին ազատ Հրատարակվեաւ, և առանց մէկ օր իսկ սպասելու, Գարիբալդի շարժվեց գէպի իր սիրած կղզին: Այնտեղ պատրաստում էր Մէնտանա-ի վրէժիսնդրութիւնը: Բայց թէ ինչպէս վրէժիսնդիր եղաւ Գարիբալդի, այդ կը տեսնելք յետոյ:

XXXVIII

ԳՐԱՆՍԻԾՅՈՒՄ.

—Եմ երկիրը և քո երկիրը, գրում էր Գարիբալդի Վիկտօր Ճիւգօ-ին գեռ 1867-ի գեկտեմբերից, ստոր ծառայականութեամբ կորացած են կայսերականութեան տակ: Մենք գիտենք որոշել ստրկին բռնաւորից, թշուառացած ժողովուրդին արիւնով արբեցած ապիրատ „պատրօնից“ (տէրից)...

Եւ վշտի ժամին, երբ պատրօնը կործանվեց Սէդանում, Գարիբալդի վաղեց Գրանսիա, կանչելով իտալուն երիտասարդութեանը կնքելու Բուգօնեա-ի գաշտերի վրայ երկու հանրապետական ժողովրդների եղբայրութիւնը: Իտալական թագավորութեան ոստիկանութեան ամեն տեսակ միջներուն նախարարին, սորոնք ցանկանում էին անցնել Ալպեանները և միանալ միմեանց հետ Գարիբալդիի դրօշակի տակ. բայց և այնպէս ազա-

տութեան կտրիճների խումբը կազմվում է իրանց վաղեմի պետի շուրջը:

Պարիելդիի հին երազն էր այդ: Մի ժամանակ նա երեակայում էր մինչև իսկ մի շրջուն բանակի մասին, որ բաղկացած լինէր բոլոր ստրուկ հայրենիքների տարրագիրները և որ գնար այնտեղ, ուր գընդում են ազատելու ճնշվածները: Կայսրութիւնը տապալված էր իր յանցանկների և իր սխալների ծանրութեան տակ, և Գարիբալդի ընթանում էր օգնութեան համնելու այն ժողովրդին, որ ամենքից լքված էր:

(Օրինականները (légitimistes), կայսերականները, կղերականները, բոլոր իր հին թշնամինները նրա գէմ ստեղծեցին ամեն տեսակ գժուարութիւններ. բայց նա բոլորին յաղթեց:

Առէմիե՞՝ հերոսի որոշումն իմացաւ թէ չէ, հեռագրեց Տուռ-լից (Tours) Մարսէլ, հոկտեմբեր 2-ին:

—Յայտնեցէք նրան մեր խորին շնորհակալութիւնը յանուն Գրանսիայի՝ այն վեհանձն օգնութեան համար, որ նա մեզ բերում է: Սպասում ենք նրան գրկարաց Տուռուում:

Հրամանատար նշանակվեց ֆրանսական բանակներին Վօժերում (Vosges) և շարժական բանակների մի բոփագէ (մօտաւորապէս 5000-մարդ է պարունակում մի բոփագը): Բայց Գարիբալդի պատիւչէր որոնում: Ով որ նրան հարցնում էր, թէ ինչ աստիճան ունէր, պատասխանում էր.

—Հանրապետութեան զինւոր եմ և այդ բաւական է:

Այնու այս, մինչ այն, կազմակերպում է ֆրանսիական գնդերին, խրախուսում է վհատված բնակիչներին, պատրաստվում է կռւի:

Օօրապետին բամբասողները նրան նկարագրեցին

տկար, հասած այն աստիճանի, որ նա թոյլ էր տաւլիս կռւի ղեկավարութիւնն ուրիշներին. ընդհակառակը, այն ամենքը, որոնք դիմում-ում պատերազմեցին, գիտեն որ գարիբալդի կռւի մէջ եղաւ և անձամբ վարեց իր զօրբերը, յաղթութեան մի նշոյլ ցոլացնելով նաև յրան սիրական գրօշակի վրայ, որից նախյս էր տվել: Այսպէս, երբ մօտեցան դիմունին, ասաց իր սովորական շեշտով

— Դէ, զաւակներս, գնացէք, գրաւեցէք ինձ համար զասկը:

Այն ժամանակ պրուսակացիները մտել էին զասկ: Մերոնք առաջեն սլանում և սուխն ձեռքին մի յարձակում տալով, այնտեղից դուրս քշում թշնամիներին: Այսպէս նաև սուխնի յարձակումով առնվեցան համարձակութեամբ մի քանի բարձրութիւնսեր Պասկ-ի և Պոլնուա-ի մէջտեղ, և երբ հասան այս վերջին գիւղաքաղաքին, պրուսակացիները տեսնելով, որ չը պիտի կարողանան գիմադրել այն մարմին առած սատանաներին, դուրս եկան այնտեղից: Կանցիօն վազում է կարելու նրանց նահանջման ճանապարհը. տեղի է ունենում շփոթութիւն: Դէլ! Խօլա-ի ազգը ջարդվեց ուռեմբից, իսկ բիկի տեղակալի մի բազուկը: Մերոնք առաջանում էին յաղթական:

Հետեւեալ օրը պատերազմը վերստին սկսվեց, և գարիբալդի գրաւեց կօմմառէն-ը: Սակայն ֆրանսիական զօրապետներից հարկ եղած նեցուկը չը ստանալով, ստիպվեց քաշվել Օտեօն-ի (Autun) վրայ:

— Այստեղ, ասաց, կամ պէտք է յետ մղենք պրուսակացիներին, կամ մեռնենք: Եթոյ, գեկտեմբեր 1-ին, հաւատարիմ իր հին առածին, թէ „ով կամենում է անել, թող գնայ“, գնաց աչքի անցնելու պաշտպանութեան վայրերը: Հենց այդ միջոցին տեսնում է մի պը-

րուսսիական գունդ, որ առաջանում է Սէն-Մառտին-ի վրայ և զետեղում է մի թնդանօթ այնտեղ, ուր նա դրել էր Շընէ գնդապետին ֆրանսիացի պատերազմիկ-ների հետ միասին: Ուր էր գնացել այդ Շընէն. վախից բռնված կուեօզ-ի մօտ էր ապաւէն վնտուել: Գարիբալդի իսկոյն սկսաւ գարմանել այդ ծանր պարագան. անմիջապէս սկսաւ կրակը, իր ամենայանդուգըն խմբերին առաջ ուղարկեց. և գիշերը վրայ հասնելուն պրուսիացիները թողին իրանց գիրբերը, որոնք և գրաւվեցան մերոնցից: Օտեօն-ը վտանգից զերծ էր այլ ևս:

XXXIX

ԴԻՖՈՆ.

Պատերազմի հոտ էր առնվում: Բօոգօնիա-ի ձիւնապատ դաշտերի վրայ ամեն կողմերից երամ-երամ համախմբվում էին ակռաւները, որոնք, կարծես, նախագուշակում էին իրանց համար պատրաստվող որսը: Եւ ինչպիսի որս կարիքերի:

Լրեք օր պատերազմ — 21, 22, 23 յունիս 1871 — իտալական արիութեան յիշատակելի թըւականներ:

Առաջին օրը յայտնի եղաւ նոյն իսկ Տալանտի անունով. մի գիւղաքաղաք է այդ, որ գտնվում է Դիմոնի հիւսիսային արևմտեան կողմը. հաստատված է մի լեռան վրայ ձուաձև (Էլիպտիկ), գրեթէ մի կիլոմետր երկարութեամբ, որ և նմանում է մէկ ահագին նաւի: Կարծես դա Դիմոնի ակրօպօլիսը լինէր, և պըրուսսիացիներն ուղում էին ձեռք բերել այն, որպէսզի կարողանային տիրապետել և այն քաղաքին:

21-ի առաւտօտեան 8-ին, Ավելյոն-ի շարժում զօրքերը ստիպվեցան յետ քաշվել. այն ժամանակ առաջ ընթացան Գարիբալդիի զօրքերը: Տալանտ-ի բլրակի ստորոտում տեղի ունեցաւ սաստիկ կոխւ: Այնտեղ էին քաջ Նշանաձիգները (Franchi Tiratori) միացած Lhoste գնտապետի և Բագինի հարիւրապետի հետ. Նրանց աջակողմն էր Տալառատ-ի լէգէոնը Մէնօտի-ի հետ: Գարիբալդի, սառն ու անողոք, ներկայ էր Տալանտ-ի մարտիոցի առաջ, հեծած ձիու վրայ, որտեղից իր արծուի աչքերով դիտում էր ամբողջ պատերազմը: Պըրուսիացիները յետ մղվեցան. սակայն քանի քանիներ կորան մեր կողմից, այն էլ որքան ցաւալի կորուստներ: Այդ գիտեն Վօժերի զինակիցները. այդ նկարագրեց տիկին White Mario, որ աներկիւղ, գընդակների տեղատարափի տակ գուրս էր քարշում ընկածներին: Հենց այդտեղ ընկան ջիօռջիօ Դմբուհանի, մի նախահորդ սօցիալիստ. Զիոնզէպպէ Կավալլոտտի, Ֆէլիչե-ի եղեայրը, մի վոեմ հանրապետական ոդի. Հերոս հազարապետ Պէռլա, Ռոսաի, Չէռբինի, Սալօմոնէ, Աջիէռ, Լէօնադի... Այս վերջնը, իր յետին վայրկեաններում գժալիր հիւանդապահ կնոջ հետ երկար խօսում էր իր մօր մասին, որին այլ ևս չըպիտի տեսնէր, և հանրապետութեան մասին, որ ի վուր յուսացել էր տեսնել:

— Վեռնում եմ գեռ այնքան երիտասարդ: Բայց ուրիշները, թէւ ինձնից աւելի ծեր, պիտի տեսնեն նրան (հանրապետութիւնը) նաև մեր տան մէջ...

22-ի առաւտը բացվեց թանձախիտ մարախուղի մէջ: Պրուսիացիները յարձակողական դիրք առին, մերոնք ո՛չ միայն յետ մղեցին նրանց, այլ և հարկադրեցին շատ դիրքեր ազատ թողնելու:

— Աղն աւելի զօրացած պէտք է վերադառնան,

ասում էր Գարիբալդի երեկոյին. Բայց այս անգամ գաշտի կողմից պէտք է գան, երեւի յոգնած լինելու են, իրանց քիթերը խորտակելով Տալանտ-ի դէմ:

Եւ այնպէս էլ եղաւ: 23-ին, ժայը 11-ի մօտերը բարձրացաւ սառն բուռն հիւսիսային քամին (bise), որ ցրեց տարաւ մարախուղը, երկան հանելով թշնամուն:

Լանգր-ի (Langres) ճանապարհի վրայ, իբրև առաջապահ շարժուն, ֆրանսիացիների մի գունդը սկսաւ փախչել: Պրուսիացիներն առաջանում էին յաղթական դրօշակը պարզած, իրանց առաջ ունենալով հետևակալը 61-րդ վաշտը: Սակայն իրանց գնացքի միջոցին հանդիպում են մէկ արդելքի. դա գիւղական մի խումբ տուներ էին, որոնք ՈՒչչիօտի-ի պաշտպանութեամբ կրակ ու գնդակ են ժայթքում ամեն-մի պատուհանից, ամեն-մի ծակ ու ծուկից և մինչև իսկ կրտուրներից: Պրուսիական արծուէզլուց դրօշակակրի հետ միասին ընկնում է հարուածված ճիշդ կուրծքի մէջ-աեղից: Մէկ ուրիշը կրկին բարձրացնում է դրօշակը, կրկին շանթահաւը է լինում: Այնտեղ, շուրջը, ձևանում է մեռածների և հոգեւաշների մէկ արիւնալի շեղջակոյտ: Սակայն պրուսիացիներն ուզում են ըրջապահել ՈՒչչիօտի-ին. Կանցիօն, որ այդտեղից մի քանի հարիւր մէտր հեռու էր գտնվում, վազում է իր յատուկ սաստկութեամբը, որին ո՛չ մի բան չէ դիմանում:

— Յարձակվեցէք սուրին ի ձեռին, աղաղակում է:

Եւ իր ետեկից ունենալով իրաններին և Պէուլա-ի գունդը, նետվում է դէպի առաջ, վազ և վազ, գընդակի կարկուտի տակ:

— Վեցցէ հանրապետութիւնը, աղաղակում են մերոնք:

Պրուսիացիներն ընկնում են սուբնների բաղաման տակ: Այդ վայրկեանին յաղթութիւնը յայտարարվեց

Գարիբալդիի կողմը: Բոլոր գծերի վրայ թշնամիները փախչում էին և մեռածների ու վերաւորեալների մէջ տեղով անցնում էր Գարիբալդի՝ նստած իր կառքում: Զօհերի այն շեղակոյտի տակ, սրա ամենաբարձր կէտում, ընկած էր պրուսիացիների 61-րդ դրօշակը. իր պաշտպաններն ամենքն էլ շիցած էին. և նրանք, որոնք յետոյ վրայ հասան, չէին կարողանում որոշել նրա գոյներն՝ արեան և մեռածների մէջ: Որիչչիոտտիի քաջ Նշանաձիգներից մէկը, որ ամենեին աշքից չէր հեռացրած նրան, դիակների լեռան տակից քրքրեց հանեց նրան և յանձնեց իր գլխաւորին: Խոկ որդին, հպարտ այդ արժանաւորապէս ձեռք բերված յաղթանակով, ներկայացրեց նրան Գարիբալդիին:

Երեք օր պատերազմ, երեք օր յաղթութիւն:

Քիչ օրից յետոյ մի լուր հասաւ, որ տիրութեամբ համակեց Դիմօնի դավիներներին. Գավռ կընքել էր Պրուսիայի հետ զինադադարը, խաղաղութեան նախաշաւիդ գուշակը: Միենոյն ժամանակ, կղերականներն ու միապետականները, աւելի ևս գրգռված Գարիբալդիի տարած յաղթութիւններից — միակը Գրանսիայի զօրապետներից, որ յաղթահարված չէր, — կըրկնապատկում էին թշնամանքներ ու զօրպարտութիւններ նրա դէմ. սակայն ժողովուրդը, որ ճշգրիտ գնահատողն էր հանդիսանում նրա մեծութեան, ոգեսորութեամբ էր ընդունում նրան ամեն տեղ: Հասան ընդհանուր ընտրութիւնները և Գարիբալդիի անուան վրայ կուտակվեցան երկու միջին քուէ, քուէարկողների թիւը Գրանսիայում լինելով եօմ միլիօն: Կա աջողեց ընտրվել Պարիզում, Նիցցայում, Սավոյայում, ստորին Ռէնյում, Գիմօնում, Ալլէրիայում:

Մի՞ անդամ ևս նա մտաւ ժողովը. դա այն օրն էր, երբ խօսվեց խաղաղութեան մասին: Կա մտաւ այն-

տեղ Վիկտօր Հիւգօ-ի և Ալֆօնս Էսկուխոս-ի ընկերակցութեամբ, ընդհանուր ուշադրութեան մէջտեղ, և ուղիղ գնաց Զալսակողմի նստարանները: Կրեւելուն՝ վերնայարկի հասարակութիւնը բարձրաձայն „Կեցցէ“ աղաղակեց. Աջակողմեան երեսփոխանները չը հանդուրժելով, աղաղակեցին հակառակ հերոսին ու յաղթականին: Այս ներկայացրեց իր հրաժարականը երեսփոխանութիւնից և նստի վերջը խօսք խնդրեց. միապետականներն ուղեցին արգելել նրան խօսելու. հանրապետականները բողոքում էին Աջակողմի դէմ. ուրիշներն աղաղակում էին.

— Ա ատասիրտներ, թողէք խօսէ Գարիբալդի. վախենում էք լսելու ճշմարտութիւնը:

Առեմիէօ արձակեց իր հոչակառ աղաղակը.

— Կեղծկական մեծամասնութիւն, թոյլ տուր, որ խօսէ Գարիբալդի:

Օօրապետը ըսովեց այլ ևս ոչ մի բառ արտասանել. գուրս եկաւ և կառք նստեց: Ժողովսուրդը կամենում էր քակել ձիերը. նա վճռական կերպով արգելեց այդ: Կրա շուրջն աղաղակում էին իրան.

— Երեղ մի լքանիր, մեղ հետ մնացիր, ով Գարիբալդի:

“Կա, ընդհակառակն, բարձրացաւ երկաթուղային գնացքի վրայ ուղիղ դէպի Մարսէյլ: Մեկնելիս՝ այս մնաք բարով “-ը թողեց խտալացի և Փրանսիացի զօրքերին.

“ Երբ վերագառնաք ձեր տան յարկի տակ, պատմեցէք ձեր ընտանիքներին այն յոդնութիւնները, այն կոփաները, որ մենք միասին կրեցինք հանրապետութեան սուրբ դատի համար: ”

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ.

Վի սիրալիք ընտանիք սպասում էր Դիմոնի յաղթողին ամայի Կապուէռայում: Գարիբալդի գտել էր աղքատիկ, բայց սրտի տէր մի կին, ֆրանչէսկա Առմօզինօ, Սան Դամիանօ դ'Աստի-ից:

Ամեն հերոսների նման՝ նա էլ ունէր սրտի անկեղծութիւն: Կինելով առանձնացած Կապուէռայում, քիչ անգամ բարեկամների շրջանի մէջ, յուղվեց այն խաղաղատալիք խնամքներից, որ նրան տալիս էր ֆուանչէսկա Առմօզինօն, խնամքներ, որոնք մէկ անհըրաժեշտութիւն էին գարձել նրա համար, երբ առտոնիտը (artrite, յօդացաւ) արգելում էր նրան կատարել որ և է շարժում. և այդ խնամքները նա վարձատրեց բարձրագոյն մրցանակով, իր սիրով: Այսպէս, ծերունու վերջին տարիներն ուրախութիւն ստացան երեխաների զուարթ ծիծաղներից, որոնք կայտըռում էին նրա շուրջը, կանչելով նրան հայր: Սակայն վշտերից զուրկ չեղաւ այդ ուրախութիւնը: Երկու աղջիկները, պատուղ այդ սիրոյ և որոնց Գարիբալդի առուանել էր, իրեւ նշան մեծարանքի, իր երկու սիրած կանանց անուններով, որոնք են իր մայրը Ռօզա և իր կեանքի առաջին ընկեր Անիտա, շուտով զրկվեցան կեանքից: այսօր խաղաղութեամբ ննջում են նրանք Կապուէռայի մէկ անկիւնում սպիտակ մարմարեայ շիրիմներում, որ նա զարդարեց ծաղիկներով ու արմաւենիներով: Իրան մնացին, որպէս սիրովանք, Ալէլիա և Մանլիօ:

Ապրում էր նաև գեռ բախմօնդի մարկիզուհին,

որ օրէնքի առաջ, մէկ օրւայ համար, Գարիբալդիի կինն էր եղել, և օրինագիրքը չէր թոյլ տալիս նրան ճանաչելու իր որդիներին՝ աւանդելու նրանց ժառանգաբար իր փառաւոր անունը: Այս մտածումը դառնապէս տանջում էր նրան, և երբ 1875-ին Հռոմ դաց, Վիկտօր Էմմանուէլի առաջ բացեց իր այդ վիշտը:

— Ասկանում եմ, զօրապետ, պատասխանեց թագաւորը ժպտալով, ձեր այդ տանջանքը: Ես էլ կուզէնայի կարող լինել օրինական դարձնել իմ զաւակներիս, բայց չեմ կարող:

Այսու ամենայնիւ օրինագէտները բաւական զօրաւոր փաստեր գտան լուծելու համար նրա ամուսնութիւնը բախմօնդիի հետ. և դատաւորները խորտակեցին չափազանց ծանր կշռող շղթան: 1880-ի յունվարի 26-ը տօնի օր եղաւ Կապուէռայի համար: Գարիբալդի ամուսնանում էր ֆուանչէսկայի հետ:

Կարունակ գրում էր նա, կամ թելագրում. նա շարադրեց այս ուսմանսները. Clelia, Cantona il volontario և Mille (Ալէլիա, Կանտոնի կամաւորը, Հազարը): Առաջինում Գարիբալդի սուինը ձեռքին յանձակվում է արդի հասարակական գրութեան և նրա քաղաքական արտայալտութիւնների դէմ:

Գարիբալդի բանաստեղծ էր: Երբ 1862-ին Միլանում էր գտնվում, այցելութեան գնաց Ալէքսանդր Մանձոնի-ին և նրան ընծայեց մի վարդ, որ քիչ առաջ նուէր էր ստայել մի տիկինից: Promessi sposi-ի (Խօսեց եալներ) նշանաւոր հեղինակն ամենայն համեստութեամբ բացականչեց.

— Եթէ Հաղարից ամեն-մէջի առաջ ինձ զգում եմ փոքրիկ ու շփոթված, երեակայեցէք ուրեմն, թէ

ինչ դրութեան մէջ եմ այս վայրկենին, երբ գտնը-
վում եմ նրանց պետի առաջ:

Բանաստեղծութիւնը ծածկում էր նրան իր խորհրդա-
ւոր քողով, և երբեմն խօսելու ժամանակ՝ նախադա-
սութիւնը ստանում էր ոտանաւորի ներդաշնակ շեշ-
տեր: Պատերազմի դաշտի վրայ առիւծը միւնոյն ժա-
մանակ համակված էր կանացի քաղցրութեամբ. նը-
ման էր մի երեխայի, որ լալա է բանտի և տանջան-
քի մատնված ծղզիդի բաղդի վրայ: Աւստրիացի Ռու-
բանի գէմ արած արշաւանքներից մէկի ժամանակ
ընդհատեց գնացքը, քաշելով ձիու երասանակը, որպէսզի
չը խանգարէ սոխակի երգը, որ այդ միջոցին ըս-
տուերում լցնում էր օդն իր դաշնակաւոր ու անոյշ-
դայլալիկներով: Կապուէուայում, մի փոթորկալից խոր
գիշերայ մէջ վեր է կենում որոնելու նախընթաց
օրը հնած և մոլորված մի գառնուկ, որին և գտնե-
լով ժայռերի մէջ դողդոջուն, բերում է իր անկո-
ղինը . . .

XLII

ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

— Ապամեցէք Փաշշիօն¹⁾ և կը յաղթէք:
Այսպէս էր յանձնարարում գարիբալդի իր

1) Փաշիօն անունը, որ Խուրձ է նշանակում (fascio), տըր-
փում է Խուլիայում, մանաւորակէս Սիկիլիայում, բոլոն բան-
տրական ու զիւղական տարրերից բաղկացած կազմակերպված
խումբներն, որոնց գոյութեան նպատակն է սեփականազուրկ զա-
սակարգի մտնեսական միմակի բարելաւումը: Յայտնի է, որ
այժմ՝ Փաշիօնները Սիկիլիայում աօցանական բնաւորութիւն
են կրում: 1893-1894 թվականի մեռն այդ նոյն Փաշիօններն
էն, որ մնված քաղցից եւ առասարակ յետին ծայր չը բա-
ւորութիւնից վաշահաս սպասումբութիւն առաջ բերին Սիկիլի-
այի այլ եւ այլ էլետում, ուզելով տապալել կողիում տիրող

զինակից ընկերներին, բարեկամներին, գործաւորներին
և այն ամենքին, որոնք անձկալից դիմում էին նրան
լսելու նրանից մէկ ուղեցոյց խօսք: Եւ ինքը համերաշ-
խութեան նպատակի համար զոհաբերութեան շատ գե-
ղցիկ օրինակ էր տվել, երբ, լինելով հանրապետական,
բարձրացրել էր միապետութեան դրօշակն Խոալիսն
մէկ անելու համար: Այս աշխատութիւնը գլուխ ըե-
րելուց յետոյ իր մտածման առարկայ արեց հայրենի-
քարեւական լայն հոգու մէջ: «Խոտալացիներն՝ ուրիշ
գարեւական լայն հոգու մէջ: Խոտալացիներն՝
հայրենիքների քաղաքացիներ, ասում էր, ուրիշ ազգերի
մարդիկը՝ Խոտալիայի քաղաքացիներ, — ահա այն նպատա-
կը, որին մենք պէտք է համենք: Պէտք չեն այլ ևս սահ-
մանագլուխներ, պէտք չեն այլ ևս պատնէներ» . . .

Խոհեմալը յստակօրէն գծված էր: Խողալ կը-
ուիւր, որի համար նա կամենում էր միացնել ամենքի
ոյժերը, պէտք է լինէր տնտեսական, քաղաքական ու բա-
րոյական: Այս բանի համար 1875-ին գնում է Հոօմ
և զարթեգնում է հոօմէական Ագոօ-ի և Տէվէոէ-ի
(Տէվէրիս) ողողումների հարցը:

Չորս տարի յետոյ, 1879-ի ապրիլին, վերադառ-
նում է Հոօմ և փորձում է հաստատել իր հառաջան-
քարի առարկայ եղած ազատական կուսակցութեան ֆա-
քին, կաղմելով Ումակ առաջ վարկան դաշ-
շիօն, կաղմելով Ումակ առաջ վարկան դաշ-
շիօն (Lega della Democrazia): Այս
դաշնակցութեան նպատակների ամփոփումն ինքն արեց
Տակիտոսի արժանի եղող իր համառօտութեամբ:

Կարգերը եւ հաստատել անտեսական հաւասարութիւն: Բայց չու-
նենալով հարկաւոր նդած ոյժը եւ պատրաստականութիւնը, շու-
տով զինաթափ եղան մայր ցամաքից այնտեղ ուղարկված մե-
ծաքանակ զնդերի տառած:

Ժ. Թ.

Դնդհանուրին վերաբերեալ իրի կառավարութեան մէջ ամենքը պէտք է ներկայացվեն, ապա ուրեմն ընդհանուր քուեարկութիւն (suffrage universel) և երգման ընջումը: — Հարկային դրութեան վերակազմութիւնը և առաջադիմական տուրքի հաստատումը: — Աղջը գինուրված: — Զը մշակված ու ճահճային իտալական հողի երկու-հինգերորդի հերկումն ու բարւորումը: — Բարեգործութեան յատկացված 1500 միլիօնի, ի նպաստ աղքատների օգտակար կերպով կերառվիլը, ուրը մեծագոյն մասով վայելում են վարիչ պաշտօնեաներ, վանականներ և վանականուհիներ: — Վերաբննութիւնը սահմանադրութեան, որ հանդիսանում է անբաւական և ստորին հայրենիքի նոր պահանջների առաջ, որպէս զի սա չը կառավարվէ երեսուն տարւայ մի գաւառական թղթով, այլ դրվէ և մնայ ազգային մի դաշինքի վրայ:

Արանով էլ դեռ վերջացած չէր համարում իր կեանքի գործը: 1880-ի հոկտեմբերի 1-ին յանկարծ գնում է Քէնօվա բողբելու համար կանցիօնի, իր փեսայի, քաղաքական բանտարկութեան վճռի դէմ: Այնտեղ լսում է, թէ Միլանում շուտով պէտք է տեղի ունենայ Մէնտանա-ի մարտիրոսների յիշատակին նուիրաված յիշատակարանի բացումը, և նոյեմբերի 1-ին գնում է Լօմբարդական մայրաքաղաքը: Եւ այնտեղ կրկին խօսում է ուամկավարութեան կատարելիք պարտականութիւնների մասին:

— Արէք այնպէս, որ յաղթանակէ ընդհանուր քը-էարկութիւնը. սա պարունակում է իր մէջ բոլոր բարենորոգումները (réformes). սրանից պէտք է բղխեն բոլոր բարենորոգումները:

Իր Միլանում գտնված միջոցին, ուր ժամագիր էր եղել իտալիայի և ֆրանսիայի ուամկավարութիւնը, վե-

ըրստին գումարվեց մի ուամկաժողով (commices) ընտը-բական քուեի համար:

Յետոյ տեսնելով դիպլոմատ-քաղաքականների խա-ղերն ու աշխատութիւնը, յանդիմանում էր նրանց ա-սելով.

— Ո՞ի մուանաք, որ քաղաքական աղատութիւնը պէտք է միջոց լինի լուծելու համար հասարակական (սօցիալական) հարցը: Ահա մէծ, օրւայ միակ ճշմարիտ խնդիրը: Պէտք է բժշկել ամեն եղանակներով, որ թե-րագրում են սէրն ու գիտութիւնը, թշուառութեան մէծ վէրքը ...

Գարիբալդի գնաց յետոյ Ալասսիօ, Լիգուռեան գե-տի վրայ, ամենախիստ ամիսներում, յետոյ նորից կա-պուէռա:

Իր առողջութիւնն արագ արագ վատանում էր: Այն ժամանակ որոշեց գալ Նապօլի: Քսան տարի առաջ իր ձեռքով ազատված ժողովրդի ոգեստութիւնն աննկա-րացրելի էր և կարող էր համեմատվել միայն այն խորին յուղման հետ, որի մէջ համակվեցան ամենքը, երբ տե-սան նրան պառկած անշարժ, ձեռքերն այլակերպված առ-սուիտից (յօդացաւ), գէմքը գունատված՝ ինչպէս մար-մարիօն: Սիկիլիա անցաւ, Սիկիլիան երեկոների (Vespre) Հարիւրամեակի առիթով և ամբողջ Ճանապարհորդու-թիւնը մի յաղթանակ եղաւ: Ժողովրդներն իրանք ի-րանց գցում էին մինչև իսկ երկաթեայ գծերի վրայ, պաղապակելով.

— Ուզում ենք տեսնել Գարիբալդիին. Թողի գը-նացքը նոյն իսկ մեր վրայով անցնէ, բայց դարձեալ մենք ուզում ենք տեսնել նրան:

Պալէռմօ-ում կրկին փորձեց աղատականներին մի-աց նելու գործը, և կապուէռա մեկնելուց առաջ, ապրիլի 16-ի գիշերը, ժողովրդին հրաւեր կարդաց հիմնելու Ա-

Համագորիչ ընկերութիւն մարդկային մտքի (Associatione emancipatrice della intelligenza umana):

— Թա՞ղ սրա պաշտօնը լինի, ասաց, կռւել տը-
դիտութեան դէմ, զարթեցնել ազատ մտածումը և
քաղաքի ու դիւղի ուսմիկների մէջ ստութեան տեղ ձըշ-
մարտի կրօնը հաստատել:

XLII

ՄԱԿԵ — 2-ՅՈՒՆԻՍ 1882.

Գարիբալդի մեռնում է: Իր կապոէռայի տան
ընտարձակ սենեակում, որը նա վերապահել էր
իրան համար, պառկում է անկողնու վրայ՝ պաշտպան-
ված սրահակով: Շուրջը տեսնվում են մի քանի պատ-
կերներ. սրանց մէջ պատոյ տեղը բռնած է մօրը կեն-
դանագիրը: Քիչ և հասարակ կահ կարասիներ. կար-
միր, դեղին և կանաչ գծաւոր կտաւով ծածկված մի
բազմոց, բազմաթիւ սիշատակներ, երկաթուղու մերենա-
ների, արօրների, նաւերի օրինակներ, մի քանի գրքեր,
գոռէ-ի պատկերազարդ դանտէ-ի ստուար հատորը և
չաղաքի անունները պարունակով ալբոմը:

Մայիսի վերջին վեճակը վատթարացել էր, սակայն չէր
երկում, որ աղէտը մօտալուտ լինէր. բայց չնչափողը
չարաչար տանջում էր նրան: Զարիքը գնալով ածում
էր. լուր տրվեցաւ այդ մասին Մէնօտտի-ին, Ուիշ-
չիոտտի-ին, Տէրէզիտա-ին, Կանցիօ-ին և Ալբանէզէ
բժշկին: Իր կինը, ֆրանչէսկա, մի վայրկեան չէր հե-
ռանում նրա մօտից:

— Պամութեան քոյրս է, ասում էր Գարիբալդի
խանդադատանքով: Յունիսի 2-ին մահն այսպէս ծա-
ռութիւնը դադարեց. հերոսն աւանդել էր ...

Նուցվեց: Երկու օրից ի վեր զօրապետը չէր կարող-
նում կուլ տալ և ոչ իսկ երկու կաթիլ ջուր:

Անենեակում տիրում էր խորին լուսութիւն: Զօրա-
պետի չնչառութիւնը գնալով աւելի և աւելի դժուա-
րին էր գառնում: Պատուհանը բաց էր և մահա-
մերձը լրյու կարօտ հայեացքը դուրս ուղղելով, տես-
նում էր երկինքը գունաւորված վերջալոյսով, որ լու-
սաւորում էր եղեինների կատարները և կապոէռայի
ամենաբարձր ժայռերը, իսկ աւելի հեռուն՝ ծովը, հա-
ւատարիմ ծովը, որ ալիքի մրմունչի հետ կարծես բե-
րում էր նրան իր նիցցայի ողջոյնը, Մադդալէնայի
ծայրը և խորբում կօսիկայի երկնագոյն լեռները: Եր-
կու Ճնճղուկներ Ճռուղելով ու թեկերը թափ տալով
եկան նստան պատուհանի վրայ Գարիբալդի շարժվեց:

— Մէր վախճանված փոքրիկների հոգիներն են, որ
ինձ կանչում են, ասաց ժպտալով: Երբ ես այլ ևս
չեմ լինիլ, մի մոռանաք նրանց, կերակրեցէք նրանց իմ
յիշատակի համար ...

Վիշ յետոյ ընկաւ թմրութեան մէջ: Կ առ իդ-
գի-ի վիրաբոյժը, որ կապոէռայում խարիսխ ձգած նա-
ւից էր իշել ցամաք, օգնեց մի քանի հանդարտեցու-
ցիչ դեղերով: Գարիբալդի զարթնեց.

— Ո՞ւր է Մանկօն, խնդրեց նա: Ուզում եմ տես-
նել նրան:

Օաւակին տարին մօտը: Յետոյ ժամը հարցրեց և
խոնարհեցրեց գլուխը կրծքի վրայ:

— Մէռուն, աղաղակեց կինը, արցունքները հո-
սեցնելով աչքերից:

Բայց գեռ ևս կեանքը չէր զառված մարմնից-
նուալել էր միայն: Երկու ժամ էլ երկարեց հոգե-
վարքը. ժամը 8-ից 50 անցած ծանրատաղտուկ չնչա-
ռութիւնը դադարեց. հերոսն աւանդել էր ...

Գրիշերային ստուերն իջել էր կղզիի վրայ և ծովային մառախուղը ծածկում էր իր թանձրութեան մէջ կապուէռան

Խտալիայի ամեն-մէկ անկիւնից արձակված վշտի աղաղակին արձագանք եղաւ բոլոր ազգերի կողմից արձակված համանման աղաղակը. լալիս էր ամեն-մի հայրենիք. կարծես իւրաքանչիւրը զրկվելով նրանից, կորցրած լինէր նրա անձնաւորութեան մէջ մի հարազատ որդի: Ուր են այն կատաղութիւններն ու թշնամութիւնները, որ աղատութեան հակառակորդ կուսակցութիւններ գրգռում են և աճեցնում այլ և այլ ազգերի մէջ: Վշտի ժամանակ ամենքը զգում են նոյնը՝ միացած իրար հետ միւնյն բարախումներով և ուղղված դէպի հակատագիրը: Յանձին խտալացիի ամենքը լալիս էին մարդկութեան հերոսին: Մեռաւ Գալիբալդի, որովհետ մահկանացու էր. բայց գործը, որ նա կատարեց ժողովրդների աղատութեան համար, յաղթանակները, որ նա տարաւ յանուն բարոյականի յաւիտենական ըսկղբունքների, մնում են անմահ:

Ես ներկայացնում է վերջին անձնական դիւցազներգութիւնը. ոչ ոք չէ կարող բռնել նրա տեղը. ժողովուրդը միայն, բազմութիւնը կարող է իր գերեզմանի վրայ ընկած դրօշակը վերցնել. նա, նման չօմերոսի հերոսներին, ցանկանում էր դիւցազնօրէն հեռանալ աշխարհից:

Այս տան արեմտակողմի անկիւնում (գրեց նա), երեք հարիւր քայլ հեռու այս տներից, ծովի դիմաց, կը պատրաստէք մի փայտակոյտ երկու մետր բարձրութեամբ, ակացիայի, հերձիի, մրտենու և ուրիշ անուշահոտ տունկերի փայտերից, որոնք անում են այս կապուէռայում: Այստեղ կը գնէք երկաթեայ մէկ ան-

կողին և սրա վրայ իմ մարմինը կարմիր շապիկով միասին... Այն մէկ ափ մոխիրը կը գնէք իմ մանկիկների: Ռոզայի և Անիտայի դիակների մօտ:

Այսպէս էր կամենում նա: Ժայռերի մէջուել, երկնքի ու ծովի հանգէպ վառված խարսչէր մոխիրապէտք է գալըներ պատկառելի գիտակը. և գուցէ փոթորկաշունչ քամին, վերցնելով իր հետ բոցերից խուսափող հիւլէնները, սիուէր ամբողջ երկրի վրայ, ցանելով ամեն տեղ կտրիչների աղատների ծնունդ տվող արդասաւոր սերմը:

ՄԻ ՆԱԽԿԻՆ ԿԱՄԱՒԼՈՐ.

ՎԵՐԶ.

ԳՎԻ
վային
մէջ կա
...
Խոռ
աղաղակ
արձակվ
հայրենի
ցըրած լ
գի: Ո՞ւ
ները,
ներ դբ
մէջ: Ա
րար հե
մաս ու
էին մար
ան մաս
ըովրդն
որ նա
կզբունք
“Ես
երգութ
ժողովու
նեղման
չօմերու
հեռան
” Ա
րեք հ
իր պա
թեամբ
աշոտ
լապուէ

ՀԵՂՈԿԵԼՆ ԿՈՒՍԵԿՑՈՒԹԵԸՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՐՈՇԽԵՐԻ ԴԻՐՔՈՎ.

ՍՈՅԻԱԼԻՍՈՍԱԿՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- 1) Ժրագիր Հնչալեան Կուսակցութեամ (Երկրորդ տրավագրութիւն, ևպառված) 2թ.
- 2) Նոր Հոսանք եւ Բաց Նամակ Հայաստանցքներին, (ևպառված) զին 1 Փրամկ.
- 3) Ցարեկարձ 1890 թ. Յուլիս Տամնեւմնագիր Յնդափոխական հերոսներ: Յ. Զանկիւեանի, Կ. Մ. Նալպանունի եւ Յ. Դումբուեանի պատկերներով (ևպառված) զին 30 սանտիմ.
- 4) Յուլիս Տամնեւմնագիր 1890 թ. արիւսանդ Յոյցը Կ. Պուտիմ եւ օրուան նկրութերը — Ժրամներէն: Յ. Զանկիւեանի, Յ. Հումբուեանի եւ Կ. Մ. Նալպանունի պատկերներով. (ևպառված) զին 30 սանտիմ.
- 5) Ովագիս մէկը. Ամենամնայ Տամաշարնային տօն բանտոքների, Ք. Պէտ և անօվի եւ մի զուլիս, Պ. Աքսեւրօղի բանտուրական շարժում՝ զրուածից թարգմանութիւն. զին 25 սանտիմ.
- 6) Հայերն Եմերիկայում, Ակն եանցի եւ մէջ է աշխատանքի վարձ, թարգմանութիւն Կաթլ Մարքսից, զին 15 սանտիմ.
- 7) Մանմասադրութեան Էլութեան մասին, Փէր գինանդ և ասաւի, Յաղնակ անօվի մասին անդադրութեան կողմից. զ. 40 սանտիմ.
- 8) Խրատներ ծուլմանու, Պօւ Հաֆար զի, Յեղիպակի պատկերով եւ մէկ առաջարանով Հնչակիս և մշագրութեան կողմից զին 25 սանտիմ.
- 9) Garden of Eden Defiled! (Եղեմի պարտէզը կործանված), անգլիակէն զին 5 սանտիմ.
- 10) Բնոնութեան դէմ, Քաղաքայի դատավարութիւն զ. 1 ֆր.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- 1) Եիրին Աւի եւ իր Սպանովը, Ախրաբ-Ռամիկի, զ. 10 սան.
- 2) Գարեթալիք. Թարգմանութիւն Հ. Խ.-ի. զ. 1 ֆր. 50 սան.

814

2013

